Ռուս-Հայկական Պետական Համալսարան

Ձեռնարկությունների մրցունակության և ֆինանսական ռեսուրսների կառավարման ուսումնասիրություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Փուլ 5)

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ

Խորհրդատու՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարան

Սույն ուսումնասիրությունն իրականացվում է համաձայն Ռուս-Հայկական (Սլավոնական) Պետական համալսարանի և ՀՀ Կենտրոնական Բանկի միջև կնքված Գիտահետազոտական աշխատանքների կատարման պայմանագրի (պայմանագիր N12/280264)

Երևան 2008թ.

Բովանդակություն

Նախաբան 2
Ուսումնասիրության ծածկույթը, գործիքը երեք հարցումների համար և վերլուծության մեթոդոլոգիան 5
Ուսումնասիրության գործիքը 5
Հարցման նախնական ընտրանքը և դրանում իրականացված փոփոխությունները. երեք փուլերի ընտրանքի համեմատությունը 6
Հարցումների իրականացման մեխանիզմը և տվյալների բազան 7
Մեթոդոլոգիան և տեսական հիմքերը 8
Ազգային մրցունակություն 10
Կայուն տնտեսական աճ 13
Մրցունակության անհրաժեշտ նախապայմաններ 14
Արտադրողականություն 14
Տնտեսական գործունեության արդյունավետություն 21
Ֆինանսական հատված և մակրո կարգավորում 22
Մրցակցային քաղաքականություն 23
Պետական կարգավորում և հարկային համակարգ 24
Ենթակառուցվածքներ, կրթություն և ուսուցում, ձեռնարկատիրություն և առևտրատրություն 27
Մրցունակության ամփոփ գնահատական 31
Եզրակացություն 34
Ճյուղային մրցունակություն 36
Հավաքագրված տեղեկատվության ծածկույթը և ուսումնասիրությունում ընդգրկված հաստատությունների ընդհանուր բնութագիրը 36
Ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վերլուծություն /արտադրողականություն, միավոր աշխատուժի ծախս, շահութաբերություն/ 40
Մրցակցությունը ներքին և արտաքին շուկաներում 47
Հումքի ներմուծումը և դրամի արժեվորման ազդեցությունը ուսումնասիրված ձեռնարկությունների վրա 52
Արտադրական հզորություններ 55
Կառավարման համակարգ 56
Ֆինանսական ռեսուրսների կառավարում 59
Եզրակացություն 65
Պորտերի Ադամանդ 68
Ճյուղային մրցունակության ամփոփ գնահատական 90
Եզրակացություն 101
Հավելված 1. Ճյուղային մրցունակության ամփոփ գնահատականի հաշվարկին մասնակցող գործոնները /հարցերը/ 105
Հավելված 2. Դիֆուզիոն ինդեքս 106
Հավելված 3. 2006 թվականի հուլիս-օգոստոս, 2007 թվականի փետրվար-մարտ և 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների իրականացրած հարցումների կազմի փոփոխությունները 123
Հավելված 4. Արտահանման գործընթացում ներգրավված ձեռնարկությունների արտահանման տեսակարար կշիռներն ըստ երկրների 125

Նախաբան

Սույն փաստաթղթում ներկայացվում է 2006թ. փետրվարի 28-ին ՀՀ Կենտրոնական բանկի և Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի միջև կնքված թիվ 12/280264 պայմանագրով («Ձեռնարկությունների մրցունակության և ֆինանսական ռեսուրսների կառավարման ուսումնասիրություն») նախատեսված աշխատանքների ավարտական հաշվետվությունը, որն ամփոփում է աշխատանքների կատարման պայմանագրի Հավելված 2-ով (Օրացուցային պլան) նախատեսված աշխատանքների արդյունքները:

Համաձայն Օրացուցային պլանի ավարտական փուլը տևում էր 3 ամիս, որի արդյունքում գիտահետազոտական խումբը պետք է ներկայացներ կատարված աշխատանքներն ամփոփող և վերլուծող վերջնական հաշվետվություն՝ բաղկացած հետևյալ հիմնական հատվածներից՝

- Ուսումնասիրության գործիքի, ընտրանքի և ծածկույթի, ինչպես նաև մեթոդոլոգիական ու տեսական հիմքերի ներկայացում:
- Երկրի մակարդակով մրցունակության գնահատում՝ հիմնված երկրորդային տվյալների ու ուսումնասիրությունների, և հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկատվության վրա:
- Ուսումնասիրված ճյուղերի մրցակցային միջավայրի ընդհանուր բնութագիր, հիմնական բնութագրիչների միջճյուղային համեմատություններ, ներառյալ ձեռնարկությունների մրցունակության վերաբերյալ քանակական ցուցանիշներ՝ աշխատանքի արտադրողականության, միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշի, միջին աշխատավարձի գնահատականներ:
- Դիտարկված յուրաքանչյուր ճյուղի մրցակցային պատկերի ներկայացում՝ ամփոփված Պորտերի աղամանդի տեսքով:
- Մշակված մեթոդոլոգիայի հիման վրա ճյուղի մրցունակության ամփոփ գնահատականի կառուցում և ուսումնասիրված ճյուղերի ռեյթինգավորում:
- Ֆինանսական ռեսուրսների կառավարման ոլորտի ուսումնասիրության արդյունքների ամփոփում:
- Ճյուղերի Դիֆուզիոն ինդեքսի կառուցում և ստացված արդյունքների մեկնաբանություն:

Բոլոր երեք հարցումների ընթացքում հավաքագրված տվյալների համեմատականները բերված են հետևյալ տրամաբանությամբ.

- քանակական տվյալները համեմատվում են ըստ տարիների, այն է՝ առաջին հարցումն անդրադարձել է գործունեության 2004 և 2005 թվականների արդյունքներին, երկրորդը՝ 2006 և 2005 թվականների արդյունքներին, իսկ վերջինը՝ 2007թ. 1-ին կիսամյակի արդյունքներին: Համեմատությունները կատարվում են հիմնականում 2005-2007թթ. կտրվածքով, ընդ որում՝ 2007 թվականի կիսամյակային տվյալները տարածված են ամբողջ տարվա վրա՝ տեքստում ներկայացված մոտեցման համաձայն:
- որակական գնահատականները համեմատվում են ըստ հարցումների անցկացման ժամանակահատվածների, այսինքն՝ 2007թ. հոկտեմբեր-դեկտեմբերի, 2007թ. փետրվար-մարտի արդյունքները՝ 2006թ. հուլիս-օգոստոսի նկատմամբ:

Այս մեթոդաբանությունը պահպանվում է ողջ հաշվետվության ընթացքում, եթե այլ բան նշված չէ: Այն դեպքերում, երբ փոփոխությունն ակնհայտորեն պայմանավորված է ընտրանքում կատարված փոփոխությունների հետ, տեքստում այդ մասին կատարվում է համապատասխան հղում:

Քանի որ այս փուլում ամփոփվում են մինչ այժմ կատարված բոլոր տեսակի վերլուծություններն ու դրանց արդյունքները, ուստի ֆինանսական կառավարման վերաբերյալ երեք հարցումների ընթացքում ստացված արդյունքները սույն հաշվետվությունում համադրվում

են Ձեռնարկությունների գործունեության արդյունավետության և բիզնես միջավայրի ուսումնասիրության (BEEPS) 2005 թվականի տվյալների հետ: Բացի այդ, այս փուլում կրկին առանձին ներկայացվում են ճյուղային Պորտերի աղամանդները՝ ամփոփ տեսքով և դրանց համապատասխան ճյուղային նկարագրերը:

Հաշվետվության առաջին բաժնում ներկայացված է երեք հարցումների ընթացքում կիրառված հիմնական գործիքը և դրա լրամշակումները, ընտրանքի ձևավորման մեխանիզմը և բոլոր երեք հարցումների ընտրանքների կազմը և կառուցվածքը, հաշվետվությունում կիրառված տեսական մոտեցումներն ու մեթոդաբանությունը:

Հաշվետվության երկրորդ մասն ամբողջությամբ նվիրված է ազգային մրցունակության վերլուծությանն ու գնահատմանը: Ներկայացված են մրցունակության գնահատման և մրցունակության ընդհանուր գնահատականի որոշման սկզբունքները: Համեմատությունն իրականացվել է ԱՊՀ և Եվրոպական միության նոր անդամ ու թեկնածու պետությունների ցուցանիշների նկատմամբ, որոնք խմբավորված են եղել երկու հիմնական բաժիններում՝ մրցունակության հիմնական պայմաններ և մրցունակության քաղաքականության ցուցանիշներ: Վերջում ամփոփվում է Հայաստանի Հանրապետության դիրքը նշված 25 երկրների ցանկում:

Երրորդ մասն ամփոփում է ուսումնասիրվող ձեռնարկությունների մրցունակության ընդհանուր նկարագիրը: Նախ ներկայացված է երեք հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկատվության ծածկույթը և ուսումնասիրությունում ընդգրկված հաստատությունների ընդհանուր բնութագիրը: Այնուհետև միջճյուղային համեմատականների տեսքով վերլուծվում են մրցունակության տարբեր ցուցանիշներ, ինչպիսիք են արտադրողականությունը, միավոր աշխատուժի ծախսը, ներմուծողների հետ մրցակցության և արտաքին շուկայում մրցակցության խոչընդոտները, մրցակցության ինտենսիվությունը ներքին շուկայում ու դրա դինամիկան և այլն: Վերլուծվում են հումքի ներմուծման պատճառները, դրամի արժեվորման ազդեցությունը ձեռնարկությունների մրցունակության վրա, ինչպես նաև ամփոփ տեսքով ներկայացվում է ուսումնասիրված ձեռնարկությունների կառավարման համակարգերի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը այլ պարամետրերի վրա: Հնարավորության դեպքում բերվում են համեմատականներ բոլոր երեք հարցումների կտրվածքով: Ընդ որում, հնարավորության դեպքում համեմատականներն անց են կացվում ոչ միայն ըստ ճյուղերի, այլև ըստ ձեռնարկությունների այնպիսի խմբավորումների, ինչպիսիք են՝ արտահանողներ, ներմուծողների հետ մրցակցողներ, հումք ներմուծողներ, օտարերկրյա մասնակցությամբ ձեռնարկություններ և ըստ չափերի: Հաշվետվության այս մասն ավարտվում է ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսների կառավարման մոտեցումների վերլուծությամբ: Մասնավորապես քննարկվել են ձեռնարկությունների կողմից օգտագործվող ֆինանսական ռեսուրսների աղբյուրները և դրանց օգտագործման նպատակները, օգտագործվող ֆինանսական գործիքները, դրանց ժամկետայնությունը, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսական գործիքների ժամկետայնություններն ըստ ճյուղերի, ձեռնարկությունների չափերի և դրանցում առկա օտարերկրյա մասնակցության: Դիտարկվել են նաև ձեռնարկությունների կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը խոչընդոտող հիմնական գործոններն ըստ ճյուղերի ու ձեռնարկությունների չափերի, ինչպես նաև ձեռնարկությունների կողմից ազատ ռեսուրսների տեղաբաշխման գործիքներն ու դրանց ժամկետայնությունը:

Հաշվետվության չորրորդ մասում ներկայացավաած են Պորտերի աղամանդները մի շարք խոշորացված ճյուղերի համար՝ համակցված ճյուղերի ամփոփ նկարագրերով:

Վերջին հատվածում, ամփոփելով նախորդ բաժնում կատարված գնահատականները և օգտվելով հարցաթերթում ներառված մի շարք հարցերից կառուցվել է ճյուղի մրցունակության ամփոփ գնահատական:

Հավելվածներում ներկայացված են Դիֆուզիոն ինդեքսները /համապատասխան մեթոդաբանությամբ/ և այլ լրացուցիչ տեղեկատվություն:

Ուսումնասիրության ծածկույթը, գործիքը երեք հարցումների համար և վերլուծության մեթոդոլոգիան

Ուսումնասիրության գործիքը

Ձեռնարկությունների մրցունակության և ֆինանսական ռեսուրսների կառավարման ուսումնասիրության /ՁՄՖՌԿՈՒ/ նպատակն է ՀՀ ձեռնարկությունների մրցունակության և ֆինանսական ռեսուրսների կառավարման ամբողջական պատկերի ձևավորումը՝ հիմնված ծրագրի շրջանակներում կատարվող քանակական ու որակական հարցումների և պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքների, ինչպես նաև տվյալ և հարակից բնագավառներում մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների վրա: **Ավարտական՝ հինգերորդ փուլի շրջանակներում իրականացվել է նախորդ երեք փուլերի ընթացքում հավաքագրված և ամփոփված տեղեկատվության վերլուծություն, համադրում երկրորդային աղբյուրներից հավաքագրված տեղեկատվության և տվյալների հետ:**

Այս նպատակով Ռուս-Հայկական պետական համալսարանի հետազոտողների թիմը, Կենտրոնական բանկի մասնագետների հետ համագործակցությամբ մշակել են երկու հարցաթերթ՝

- Հիմնական (առաջին) հարցաթերթ,
- Երկրորդ հարցաթերթ, որը պարունակում է 15 ստանդարտ պատասխաններ ունեցող հարցեր, որոնց միջոցով կառուցվել է Դիֆուզիոն ինդեքսը:

Հիմնական հարցաթերթը կազմված էր 6 բաժիններից, որոնք ներառել են 64 հարց՝ հետևյալ տեղեկատվության հավաքագրման համար.

- ընդհանուր տեղեկատվություն ձեռնարկությունների մասին,
- ընդհանուր տեղեկություններ ձեռնարկությունների մրցակցային դիրքի և միջավայրի մասին,
- տեղեկություններ ձեռնարկությունների արտադրական գործոնների, ֆինանսական ռեսուրսների և կառավարման վերաբերյալ,
- տեղեկություններ պահանջարկի գործոնների վերաբերյալ,
- տեղեկություններ հարակից և աջակից ոլորտների ու ենթակառուցվածքների վերաբերյալ,
- տեղեկություններ ձեռնարկության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ:

Յուրաքանչյուր հարցումից հետո, հաշվի առնելով տեղ գտած թերությունները և ԿԲ փորձագիտական խմբի դիտողություններն ու առաջարկությունները, հիմնական հարցաթերթը ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Դրանցից հիմնականներն են. եկրորդ և երրորդ հարցումներում բացի համախառն հասույթի տվյալներից, հավաքագրվել են նաև աշխատավարձի ֆոնդի, շահույթի, ամորտիզացիոն հատկացումների և սոցիալական ապահովության հատկացումների մեծությունները, արտահանման ծավալներն ըստ երկրների, ինչպես նաև Պորտերի հինգ ուժերը գնահատելու համար ավելացվել են համապատասխան հարցեր:

Հարցման նախնական ընտրանքը և դրանում իրականացված փոփոխությունները. երեք փուլերի ընտրանքի համեմատությունը

ՁՄՖՌԿՈՒ ընտրանքի ձևավորումն իրականացվել է մի քանի փուլերով.

1. Նախ առանձնացվել են այն ենթաճյուղերը, որոնք ընդգրկվել են ընտրանքում: Ենթաճյուղերի ընտրությունը կատարվել է ՀՀ ԱՎԾ-ի «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ գործունեության հնգանիշ դասակարգման» Վիճակագրական տեղեկագրի հիման վրա (2005թ. հունվար-դեկտեմբերի տվյալներով): Ընտրության համար հիմք են ծառայել երկու հիմնական ցուցանիշ՝ արտադրանքի ծավալը և ենթաճյուղի ձեռնարկությունների քանակը: Այսպես՝ ընտրանքում ընդգրկվելու համար ենթաճյուղը պետք է ունենար ևվազագույնը 1 մլրդ դրամի թողարկած արտադրանք և ընդգրկեր ևվազագույնը 5 ձեռնարկություն: Այս փուլի արդյունքում ընտրվել էին 21 ենթաճյուղ, որոնց կողմից թողարկված ընդհանուր արտադրանքի ծավալը 2005թ. տվյալներով կազմել է 487.9 մլրդ դրամ (արդյունաբերական ձեռնարկությունների կողմից 2005թ. թողարկած ամբողջ արտադրանքի 63.8%-ը), իսկ ընդհանուր ձեռնարկությունների քանակը՝ 1472 (ամբողջ արդյունաբերական ձեռնարկությունների 64.8%-ը):
2. Հաջորդ փուլում իրականացվել է ձեռնարկությունների նախնական ընտրություն՝ ըստ ընտրանքում ընդգրկված ենթաճյուղերի: Այստեղ օգտագործվել է երկու հիմնական աղբյուր.
   - Հայաստանի «Սփյուռ» գործարար տեղեկատուի ինտերնետային տարբերակը 2006թ. մարտի 1-ի դրությամբ[1]
   - Առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկը՝ 2006թ. առաջին եռամսյակի տվյալներով[2]:

Այս երկու աղբյուրից ընտրվել են բոլոր հնարավոր ձեռնարկությունները, որոնց թիվը կազմել է 272 ձեռնարկություն կամ ընտրված ենթաճյուղերի ընդհանուր ձեռնարկությունների 18.6%-ը:

Ընտրված 272 ձեռնարկություններին առաջարկվել է մասնակցել հարցմանը, որոնցից առաջին հարցմանը համաձայնություն էր տվել մասնակցել 131 ձեռնարկություն: Ընդ որում, ձեռնարկությունների վերջնական ցուցակը ներառում էր որոշ թվով ձեռնարկություններ, որոնք ընդգրկված չէին նախնական ցուցակում: Սա բացատրվում է նրանով, որ հարցումների անցկացման ընթացքում «հայտնաբերված» նոր ձեռնարկություններին ևս առաջարկվել է մասնակցել հարցմանը, և դրական պատասխանի դեպքում այդպիսի ձեռնարկություններն ընդգրկվել են ուսումնասիրության ընտրանքում:

Այսպիսով առաջին հարցմանը, որն իրականացվել է 2006 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին, մասնակցել է 131 ձեռնարկություն՝ 19 ենթաճյուղից, որի հաշվետվության քննարկման արդյունքում ՀՀ ԿԲ փորձագիտական խմբի առաջարկությամբ երկրորդ հարցման ընտրանքից հեռացվել են էլեկտրաէներգիայի, ցեմենտի, ինչպես նաև քարի սղոցման և մշակման ձեռնարկությունները՝ թվով 5, ինչպես նաև մսի և մսամթերքի ենթաճյուղում ընդգրկված 2 թռչնաֆաբրիկաները՝ քանի որ վերջիններիս ընդհանուր արտադրանքում չափազանց մեծ տեսակարար կշիռ ունի ձվի արտադրությունը: Հարցմանը մասնակցելուց հրաժարված մի շարք ձեռնարկությունների փոխարեն ընտրանքում ընդգրկվել են նորերը: Տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով երկրորդ հարցմանը, որն իրականացվել է 2007 թվականի փետրվար-մարտ ամիսներին, մասնակցել է 128 ձեռնարկություն 16 ենթաճյուղից: Երրորդ հարցման ընթացքում, որն իրականացվեց 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին, նույնպես հնարավոր չեղավ խուսափել որոշակի կորուստներից: Ընդ որում, դրանցից որոշներն ունեին օբյեկտիվ բնույթ, քանի որ մի քանի ձեռնարկություններ դադարեցրել էին իրենց գործունեությունը

[1] http://www.spyur.am/
[2] http://www.taxservice.am/

/ժամանակավոր կամ ընդհանրապես/: Ստորև բերված աղյուսակն ամփոփ ձևով ներկայացնում է բոլոր երեք հարցումների ընտրանքներում ընդգրկված ձեռնարկությունների կազմը և թիվը:

Սույն հաշվետվության հավելված 3-ում ավելի մանրամասն ներկայացված են հարցումից դուրս մնացած ձեռնարկությունները և դուրս մնալու պատճառները, ինչպես նաև առաջին անգամ հարցվող ձեռնարկությունների ցուցակը: Արդյունքում երրորդ հարցմանը, որն իրականացվել է 2007 թվականի հոկտեմբեր-դեկտեմբերին, մասնակցել է 117 ձեռնարկություն՝ 16 ենթաճյուղերից:

Աղյուսակ 1. 2007թ. հոկտեմբեր-դեկտեմբեր, 2007թ. փետրվար-մարտ և 2006թ. հուլիս-օգոստոս ամիսների հարցումների ընտրանքում ընդգրկված ձեռնարկությունների թվի համեմատություն

	Ճյուղը	Ուսումնասիրված ձեռնարկությունների թիվը, 2006թ.	Ուսումնասիրված ձեռնարկությունների թիվը, 2007թ. փետրվար-մարտ	Ուսումնասիրված ձեռնարկությունների թիվը, 2007թ. հոկտեմբեր-դեկտեմբեր	Երկրորդ հարցմանը մասնակցած ձեռնարկությունների մասնակցության աստիճանը երրորդ հարցմանը
1	Խմիչքի արտադրություն	9	12	12	100.0%
2	Մեխանիկական արքավորումների արտադրություն	21	16	15	93%
3	Տրիկոտաժի և մանագործական հյուսվածքների արտադրություն	13	15	13	87%
4	Պլաստմասե արտադրատեսակների արտ.	7	5	5	100%
5	Մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում	2	7	6	86%
6	Ծխախոտի արտադրություն	3	2	2	100%
7	Գունավոր մետաղների արտ.	3	3	3	100%
8	Կահույքի արտադրություն	8	7	4	57%
9	Հրուշակեղենի արտադրություն	4	6	6	100%
10	Կաթնամթերքի արտադրություն	9	11	11	100%
11	Հիմնական քիմիական նյութերի արտադրություն	2	3	3	100%
12	Մսի և մսամթերքի արտադրություն	4	5	4	80.0%
13	Հանքային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն	10	10	9	90.0%
14	Ոսկերչական արտադրություն	4	3	3	100.0%
15	Սուրճի արտադրություն	3	4	4	100%
16	Տպագրական գործ	24	19	17	90.0%
	Ընդամենը	**126**	**128**	**117**	

Հարցումների իրականացման մեխանիզմը և տվյալների բազան

ՋՄՖՌԿՈՒ շրջանակներում բոլոր երեք հարցումների ընթացքում հարցաթերթերը լրացվել են ձեռնարկություններում՝ հիմնականում բարձրաստիճան ղեկավարների կողմից, իրականացվել

է հավաքագրված տեղեկատվության տրամաբանական վերահսկողություն և համապատասխանելիության ստուգում: Յուրաքանչյուր հաջորդ հարցմանը ձեռնարկություններն ավելի չկամությամբ էին մասնակցում, ինչն իր արտացոլումը գտավ, մասնավորապես, երրորդ փուլում դաշտային աշխատանքների գրեթե մեկ ամսով երկարաձգման և 11 ձեռնարկությունների դուրս մնալու փաստում: Յուրաքանչյուր հարցման ժամանակ հիմնական հարցաթերթին զուգահեռ լրացվել է Դիֆուզիոն ինդեքսի հարցաթերթը, բացառությամբ երկրորդ փուլի, որի դեպքում երկրորդ հարցաթերթը լրացվել է երկու անգամ:

ՁՄՖՈՒԿՈՒ տվյալների բազան կառուցվել է SPSS ծրագրային միջավայրում, որի օգնությամբ իրականացվել է հետագա վիճակագրական վերլուծությունը: Ֆինանսական տվյալների վերլուծությունն իրականացվել է MS Excel միջավայրում, ընդ որում հետազոտական թիմի համապատասխան անդամները տրամաբանական և թվաբանական ստուգման են ենթարկել յուրաքանչյուր ձեռնարկության կողմից տրամադրված տվյալները:

Մեթոդոլոգիան և տեսական հիմքերը

Նախքան ուսումնասիրության արդյունքների բուն վերլուծությանն անցնելը անհրաժեշտ է ներկայացնել այն տեսական ձևաչափերը և մեթոդոլոգիական հիմքերը, որոնց շուրջ/հիման վրա/ պատրաստվել է սույն ավարտական հաշվետվությունը:

Մրցունակությունը բազմակողմանի հասկացություն է: Կան այս հասկացության տարբեր մեկնաբանություններ, որոնք ընդգծում են նրա գնահատման այս կամ այն կողմը: Սակայն ընդհանրացնելով բոլոր հիմնական մոտեցումները՝ կարող ենք այն բնութագրել երեք տարբեր մակարդակների համար՝ ամբողջ տնտեսության, ճյուղի և առանձին ձեռնարկությունների:

Տնտեսության մրցունակությունը կարելի է բնորոշել որպես արտադրողականության կայուն աճ, որը վերջին հաշվով հանգեցնում է տվյալ երկրի քաղաքացու կյանքի պայմանների /որակի/ բարելավմանը[3]: Երկրի կամ որևէ տարածաշրջանի մրցունակությունը բնութագրվում է այն արտադրողականությամբ, որով այն օգտագործում է իր մարդկային, ֆինանսական և բնական ռեսուրսները[4]:

Արտադրողականությունը ոչ թե պարզապես լավացնում է դրությունը/պայմանները/ այլ ավելի լավ դրություն/պայմաններ/ է ստեղծում: Արտադրողականությունը սահմանում է տվյալ երկրի կամ որևէ տարածաշրջանի կյանքի պայմանները/ստանդարտները (աշխատավարձ, կապիտալի հատույց, բնական ռեսուրսների հատույց):

Մրցունակությունը հաճախ վերլուծվում է ճյուղային կամ կլաստերային կտրվածքով:

Ճյուղի մրցունակությունը կարելի գնահատել այլ տարածաշրջանի կամ այլ երկրի համանման ճյուղի հետ համեմատության մեջ, որի հետ գոյություն ունի առևտուր[5]:


Ձեռնարկության մրցունակությունը կարող է բնորոշվել որպես այդ ընկերության կարողությունը՝ ստեղծելու, արտադրելու և վաճառելու այնպիսի արտադրանք, որը մրցակիցների կողմից արտադրվող արտադրանքի համեմատ կլինի գերակա՝ գնային և ոչ գնային տեսանկյուններից[6]:

Բնական է, որ մրցունակության ազգային և ձեռնարկության մակարդակները խիստ պայմանավորված են մեկը մյուսով: Այսպես, արտադրողականության աճը գեներացվում է

[3] Armenia competitiveness assessment, Nathan Associates, USAID, 2004
[4] Armenian Competitiveness: Towards a strategy for Economic development, Michel Porter, Armenia 2020 summit, Cambridge, USA, 2005
[5] Analyzing international competitiveness at firm level: Concepts and measures, Donnatela Depperu, Daniele Ceratto, Università Cattolica del Sacro Cuore
[6] Ambastha, Ajitabh, Momaya, K., Article on Competitiveness, Singapore Management review, January 2004

մասնավոր հատվածի կողմից իրական ձեռնարկությունների միջոցով, որոնք մրցակցում են տնտեսության իրական հատվածում: Նմանապես, մրցունակությունը ազգային մակարդակում իրենից ներկայացնում է որոշակի ռազմավարության կիրառում, որն ապահովում է բիզնեսի արտադրողականության կայուն աճ, որն էլ իր հերթին հանգեցնում է շահույթի մեծացմանը և աշխատավարձի բարձրացմանը:

Մայքլ Պորտերի կողմից մշակված մրցունակության պարադիգման նկարագրում է քաղաքական, իրավական և մակրոտնտեսական միջավայրի կարևորությունը, ինչպես նաև բիզնես միջավայրը և ընկերության գործունեության և ռազմավարության ճարտարամտությունը:



Սույն գիտահետազոտական աշխատանքների շրջանակում հնարավոր է եղել իրականացնել մրցունակության գնահատում և վերլուծություն ազգային և ճյուղային մակարդակներում: Երկրի մրցունակության վերլուծությունը հիմնականում իրականացվել է երկրորդային աղբյուրների հիման վրա ստորև ներկայացված մոտեցմանը համապատասխան: Ճյուղային և միջճյուղային վերլուծությունները հիմնականում հիմնված են հարցումների երեք փուլերի և նախորդ հաշվետվությունների արդյունքների վրա:

Գնահատման համապատասխան մեթոդոլոգիաները ներկայացված են համապատասխան բաժիններում:

Ազգային մրցունակություն

Երկրի մակարդակով մրցունակության վերլուծության և գնահատման համար հիմք է ընդունվել Իռլանդիայի մրցունակության ազգային խորհրդի[7] և Հայաստանի մրցունակության բենչմարքինգի համար օգտագործված մոտեցումների յուրահատուկ համադրումը, որը, մեր կարծիքով, թույլ է տալիս ստանալ ազգային մրցունակության համապարփակ պատկեր:

Մասնավորապես, Հայաստանի մրցունակությունը համեմատվում է ԵՄ նոր անդամ պետությունների (10), ԵՄ թեկնածու ու պոտենցիալ թեկնածու (6) և ԱՊՀ պետությունների (9) /տե՛ս Աղյուսակ 2/ մրցունակության ընտրված գործոնների հետ: Համաձայն ընտրված մոդելի և ելնելով մրցունակության սահմանումից՝ Հայաստանի մրցունակությունը բնութագրող գործոնները համեմատվում են նշված երկրների համապատասխան ցուցանիշների հետ:

Սույն հաշվետվությունում մասնավորապես փորձ է արվելու կատարել համեմատություն /benchmarking/ ըստ Աղյուսակ 3-ում բերված ցուցանիշների:

Աղյուսակ 2. Համեմեատության նպատակով ընտրված երկների ցանկը

ԵՄ նոր անդամ պետություններ	ԵՄ թեկնածու և պոտենցիալ թեկնածու պետություններ	ԱՊՀ պետություններ
Բուլղարիա	Ալբանիա	**Ադրբեջան**
Չեխիայի Հանրապետություն	Բոսնիա և Հերցեգովինա	**Բելառուս**
Էստոնիա	Խորվաթիա	**Վրաստան**
Հունգարիա	Մակեդոնիա	**Ղազախստան**
Լատվիա	Սերբիա	**Ղրղզստան**
Լիտվա	Թուրքիա	**Մոլդովա**
Լեհաստան		**Ռուսաստան**
Ռումինիա		**Ուկրաինա**
Սլովակիա		**Ուզբեկստան**
Սլովենիա		

[7] Annual Competitiveness Report for Ireland, 2005, National Competitiveness Council

Աղյուսակ 3. Ազգային մրցունակությունը բնութագրող ցուցանիշների ցանկը


Գործոն	Բուրգի մակարդակը	Ցուցանիշի բնույթը
Կայուն տնտեսական աճ	Ընդհանուր զարգացում	Տնտեսական աճ, մարդկային զարգացման ինդեքս
Արտադրողականություն	Անհրաժեշտ նախապայմաններ	Արտադրողականություն, արտադրողականության աճի տեմպ
Տնտեսական գործունեության արդյունավետություն (Economic performance)	Անհրաժեշտ նախապայմաններ	Արտահանում, ներդրումներ, կապիտալի կուտակում, ավելացված արժեք տնտեսության ճյուղերում
Ֆինանսական հատված	Անհրաժեշտ նախապայմաններ	Բանկային համակարգ, կապիտալի շուկա, ապահովագրական ընկերություններ, ֆինանսական խորություն
Մակրո միջավայր	Անհրաժեշտ նախապայմաններ	Գնաճ, առևտուր
Հարկային համակարգ և պետական կարգավորում	Մրցունակության քաղաքականություն	Հարկային համակարգ և վարչարարություն, տնտեսության կարգավորում, կոռուպցիա, բիզնես միջավայրի այլ ցուցանիշներ
Ենթակառուցվածքներ	Մրցունակության քաղաքականություն	Կապ, էլետկրաէներգիա, հեռահաղորդակցություն, ճանապարհներ
Կրթություն և ուսուցում	Մրցունակության քաղաքականություն	Կրթության ծախսեր
Ձեռնարկատիրություն և ինովացիա	Մրցունակության քաղաքականություն	R&D ծախսեր, այլ մատչելի ցուցանիշներ

Այսպիսով, ընդհանուր առմամբ, համեմատությունն իրականացվել է ըստ թվարկած 30 և ավելի ցուցանիշի, և ելնելով ըստ յուրաքանչյուրի ցուցանիշի Հայաստանի զբաղեցրած դիրքից, դուրս է բերվել Հայաստանի միջին դիրքը դիտարկվող երկրների շարքում:

Ըստ այս մոտեցման ազգային մրցունակությունը բնութագրող ցուցանիշները կազմում են մի բուրգ, որի կարևորագույն արդյունքը՝ գագաթը, կայուն տնտեսական աճն է: Մրցունակությունը ապահովող հիմնական նախապայմանները ներկայացված են բրգի միջին հատվածում, իսկ ստորին հատվածն իրենից ներկայացնում է մրցունակության քաղաքականության փոփոխականները:

Միջերկրային համեմատականներում ընդգրկված ցուցանիշները հիմնականում վերաբերում են 2006 թվականին, իսկ բացակայություն դեպքում՝ վերջին հասանելի տվյալին:

Գծանկար 1. Ազգային մրցունակության բուրգ




Հնարավորության դեպքում վերլուծությունում ներառվում են նաև հարցումների ընթացքում հավաքագրված տվյալները:

Կայուն տնտեսական աճ

Ազգային մրցունակության վերջնական նպատակը, ինչպես երևում է վերևում բերված բրգի գագաթից, կայուն տնտեսական զարգացումն է և մարդկանց կյանքի որակի ու ընդհանուր բարեկեցության աճը: Այս առումով հարկ է նշել, որ վերջին տարիներին տնտեսական աճի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է առաջատար դիրք ոչ միայն ԱՊՀ երկրների շարքում, այլև ամբողջ աշխարհում: 2007 թվականին տնտեսական աճը կազմել է 13.7%: Վերջին տասը տարիների ընթացքում միջին տնտեսական աճը կազմել է 9.5%, և այդ ցուցանիշը գերազանցում է համեմատության մեջ ընդգրկված այլ երկրների /դրանց խմբերի/ միջին ցուցանիշները /տե՛ս Գծանկար 2/:

Գծանկար 2. Տնտեսական աճը 2006 թվականին, վերջին 5 տարիների և վերջին 10 տարիների կտրվածքով, ըստ դիտարկված երկրների խմբերի /երկրների տնտեսական աճի պարզ միջինը/




Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007

Միևնույն ժամանակ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ չափով Հայաստանը դեռևս բավականին ետ է ԵՄ նոր անդամ պետություններից /տե՛ս Գծանկար 3/: Սա իր հերթին պայմանավորում է բնակչության բարեկեցության համեմատաբար ցածր աստիճանը: Այսպես՝ եթե տնտեսական աճի վերջին տասը տարիների միջին ցուցանիշը զգալիորեն գերազանցում է մերձբալթյան պետությունների համանման ցուցանիշը, ապա մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով Հայաստանը 2006 թվականին գրեթե 2.7 անգամ զիջում էր մերձբալթյան ամենաթերզարգացած պետությունը՝ Լատվիային: Զարգացման մեկ այլ՝ ավելի ընդգրկուն ցուցանիշով՝ Մարդկային զարգացման ինդեքսով[8] Հայաստանը 38 կետով ետ է մնում նույն Լատվիայից, և 177 երկրների շարքում զբաղեցնում է 83-րդ տեղն այնպիսի պետությունների կողքին, ինչպիսիք են Չինաստանը, Թուրքիան և Հորդանանը[9]:

[8] Մարդկային զարգացման ինդեքսը հաշվարկվում է որպես երեք ցուցանիշների՝ 1. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, 2. կյանքի միջին տևողության և 3. կրթվածության մակարդակի միջին ցուցանիշ

[9] Աղբյուրը՝ Մարդկային զարգացման ինդեքս, 2007-2008

Գծանկար 3. Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը 2006 թվականին ըստ գնողունակության պարիտետի /ԱՄՆ դոլար, ընթացիկ/




Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007

Մրցունակության անհրաժեշտ նախապայմաններ

Արտադրողականություն

Ըստ էության, արտադրողականությունը չափում է ապրանքների և ծառայությունների արտադրության արդյունավետությունը և երկարաժամկետ կտրվածքով պայմանավորում է ազգային մրցունակությունն ու կյանքի որակը: Որպես ընդհանուր տնտեսության արտադրողականության ցուցանիշ՝ սույն վերլուծությունում կիրառվել է ՀՆԱ հարաբերությունը /ըստ գնողունակության պարիտետի/ զբաղվածների թվին: Վերջին տարիներին Հայաստանի տնտեսության արտադրողականությունը աճում է կայուն տեմպերով: Ստորև բերված գծանկարը պատկերում է արտադրողականության, զբաղվածության, աշխատուժի մասնակցության և ժողովրդագրական գործոնի ազդեցությունը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճի տեմպերի վրա: Գծանկարից պարզ երևում է, որ վերջին 5 տարիների ընթացքում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճն ակնհայտորեն պայմանավորված է արտադրողականության մակարդակի աճով /տե՛ս Գծանկար 4/:

Գծանկար 4. Տարբեր գործոնների մասնակցությունը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճի տեմպի վրա 2002-2006թթ.



ՀՆԱ մեկ շնչին
=
Արտադրողականություն x Զբաղվածություն x Աշխատուժի մասնակցություն x Ժողովրդագրություն

ՀՆԱ/N = ՀՆԱ/E x E/LF x LF/N15-64 x N15-64/N


ՀՆԱ – Համախառն ներքին արդյունք
N – Բնակչության ընդհանուր թիվը
E – Ընդհանուր զբաղվածություն
LF – Աշխատուժի թիվը
N15-64 – Աշխատունակ տարիքի բնակչություն

Գործոնների մասնակցությունը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի տեմպերի գործում որոշելու նպատակով օգտագործվել է հետևյալ բանաձևը՝


ՀՆԱ/N աճ = ՀՆԱ/E աճ + E/LF աճ + LF/N15-64 աճ + N15-64/N աճ + մնացորդային գումարիլներ: Վերջինի ազդեցությունը գնահատվել է որպես աննշան:

1998-2006թթ. դիտարկված 19 ԱՊՀ և ԵՄ նոր անդամ ու թեկնածու երկրների շարքում Հայաստանի տնտեսության արտադրողականության աճի տեմպերը փոքր-ինչ զիջել են միայն Ադրբեջանի համապատասխան ցուցանիշին /տե՛ս Գծանկար 5բ/: Միևնույն ժամանակ, բացարձակ առումով այդ ցուցանիշը դեռևս բավական հեռու է ԵՄ նոր անդամ պետությունների ցուցանիշներից / տե՛ս Գծանկար 5ա/:

Գծանկար 5ա. Արտադրողականությունը 2006թ., հազար ԱՄՆ դոլար (ՀՆԱ* (գնողունակության պարիտետով)/Զբաղվածություն)**



Գծանկար 5բ. Արտադրողականության աճի միջին տեմպերը 1998-2006թթ.



***Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007**
**** Աղբյուրը՝ International Labor Organization, LABORSTA database**

Արտադրողականության բացարձակ ցուցանիշի առումով համանման պատկեր է ստացվում նաև արդյունաբերության մի շարք ճյուղերի միջերկրային համեմատությունների արդյունքում: Մասնավորապես, սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցումների արդյունքների վերլուծության շնորհիվ հնարավոր եղավ համեմատել արտադրողականությունն ըստ ստորև նշված առավելագույն ներկայացուցչականություն ապահոված ճյուղերի՝ Հայաստանի և 2004 թվականից հետո Եվրամիությանն անդամակցած պետությունների ցուցանիշների հետ[10]: Համեմատական վերլուծության շրջանակներում ընդգրկվել են հետևյալ ճյուղերը՝[11]

- Մեխանիկական սարքավորանքի
- Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների
- Հիմնական քիմ. նյութերի և պլաստմասե իրերի արտադրության
- Սննդամթերքի և խմիչքի արտադրության
- Ծխախոտի արտադրության:

[10] ԵՄ նոր անդամ պետությունների վերաբերյալ տեղեկությունները վերցված են ԵՄ վիճակագրական ծառայության (EUROSTAT) պաշտոնական վեբ-կայքում ներկայացված European business - Facts and figures, 2006թ. տարեգրքից: Արտադրողականության վերաբերյալ տվյալները ներկայացնում են ԵՄ անդամ պետությունների 2003թ. իրավիճակը:
[11] Սույն ճյուղերը ընտրվել են, ելնելով ուսումնասիրության ներկայացուցչականությունից և ԵՄ համապատասխան տվյալների առկայությունից:

Համեմատություններն իրականացվել են ավելացված արժեքի հիման վրա հաշվարկված արտադրողականության բացարձակ մեծությունների ցուցանիշների միջև /հազ. եվրո/, ինչպես նաև միավոր աշխատուժի ծախսումների ցուցանիշների միջև[12]: Միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշը հաշվարկվել է մեկ աշխատողին բաժին ընկնող աշխատավարձի ֆոնդը և սոցիալական ապահովության ուղղված միջոցների գումարը հարաբերելով մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությանը՝ հաշվարկված ավելացված արժեքի հիման վրա[13]:

Ըստ ավելացված արժեքի արտադրողականության Հայաստանը բոլոր նշված ճյուղերում զիջում է ԵՄ 2004 թվականին անդամակցած պետություններին: Ինչ վերաբերում է Ռումինիային ու Բուլղարիային, ապա այստեղ տարբերություններն այդքան էլ մեծ չեն, իսկ սննդամթերքի ճյուղում արտադրողականությունները հավասար են: Միայն ծխախոտի արտադրության ճյուղում Հայաստանի ցուցանիշները գերազանցում են Բուլղարիայի և Ռումինիայի արտադրողականության ցուցանիշներին:

Միավոր աշխատուժի ծախսը բոլոր դիտարկված ճյուղերում Հայաստանում ավելի փոքր է, ինչը ցույց է տալիս աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հարաբերականորեն ավելի քիչ լինելու փաստը / տե՛ս Գ-ծանկարներ 6ա-ե/: Միայն քիմ. և պլաստամասե արտադրանքի թողարկման ճյուղում Հայաստանի այդ ցուցանիշը գերազանցում է բոլոր մնացած երկրներին: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ արտադրողականությունն այս ճյուղում չափազանց ցածր է և ստեղծվող ավելացված արժեքը մեծամասամբ ուղղվում է աշխատանքի վարձատրությանը: Մնացած ճյուղերից՝ մեխ. սարքավորանքի, սննդամթերքի և տրիկոտաժի արտադրության ճյուղերում չնայած միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշը որոշակիորեն զիջում է միջին եվրոպականին, ինչը որոշակի առումով մրցակցային առավելություն է տալիս, սակայն արտադրողականության ցուցանիշների միջև եղած բացասական տարբերությունը նշանակալից է և կարող է չեզոքացնել միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշի՝ հօգուտ Հայաստանի եղած առավելությունը: Ընդհանուր առմամբ, միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշի գծով առավելություն ունենալը վկայում այն մասին, որ Հայաստանի արտադրանքը արտերկրում մրցունակ է հիմնականում էժան աշխատուժի հետևանքով, ինչը չի կարող լինել երկարաժամկետ մրցակցային առավելություն՝ մանավանդ հաշվի առնելով գոյություն ունեցող ինֆլյացիոն ճնշումները և դրամի արժեվորման հետևանքները: Այս առումով, կարևորվում են լրացուցիչ կապիտալ ներդրումները, մասնավորապես տեխնոլոգիաների նորացումը, ինչը թույլ կտա բարձրացնել արտադրողականությունը և քայլեր կատարել էժան աշխատուժի վրա հիմնված մրցակցային առավելությունից դեպի բարձր արտադրողականության վրա հիմնված տնտեսություն:

Ընդհանրապես արտադրողականության մակարդակների տարբերությունները զգալի են: Այսպես՝ տրիկոտաժի արտադրության ճյուղում միջին եվրոպական արտադրողականությունը գերազանցում է Հայաստանի ցուցանիշին ավելի քան 3 անգամ, սննդի և խմիչքի արտադրության ճյուղում գրեթե 3 անգամ, մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղում՝ 6 անգամ: Միայն սննդի և ծխախոտի արտադրության ճյուղերում Հայաստանն առավելություն ունի կամ հավասար է Բուլղարիային:


Ընդհանուր առմամբ, եթե հաշվի առնենք նշված ճյուղերի 2005-2007թթ. ընթացքում հարցումների արդյունքում հաշվարկված արտադրողականության մակարդակի աճի միջին տեմպերը, ապա Հայաստանին, նույն տեմպերի պահպանման դեպքում, նշված ԵՄ անդամ պետությունների 2003 թվականի միջին մակարդակին հասնելու համար անհրաժեշտ կլինի համապատասխանաբար՝

[12] Որպես ՀՀ ճյուղի ցուցանիշ վերցվել է 2005-2007թթ. միջին կամ այդ տարիների առավելագույն ցուցանիշը՝ ընտրելով այդ երկուսից մեծը:

[13] Սույն ցուցանիշը մանրամասն դիտարկվում է նաև հաշվետվության երկրորդ հատվածում՝ ուսումնասիրության արդյունքների միջճյուղային վերլուծություն իրականացնելիս:

- **Մեխանիկական սարքավորանքի արտադրություն**
  - արտադրողականության աճի միջին տարեկան տեմպը՝ 26%
  - ԵՄ միջին ցուցանիշին հասնելու համար պահանջվող ժամանակը՝ 7.5 տարի
- **Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն**
  - արտադրողականության աճի միջին տարեկան տեմպը՝ 30%
  - ԵՄ միջին ցուցանիշին հասնելու համար պահանջվող ժամանակը՝ 4.5 տարի
- **Սննդամթերքի և խմիչքի արտադրություն**
  - արտադրողականության աճի միջին տարեկան տեմպը՝ 17%
  - ԵՄ միջին ցուցանիշին հասնելու համար պահանջվող ժամանակը 7 տարի՝[14]


Գծանկար 6ա. Մեխանիկական սարքավումների արտադրության ճյուղում արտադրողականության մակարդակը Հայաստանում և ԵՄ նոր անդամ-պետություններում



*Աղբյուրը՝ ԵՄ պետությունների համար՝ EUROSTAT, Հայաստանի համար՝ ՁՄՖՈՒԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ


[14] Հաշվարկը իրականացվել է այն ճյուղերի համար, որոնցում 2005-2007թթ. ընթացքում գրանցվել է արտադրողականության մակարդակի աճ

Գծանկար 6բ. Քիմիական և պլաստամասայե իրերի արտադրության ճյուղում արտադրողականության մակարդակը Հայաստանում և ԵՄ նոր անդամ-պետություններում




*Աղբյուրը՝ ԵՄ պետությունների համար EUROSTAT, Հայաստանի համար՝ ՀՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Գծանկար 6գ. Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության ճյուղում արտադրողականության մակարդակը Հայաստանում և ԵՄ նոր անդամ-պետություններում




*Աղբյուրը՝ ԵՄ պետությունների համար EUROSTAT, Հայաստանի համար՝ ՀՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Գծանկար 6դ. Սննդամթերքի և խմիչքի արտադրության ճյուղում արտադրողականության մակարդակը Հայաստանում և ԵՄ նոր անդամ-պետություններում



***Աղբյուրը՝ ԵՄ պետությունների համար EUROSTAT, Հայաստանի համար՝ ՀՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ**

Գծանկար 6ե. Ծխախոտի արտադրության ճյուղում արտադրողականության մակարդակը Հայաստանում և ԵՄ նոր անդամ-պետություններում



***Աղբյուրը՝ ԵՄ պետությունների համար EUROSTAT, Հայաստանի համար՝ ՀՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ**


Կարևոր է ընդգծել, որ ամորտիզացիոն հատկացումների մեծությունները շատ անգամ բացակայել են ավելացված արժեքի մեծության հաշվարկից, /իսկ տրիկոտաժի և մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղերում դրանք գրեթե ամբողջությամբ բացակայում են/, ուստի ճշգրիտ տվյալներ ունենալու դեպքում հնարավոր է ԵՄ և ՀՀ ճյուղերի արտադրողականության մակարդակների միջև տարբերության մի փոքր կրճատում:

Տնտեսական գործունեության արդյունավետություն

Տնտեսական /կամ գործարար/ գործունեության արդյունավետության գնահատման նպատակով առանձնացվել են հետևյալ չորս ցուցանիշները.

- ապրանքների և ծառայությունների արտահանումը /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/
- օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/
- կապիտալի համախառն կուտակում /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/
- ավելացված արժեքը գյուղատնտեսական արտադրությունում /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/:

Գծանկար 7. Տնտեսական գործունեության ցուցանիշները դիտարկված երկրների խմբերի և Հայաստանի համար (% ՀՆԱ-ի նկատմամբ)




Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007

Հայաստանը ակնհայտ խնդիր ունի նշված ցուցանիշներից մեկի՝ արտահանման ծավալների հետ: Դրանք զգալիորեն զիջում են այլ խմբերում ընդգրկված պետությունների միջին ցուցանիշին: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանն այդ ցուցանիշով դիտարկված 26 երկրների շարքում զբաղեցնում է 25-րդ տեղը: Ընդ որում, ներկայումս գոյություն ունեցող միտումը, ցավոք, չի խրախուսում արտահանման հետագա աճը /տե՛ս Գծանկար 8/: Ընթացիկ տրասֆերտների կայուն աճը թույլ էր տալիս մինչև 2007թ. կայուն պահել ընթացիկ հաշվի դեֆիցիտը, սակայն 2007թ. ապրանքների գծով բացասական սալդոն գրեթե 4 անգամ մեծացրել է ընթացիկ հաշվի դեֆիցիտը՝ այն հասցնելով 571 մլն. ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 6 տոկոսին:


Մնացած երեք ցուցանիշներից որոշ առումներով նաև բացասական է գյուղատնտեսության տեսակարար կշռի ավելացումը ՀՆԱ մեջ: Ընդհանուր առմամբ, երկրի մոդեռնիզացմանը զուգահեռ պետք է նվազի գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում և ավելանա ծառայությունների ծավալը: Եվ գյուղատնտեսության տեսակարար կշիռը Հայաստանում նվազման միտում ունի՝ 2001 թվականի 28 տոկոսից 2006թ հասնելով 20 տոկոսի, սակայն Հայաստանը դեռևս ետ է մնում դիտարկվող երկրներից: Ինչ վերաբերում է օտարերկրյա

ներդրումների ներհոսքին և կապիտալի կուտակմանը, ապա այս ցուցանիշների կտրվածքով Հայաստանը խնդիրներ չունի և զբաղեցնում է առաջատար դիրքեր:

Գծանկար 8ա. Արտաքին առևտրի դինամիկան 2003-2007թթ. Հայաստանում



Գծանկար 8բ. Արտաքին բալանսը, ընթացիկ տրանսֆերտները և ընթացիկ հաշիվը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007թթ. /մլն ԱՄՆ դոլար/




Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն


<u>Ֆինանսական հատված և մակրո կարգավորում</u>

Ֆինանսական հատվածի փոքրությունը շարունակում է մնալ ՀՀ տնտեսության զարգացմանը խոչընդոտող կարևորագույն գործոն: Ֆինանսական շուկան ակնհայտորեն միակողմանի է զարգանում: Բանկային հատվածն աչքի է ընկնում կարգավորման բարձր որակով, ինչը նվազեցնում է ռիսկերը և նպաստում կայուն զարգացմանը: Միևնույն ժամանակ կապիտալի շուկան մնում է թերզարգացած, իսկ ֆինանսական հատվածի մյուս երկու կարևորագույն ինստիտուտներից՝ ապահովագրական ընկերություններից և կենսաթոշակային հիմնադրամներից, գործում է միայն առաջինը, ընդ որում ակնհայտ փոքր ծավալներով: Այս ամենը բերել է մի իրավիճակի, երբ տնտեսությունում բացակայում են «երկար փողերը», իսկ բանկերը արտադրությունը վարկավորում են մեծամասամբ կարճաժամկետ կամ միջնաժամկետ միջոցներով:

Գծանկար 9ա. Ֆինանսական գործիքներից օգտվող ձեռնարկությունների տեսակարար կշիռը /2007թ. II հարցում/



Գծանկար 9բ. Ֆինանսական գործիքների օգտագործումն ըստ ժամկետների /2007թ. II հարցում/



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Եվ չնայած 2007թ. գրանցվել է վարկավորման ծավալների աննախադեպ աճ /գրեթե 80 տոկոս նախորդ տարվա նկատմամբ/, այդ ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ կազում է ընդամենը 13 տոկոս՝ զիջելով գրեթե բոլոր դիտարկված երկրներին:

Ֆինանսական հատվածի բենչմարքինգի համար մենք ընտրել ենք հետևյալ 4 ցուցանիշները: Հարկ է նշել, որ ապահովագրական հատուցումների ցուցանիշները առկա էին ոչ բոլոր երկրների համար, սակայն ամեն դեպքում ընդհանուր պատկերի ստացման համար դրանք ներառվել են գնահատման մեջ /տե՛ս Աղյուսակ 4/:

Աղյուսակ 4. Ֆինանսական հատվածի հիմնական բնութագրիչ ցուցանիշներ 2006 թվականին, % ՀՆԱ-ի նկատմամբ

	Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկեր	Իրացվելի պարտավորություններ (M3)[15]	Գնաճշված ընկերությունների շուկայական կապիտալիզացիա	Ապահովագրական վճարների մեծությունը
ԱՊՀ	22.1	31.9	27.8	1.15
Նոր ԵՄ անդամ պետություններ	55.9	53.8	31.0	2.98
ԵՄ թեկնածու երկրներ	52.9	54.3	35.0	-
Հայաստան	8.0	18.3	0.9	0.17

Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007, ապահովագրական վճարների մեծությունները վերցվել են երկրների վիճ. ծառայությունների կայքերից կամ այլ պաշտոնական աղբյուրներից

Ինչ վերաբերում է մակրոմիջավայրին, ապա Հայաստանին հաջողվել է հասնել կայունության /ՀՆԱ ցուցանիշները բերված են վերևում/: Գնաճի ցուցանիշը Հայաստանում ավելի փոքր է, քան նշված երկրներում:

Մրցակցային քաղաքականություն

Պետությունը բացի ընդհանուր խաղի կանոններ և պայմաններ ստեղծելուց ակտիվորեն ներգործում է երկրի մրցակցային կարողությունների վրա՝ իրականացնելով համապատասխան ուղղվածություն ունեցող տնտեսական քաղաքականություն: Սույն ուսումնասիրության շրջանակներում ներառված են մրցակցային քաղաքականության 4 խումբ ցուցանիշներ, որոնք, մեր կարծիքով, անմիջականորեն ազդում են երկրի մրցունակության վրա: Այդ խմբերում ներառված ցուցանիշները չափում են բիզնես միջավայրի, անհրաժեշտ ենթակառուցվածքների և գիտելիքի ու նորարարության խթանմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը՝ համեմատած ընտրված պետությունների հետ:


[15] «Իրացվելի պարտավորություններ (M3) % ՀՆԱ-ի նկատմամբ» ցուցանիշը ցույց է տալիս ֆինանսական համակարգի խորության աստիճանը: Իրացվելի պարտավորություններն իրենցից ներկայացնում են արտարժույթի և ավանդների ծավալները կենտրոնական բանկում (M0), գումարած ազատ տեղափոխվող ավանդներ և էլեկտրոնային արտարժույթ (M1), գումարած ժամկետային և ցպահանջ ավանդներ, արտարժույթով ազատ տեղափոխվող ավանդներ, ավանդների հավաստագրեր և արժեթղթերի ետգնման համաձայնագրեր (M2), գումարած ճանապարհորդային չեկեր, արտարժույթով ժամկետային ավանդներ:

Պետական կարգավորում և հարկային համակարգ


Այս հատվածում համեմատվել են տնտեսության կարգավորմանը, բյուրոկրատիային, բիզնես միջավայրին և մի շարք այլ գործոններին վերաբերող ցուցանիշներ:

Հարկ է նշել, որ ՀՀ հարկային համակարգը շարունակում է մնալ զգալի խոչընդոտ բիզնես միջավայրի բարելավման համար: Ըստ Համաշխարհային բանկի Բիզնեսի վարման (Doing Business) զեկույցի Հայաստանը 170 երկրների շարքում զբաղեցնում է 148-րդ: Համեմատվող երկրների ցանկում Հայաստանից այս ցուցանիշով ավելի հետ են միայն ԱՊՀ մի քանի երկրներ: Սույն ցուցանիշը գնահատում է հարկերի վճարման ընթացակարգերի քանակությունը և ծախսված ժամանակը, ինչպես նաև դրանց հետ կապված դրամական ծախսումները: Ունենալով վարչարարության առումով բավականին խիստ հարկային համակարգ՝ Հայաստանն առանձնանում է նաև ՀՆԱ-ում հարկային եկամուտների բավական փոքր ցուցանիշով: Հարկային համակարգի մեկ այլ խնդիր էլ առկա է նաև ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության առումով: ԵՄ նոր անդամ պետությունների համեմատ Հայաստանում զգալիորեն մեծ է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը, ինչն վկայում է այն մասին, որ մեզ մոտ առավելապես հարկվում է վերջնական սպառողը, քան տնտեսական գործունեության արդյունքը /տե՛ս Գծանկար 10ա-10գ/:

Գծանկար 10ա. Հարկերի վճարման վրա ծախսվող ժամանակը 2006 թվականին (ժամ/տարի)*




Գծանկար 10բ. Ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում**



Աղբյուրը՝ *Doing Business Database 2007, World Bank
**** Ազգային վիճակագրական ծառայություն**


Գծանկար 10գ. Անուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում ԵՄ նոր անդամ պետություններում (2003) և Հայաստանում (2007)



Աղբյուրը՝ Structures of taxation systems in European Union, Data 1995-2003, European Commision, Luxemburg, Office of official publications, 2005

Հարկային համակարգը որպես բնականոն գործունեությանը խոչընդոտող համակարգ է նշել նաև ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում հարցումներին մասնակցած ձեռնարկությունների կողմից:

Գծանկար 11. Ուսումնասիրված ձեռնարկությունների բնականոն գործունեությանը խոչընդոտող պետական մարմինները /տվյալ մարմինը նշած ձեռնարկությունների տոկոսը/




Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ընդհանուր պետական կարգավորման համեմատական դիրքը պարզելու համար համեմատություն է կատարվել նաև ըստ «Կառավարման ցուցանիշներից» երկուսի՝ կարգավորման որակ և կոռուպցիայի վերահսկողություն[16]: Ինչպես երևում է ստորև բերված

[16] Նշված կառավարման ցուցանիշները (պետական կարգովորման որակ և կոռուպցիայի վերահսկողություն) տատանվում են -2.5-ից 2.5 միջակայքում /որքան ցուցանիշը բարձր՝ այդքան ավելի բարձր է կառավարման տվյալ գործոնի որակը/: Ցուցանիշները հաշվարկվել են բազմաթիվ հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և գիտահետազոտական կենտրոնների կողմից անցկացված հարցումների և

գծանկարից, Հայաստանը միջանկյալ տեղ է զբաղեցնում կարգավորման որակի տեսանկյունից և գտնվում է հետևապահների խմբում՝ կոռուպցայի ցուցանիշի գծով /տե՛ս Գծանկար 12/:

Գծանկար 12. Պետական կարգավորման որակը և կոռուպցիայի նկատմամբ վերահսկողությունը դիտարկվող երկրներում 2006 թվականին



Աղբյուրը՝ The WorldWide Governance indicators 1996-2006, WB 2007

Մրցունակության քաղաքականության այս ցուցանիշների շարքում դիտարկվել է նաև արտաքին առևտրի իրականացման հեշտությունը և աշխատանքային օրենսդրության խստության աստիճանը: Վերջին ցուցանիշի կտրվածքով Հայաստանը կարողացել է մշակել այնպիսի օրենք, որը հնարավորինս գրավիչ լինի ներդրողների համար և առավելապես սատարում է գործատուների շահերին: Ինչ վերաբերում է արտաքին առևտրին, Հայաստանը «Բիզնեսի վարման» տվյալների բազայում դիտարկված 170 երկրների շարքում զբաղեցնում 119-րդ տեղը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է մեր կողմից առանձնացված երեք խմբերի միջին դիրքը և Հայաստանի ցուցանիշը:

վերլուծությունների գնահատականների հիման վրա: Պետական կարգավորման որակը չափում է կառավարության կարողությունը ձևավորել և իրականացնել արդյունավետ քաղաքականություն, որն ուղղված է մասնավոր հատվածի զարգացմանը: Կոռուպցիայի վերահսկման ցուցանիշը չափում է, թե որքանով է պետական իշխանությունը կիրառվում անձնական շահերի նպատակով, ներառյալ կոռուպցիայի մանր և խոշոր դրսևորումները, ինչպես նաև էլիտայի կողմից իշխանության «գրավման» աստիճանը:

Աղյուսակ 5. Մրցունակության քաղաքականության որոշակի ցուցանիշներ

	Արտաքին առևտրի իրականացման հեշտության միջին դիրք[17]	Զբաղվածության կոշտության միջին ինդեքս[18]
ԱՊՀ	137	33.8
Նոր ԵՄ անդամ պետութ.	62	45.4
ԵՄ թեկնածու երկրներ	84	41.5
Հայաստան	119	31.0

Աղբյուրը՝ Doing Business Database 2007, World Bank

Ենթակառուցվածքներ, կրթություն և ուսուցում, ձեռնարկատիրություն և նորարարություն

Համաձայն BEEPS 2005թ. տվյալների ՀՀ ձեռնարկությունները չեն դիտարկում ենթակառուցվածքները, մասնավորապես՝ էներգետիկ, հեռահաղորդակցման և տրանսպորտային համակարգերը, որպես լուրջ խոչընդոտ իրենց ձեռնարկատիրական գործունեության համար:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ենթակառուցվաքների որակը և դրանց զարգացումը բնութագրող մի քանի ցուցանիշներ: Այսպես, մեկ շնչին բաժին ընկնող էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշը Հայաստանում ավելի փոքր է, քան համեմատվող երկրներում: Ընդհանրապես, զարգացող երկրներում ժամանակի ընթացքում էլեկտրաէներգիայի սպառման ծավալներն ավելանում են, քանի որ բարեկեցության աճի հետ զուգահեռ մարդիկ ավելի շատ են օգտվում կենցաղային տարբեր տիպի սարքերից[19]: Հայաստանում այդ ցուցանիշը 1997-2005թթ. ընթացքում գրեթե չի փոփոխվել: Հայաստանը զիջում է դիտարկվող երկրների ևաև համակարգիչների տարածվածությամբ և ինտերնետից օգտվողների թվով: Ընդ որում, հետաքրքիր է, որ Հայաստանում 100 մարդու հաշվով ավելի շատ համակարգիչ ունեցող կա, քան ինտերնետից օգտվող, մինչդեռ դիտարկվող երկրներում դիտարկվում է հակառակ պատկերը: Սա թերևս նշանակում է, որ համակարգիչների զգալի մասը Հայաստանում գտնվում է ցանցից դուրս՝ կամ կապի թանկության, կամ էլ կապի որակի վատ լինելու պատճառով: Բջջային կապի առումով հարկ է հաշվի առնել, որ 2006-2007թթ. ընթացքում այդ ծառայության մատչելիության աստիճանը մեծացել է, ուստի ծածկույթը նույնպես զգալիորեն աճել է: Նշված պատճառով հեռահաղորդակցությանը վերաբերվող ցուցանիշները հաշվի չեն առնվել հետագայում Հայաստանի մրցունակության միջին դիրքի /մրցունակության հաշվարկային ինդեքսի/ հաշվարկման ժամանակ:

Որպես ենթակառուցվածքների զարգացվածության աստիճանի ինտեգրալ գնահատական այստեղ ընտրվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ենթակառուցվածքների

[17] Սույն դիրքը հաշվարկվում է ստանդարտված բեռի ներմուծման/արտահանման վրա ծախսվող ժամանակի, ընթացակարգերի թվի և արժեքի հիման վրա /ավելի մանրամասն մեթոդոլոգիային ծանոթանալու համար տես www.doingbusiness.org/MethodologySurveys

[18] Զբաղվածության քաղաքականության կոշտության ինդեքսը հաշվարկվում է որպես 3 ենթաինդեքսների՝ աշխատանքից ազատման դժվարության, աշխատանքային ժամերի կոշտության և աշխատանքի ընդունման դժվարության, ամբողջություն: Որքան ավելի բարձր է տվյալ ցուցանիշը /0-ից 100 միջակայքում/ այնքան ավելի է կոշտ է կարգավորման դաշտը /անբարենպաստ գործատուների համար/: Ավելի մանրամասն մեթոդոլոգիային ծանոթանալու համար տես www.doingbusiness.org/MethodologySurveys www.doingbusiness.org/MethodologySurveys

[19] Trends in sustainable development, UN, 2006

բարեփոխման ինդեքսը[20]: Նշանակալի տարբերություններ նկատելի են միայն ԵՄ անդամ պետությունների և մնացած երկրների միջև /տես Աղյուսակ 6/:


Աղյուսակ 6. Ենթակառուցվածքները բնութագրող ցուցանիշներ

	Էլեկտրաէներգիայի սպառումը /Կվտ/ժ մեկ շնչի հաշվով/	100 մարդու հաշվով համակարգիչների թիվը	Բջջային կապի ծածկույթում ընդգրկված բնակչության տոկոսը	100 մարդու հաշվով ինտերնետ օգտագործողների թիվը	Ենթակառուցվածքների բարեփոխման ինդեքս /ՎՋԵԲ/*
	2005	2005	2006	2006	2006
ԱՊՀ	2678.8	4.7	94.5	15.9	2.2
Նոր ԵՄ անդամ պետություններ	4263.4	25.3	99.2	39.4	3.1
ԵՄ թեկնածու երկրներ	2615	11.0	97.1	20.9	1.9
Հայաստան	1428.2	9.8	85.2	5.7	2.0

Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007
*** Transition report 2007, European Bank for Reconstruction and Development**

Ընդհանուր առմամբ, անցկացված հարցումների արդյունքները նույնպես վկայում են այն մասին, որ ենթակառուցվածքային կազմակերպությունները /դրանց կողմից մատուցվող ծառայությունների գնի և որակի համակցությունը/ լուրջ խնդիրներ չի առաջացնում ձեռնարկությունների համար:

Գծանկար 13. Ենթակառուցվածքային կազմակերպությունների գործունեությունը որպես հիմնական կամ զգալի խոչընդոտ գնահատած ձեռնարկությունների տեսակարար կշիռները /2007թ. II հարցում/:



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

[20] Այս ինդեքսը հաշվարկվում է որպես ենթակառուցվածքների 5 ոլորտների՝ էլեկտրաէներգետիկա, երկաթուղի, ճանապարհներ, հեռահաղորդակցություն և ջուր ու ջրահեռացում, միջին ինդեքս: Գնահատման համար օգտագործվում է 1-ից մինչև 4+ (4.33) գնահատականները, որտեղ 1-ը ցույց է տալիս տվյալ ենթակառուցվածքի անհապատասխանությունը շուկայական տնտեսությանը, իսկ 4+՝ բացարձակ համապատասխանությունը:


Կրթության վրա կատարվող ծախսերի առումով Հայաստանը շարունակում է ետ մնալ համեմատվող երկրներից, ընդ որում՝ տարբերությունը ԵՄ նոր-անդամ պետությունների համեմատ զգալի է: Ընդ որում, Հայաստանը ետ է մնում ինչպես պետական ծախսերի, այնպես էլ ընդհանուր ծախսերի ցուցանիշների կտրվածքով /տե՛ս Աղյուսակ 7 և Գծանկար 14/:

Աղյուսակ 7. Կրթությունը բնութագրող ցուցանիշներ

	Պետական բյուջեի կրթական ծախսերը, % ՀՆԱ-ի նկատմամբ	Մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական միջին ծախսերը, % 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ	Միջնակարգ կրթությունում համախառն ընդգրկվածությունը, %[21]
ԱՊՀ	4.0	16.1	88.4
Նոր ԵՄ անդամ պետութ.	4.9	23.2	98.6
ԵՄ թեկնածու երկրներ	3.8	13.9	80.3
Հայաստան	3.2	13.8	90.0

Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007

Գծանկար 14. Կրթության վրա կատարվող ընդհանուր ծախսերը մի շարք երկրներում, 2003թ., % ՀՆԱ նկատմամբ[22]



Աղբյուրը՝ The Statistical Yearbook of the Economic Commission for Europe 2005


Եվ վերջապես, ինչ վերաբերում է նորարարության և ձեռնարկատիրության խթանմանը, այս հատվածում դիտարկվել է երկու ցուցանիշ: Ըստ հետազոտական և մշակման ծախսերի (R&D)

[21] Համախառն ընդգրկվածության ցուցանիշը հաշվարկվում է որպես ընդհանուր ընդգրկվածության՝ անկախ տարիքից, հարաբերությունը այն տարիքային խմբի բնակչության թվի վրա, որը օրենքով կարող է ուսուցանել միջնակարգ դպրոցում:

[22] Այս ցուցանիշը իր մեջ ընդգրկում է ինչպես պետական ծախսերը, այնպես էլ բոլոր տեսակի մասնավոր աղբյուրներից, այդ թվում տնային տնտեսությունների կողմից, կատարվող ծախսերը:

Հայաստանը զիջում է բոլոր երեք խումբ երկրների միջին ցուցանիշին /տե՛ս Գծանկար 15/: Ինչ վերաբերում է երկրորդ ցուցանիշին, ապա 1000 բնակչին Հայաստանում բաժին է ընկնում 33 ՓՄՁ: ԵՄ նոր անդամ պետություններում այդ ցուցանիշը կազմում է 58, իսկ ԱՊՀ երկրներում՝ ընդամենը 14:

Գծանկար 15. Հետազոտության և զարգացմանն ուղղված ծախսերի միջերկրային ցուցանիշները



Աղբյուրը՝ World Development Indicators online database, WB, 2007

Նշված վերլուծությունն ամփոփված է Աղյուսակ 8-ում, որտեղ ներկայացված է Հայաստանի համեմատական դիրքը՝ դիտարկված 26 երկրների շարքում:

Աղյուսակից պարզ է, որ ՀՀ մրցունակությանը խոչընդոտող խնդիրները գտնվում են տարբեր մակարդակներում: Այսպես, մրցունակության անհրաժեշտ նախապայմանների տեսանկյունից ամենից խնդրահարույցը ֆինանսական հատվածի փոքրության խնդիրն է, իսկ մրցակցային քաղաքականությունում լրջագույն խնդիրներ կան հարկային վարչարարությունում: Հայաստանում շարունակում է լուրջ խնդիր մնալ կոռուպցիայի տարածվածությունը և արտաքին առևտրի անբարենպաստ դինամիկան:

Մրցունակության ամփոփ գնահատական

Աղյուսակ 8. ՀՀ Մրցունակության ցուցանիշների ամփոփ աղյուսակ

Ցուցանիշ	Տարի	Աղբյուր	Ցուցանիշի մեծությունը	Երկրի դիրքը	Դիտարկվող երկրների քիվը
Տնտեսական աճ					
ՀՆԱ աճը 2006 թվականին	2006	WDI, 2007	13.4%	2	26
ՀՆԱ աճը նախորդ 5 տարվա ընթացքում	-	WDI, 2007	13.0%	2	26
ՀՆԱ աճը նախորդ 10 տարվա ընթացքում	-	WDI, 2007	9.5 %	3	26
Մարդկային զարգացման ինդեքսը	2005	HDI, 2007	0.78	19	25
Մրցունակության անհրաժեշտ նախապայմաններ					
Արտադրողականություն					
Արտադրողականություն (ՀՆԱ / զբաղվածների թվին)	2006	WDI 2007 ILO 2007	1400 ԱՄՆ դոլար		
Արտադրողականության միջին աճի տեմպը 1999-2006թթ.	-	WDI 2007 ILO 2007	20%		
Տնտեսական գործունեության արդյունավետություն (Economic and business performance)					
Ապրանքների և ծառայությունների արտահանում /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2006	WDI, 2007	23.4%	25	26
Ավելացված արժեքը գյուղատնտեսությունում /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2006	WDI, 2007	19.4%	3	26
ՕՈՒՆ-ների ներհոսքը /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2000-2006	WDI, 2007	4.9%	13	26
Կապիտալի համախառն կուտակում /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2000-2006	WDI, 2007	24.7%	13	26
Ֆինանսական հատված					
Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկեր /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2006	WDI, 2007	8.0%	23	24
Ֆինանսական խորություն /M3 տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2006	WDI, 2007	18%	24	24
Շուկայական կապիտալիզացիա /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2006	WDI, 2007	0.9%	21	23

Ապահովագրավճարների մեծությունը /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2005		0.17%	13	13
Մակրոմիջավայր					
Ինֆլյացիա /սպառողական գների ինդեքս/	2006	WDI, 2007	2.89%	6	23
Առևտուր /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2006	WDI, 2007	59.7%	25	26
Մրցունակության քաղաքականություն					
Պետական կարգավորում և հարկային համակարգ					
Կոռուպցիայի վերահսկում	2006	WB, Governance indicators	-0.58	17	26
Հարկերի վճարման հեշտությունը /դիրքը աշխարհում/	2006	Doing Business 2007	148	22	26
Հարկային եկամուտները, /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2005	WDI, 2007	14.3	20	24
Տնտեսության կարգավորման որակը	2006	WB, Governance indicators	0.26	12	26
Ձբաղվածության կոշտության ինդեքս	2006	Doing Business 2007	31	6	26
Արտաքին առևտրի իրականացման հեշտությունը /դիրքը աշխարհում/	2006	Doing Business 2007	119	20	26
Ենթակառուցվածքներ					
Էլեկտրաէներգիայի սպառում /կվտ/ժամ մեկ շնչի հաշվով/	2004	WDI, 2007	1,428	23	26
Ասֆալտապատ ճանապարհների բաժինը	2004	WDI, 2007	100%	1	26
Ներդրումներ հեռահաղորդակցության համակարգերում /տոկոս եկամտի նկատմամբ/	2004	WDI, 2007	34.2%	5	26
Համակարգիչների թիվը 100 մարդու հաշվով	2005	WDI, 2007	9.8	13	24
Ինտերնետ օգտագործողների թիվը 100 մարդու հաշվով	2006	WDI, 2007	5.7	24	25
EBRD ենթակառուցվածքների	2006	EBRD, Transition	2.00	18	26

ինդեքս		report 2006			
		Կրթություն և ուսուցում			
Պետական ծախսերը կրթության վրա /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2005	WDI, 2007	3.2%	19	23
Մեկ աշակերտի վրա կատարվող ծախսերը /տոկոս մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ/	2004-2005	WDI, 2007	-	-	-
Համախառն ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցում	2005	WDI, 2007	90%	12	22
		Ձեռնարկատիրություն և ինովացիա			
R&D ծախսերը /տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ/	2004	WDI, 2007	0.3%	21	23
Փոքր և միջին ձեռնարկությունների թիվը /1000 բնակչի հաշվով/	2004-2005	WDI, 2007	33.1	7	25


Դիտարկված ցուցանիշների հիման վրա հաշվարկվել է Հայաստանի միջինացված դիրքը 26 երկրների շարքում, այսպես կոչված մրցունակության հաշվարկային ցուցանիշը: Հայաստանը զբաղեցնում է 18-րդ տեղը և գտնվում է այնպիսի երկրների հարևանությամբ, ինչպիսիք են Թուրքիան, Ռուսաստանը, Ուկրաինան և Մոլդովան:

Երկրի դիրքը հաշվարկվել է հետևյալ մեթոդաբանությամբ: Առաջին քայլով ըստ յուրաքանչյուր ցուցանիշի որոշվել է երկրի տոկոսային դիրքը[23]: Երկրորդ քայլով ելնելով տոկոսային դիրքից սահմանվել է երկրի զբաղեցրած դիքրը ըստ յուրաքանչյուր ցուցանիշի: Միջինացված դիրքը ըստ բոլոր ցուցանիշների որոշվել է դիրքերի պարզ միջինը հաշվարկելու միջոցով:

Հաշվարկային ցուցանիշի տրամաբանական ստուգման նպատակով այն համեմատվել է համապատասխան երկրների գլոբալ մրցունակության ինդեքսի ցուցանիշների հետ: Ինչպես երևում է Գծանկար 16-ից, արդյունքները բավական մոտ են, ինչը վկայում է ընտրված ցուցանիշների ռելևանտության մասին:

[23] Տոկոսային դիրքը որոշվում է, նվազման կարգով դասավորված շարքում, դիտարկվող ցուցանիշից ներքև գտնվող ցուցանիշների թվի գումարը հարաբերելով այդ ցուցանիշից ներքև և վերև գտնվող ցուցանիշների թվի գումարի վրա:

Գծանկար 16. Մրցունակության հաշվարկային ցուցանիշի և գլոբալ մրցունակության ինդեքսի[24] միջև փոխկապվածությունը



Եզրակացություն

Ազգային մրցունակության առումով Հայաստանը ԱՊՀ պետությունների շարքում զբաղեցնում է միջանկյալ դիրք Գծանկար 14-ից երևում է, որ ԵՄ անդամ պետությունները /մասնավորապես 2004թ. անդամակցած/ կազմում են առանձին խումբ և բավականին առաջ են մնացած երկրներից: Անշուշտ մի շարք պարամետրերով, ինչպիսիք են տնտեսական աճը, ներդրումները, ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավումը, Հայաստանն ակնհայտորեն հասել է հաջողությունների: Ընդհանուր տնտեսության արտադրողականությունը վերջին 5 տարիներին աճում է կայուն և բարձր տեմպերով: Սակայն արդյունաբերության մի քանի ճյուղերի արտադրողականության մակարդակները ԵՄ նոր անդամ պետությունների հետ համեմատելիս պարզ է դառնում, որ տարբերությունները զգալի են: Այսպես գոյություն ունեցող աճի տեմպերի պահպանման դեպքում 2003 թվականի ԵՄ նոր անդամ պետությունների միջին ցուցանիշին հասնելու համար մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղից կպահանջվի 7.5 տարի, տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության ճյուղին՝ 4.5 տարի, իսկ սննդամթերքի արտադրության ճյուղին՝ 7 տարի ժամանակ: Միայն սննդի և ծխախոտի ճյուղերում Հայաստանը չի զիջում կամ նույնիսկ առաջ է Բուլղարիայից: Միևնույն ժամանակ միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշը Հայաստանում ավելի ցածր է, ինչը վկայում է աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսերի հարաբերականորեն փոքր լինելու մասին և ինչ-որ առումով կարող է համարվել մրցակցային առավելություն: Այս առումով կարելի է փաստել, որ Հայաստանի

[24] Գլոբալ մրցունակության ինդեքսը հաշվարկվում է համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից լույս տեսնող «Գլոբալ մրցունակության հաշվետվության» շրջանակներում՝ որպես պետությունների մցունակության ամփոփ գնահատական: Ինդեքսի հաշվարկի մեջ հաշվի են առնվում ինստիտուտների, ենթակառուցվածքների, մակրոմիջավայրի, առողջապահության և նախնական կրթության, բարձրագույն կրթության, շուկայի արդյունավետության, տեխնոլոգիական պատրաստվածության, բիզնեսի զարգացվածության և նորամուծություններին վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ: Ավելի մանրամասն մեթոդոլոգիային կարելի է ծանոթանալ այցելելով համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայք՝ www.weforum.org :

արտադրանքը արտերկրում մրցունակ է հիմնականում էժան աշխատուժի հետևանքով, ինչը չի կարող լինել երկարաժամկետ մրցակցային առավելություն՝ մանավանդ հաշվի առնելով գոյություն ունեցող ինֆլյացիոն ճնշումները և դրամի արժեվորման հետևանքները:Նշված պայմաններում, առանց նոր ներդրումների, մասնավորապես արտադրական տեխնոլոգիաներում, արտադրողականության հետագա աճը դառնում է գրեթե անհնար, ուստի ձեռնարկությունները պետք է կառուցեն ներդրումների իրականացմանն ուղղված ռազմավարություն՝ արտաքին շուկաներում մրցունակ մնալու նպատակով:

Լուրջ խնդիրներ կան նաև մրցունակության այլ գործոնների կտրվածքով: Դրանց շարքում կարևոր է ընդգծել արտահանման աճի կրճատումը, կոռուպցիայի տարածվածությունը և ֆինանսական համակարգի փոքրությունն ու սահմանափակ մասնակցությունը իրական հատվածում, հարկային համակարգի անկատարությունը: Հարցումների արդյունքները ֆինանսական ռեսուրսների մատչելիության, պետական մարմինների և ենթակառուցվածքների խոչընդոտ լինելու վերաբերյալ ըստ էության համընկնում են Համաշխարհային բանկի համանման հարցումների և հաշվարկների տվյալների հետ: Այսպես՝ սույն ուսումնասիրության շրջանակներում անցկացված հարցումների արդյունքներով հարկային ծառայությունը ամենաշատ խոչընդոտ առաջացնող մարմինն է, և Բիզնեսի վարման հեշտությունը բնութագրող Համաշխարհային բանկի տվյալների բազան նույնպես վատ է գնահատում հարկերի վճարման գործընթացը /վարչարարությունը/ Հայաստանում /Հայաստանը 170 երկրների շարքում զբաղեցնում է 148-րդ տեղը/: Չնայած հարցվածները ենթակառուցվածքները որպես այդպիսին չեն գնահատում լուրջ խոչընդոտ բիզնեսի վարման համար, Հայաստանը դեռևս զիջում է դիտարկվող երկրներին ընդհանուր ենթակառուցվածքների բարեփոխման առումով, ինչպես նաև ինտերնետի, բջջային կապի, էլեկտրաէներգիայի սպառման ծավալներով:

Ընդհանուր առմամբ, մրցունակության հաշվարկային ցուցանիշի արդյունքները և գլոբալ մրցունակության ինդեքսի տվյալները բավական մոտ են իրար, ինչը վկայում է ընտրված պարամետրերի ռելևանտության մասին: Այսպես՝ ըստ մրցունակության հաշվարկային ցուցանիշի Հայաստանը 26 երկրների շարքում զբաղեցնում է 18-րդ տեղը և գտնվում է այնպիսի երկրների հարևանությամբ, ինչպիսիք են Թուրքիան, Ռուսաստանը, Ուկրաինան և Մոլդովան:

Ազգային մրցունակության բարձրացման հետագա ռազմավարությունն առաջին հերթին պետք է հիմնված լինի առավելագույն խնդիրներ առաջացնող պարամետրերի մանրամասն վերլուծության, դրանց պատճառների վերհանման և հաղթահարման վրա:

Ճյուղային մրցունակություն

Հաշվետվության այս մասը հիմնականում հիմնված է երեք հարցումների ամփոփված արդյունքների վրա: Ճյուղային մցունակության գնահատման նպատակով դիտարկվում են հարցաթերթում տեղ գտած արտադրողականությանը, ներքին և արտաքին մրցունակությանը, ֆինանսական ռեսուրսների կառավարմանը վերաբերող հարցերը:

Հավաքագրված տեղեկատվության ծածկույթը և ուսումնասիրությունում ընդգրկված հաստատությունների ընդհանուր բնութագիրը

ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում ընդգրկվել են արտադրական ձեռնարկություններ բոլոր տաս մարզերից, Երևանից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից: Ընդհանուր առմամբ ՁՄՖՌԿՈՒ կողմից ուսումնասիրվել է 16 տարբեր ենթաճյուղերում գործող 117 ձեռնարկություն: Երրորդ հարցման ժամանակ նս, վերլուծության արդյունավետության բարձրացման նպատակով, ընտրանքը ձևավորելիս մեխանիկական սարքավորանքի արտադրության ու հաստոցների արտադրության, տրիկոտաժի ու մանածագործական հյուսվածքների, ինչպես նաև տպագրական ու հրատարակչական արտադրությունում գործող ձեռնարկությոնները միավորվել են համապատասխանաբար մեկական ենթաճյուղում: Ստորև բերված աղյուսակից կարելի է դատել, որ հիմնականում ճյուղերը և ենթաճյուղերը ներկայացուցչական են կամ ծածկույթի, կամ էլ ձեռնարկությունների թվի տեսանկյունից, իսկ որոշ դեպքերում՝ այդ երկուսի կտրվածքով: Ցանկալիից պակաս ներկայացուցչական են կահույքի և մսի ու մսամթերքի արտադրության ճյուղերը: Քանի որ ձեռնարկությունների կողմից լրացված հարցաթերթը պարունակում է տեղեկություններ արտադրանքի իրացման ծավալների վերաբերյալ, ուստի համեմատությունը պաշտոնական վիճակագրական տվյալների հետ նույնպես կատարվել է պատրաստի արտադրանքի իրացման ծավալների կտրվածքով /տե՛ս Աղյուսակ 9/:

Աղյուսակ 9. Ուսումնասիրված ձեռնարկությունների բաշխումն ըստ ճյուղերի

	Ճյուղ /ենթաճյուղ/	Ձեռնարկությունների պատրաստի արտադրանքի իրացումը 2007թ. հունվար-հունիսին ընթացիկ գներով, հազ. դրամ /ըստ վիճակագրական տվյալների/*	Ուսումնասիրված ձեռնարկությունների հասույթի մեծությունը 2007թ. հունվար-հունիսին, հազ. դրամ	Ծածկույթը ըստ արտադրության ծավալների, %	Ձեռնարկությունների թիվը ճյուղում 2007թ. /ըստ վիճակագրական տվյալների/*	Ուսումնասիրված ձեռնարկությունների թիվը,	Ծածկույթը ըստ ձեռնարկությունների թվի, %
1	Գունավոր մետաղների արտադրություն	59,110,709	42,706,940	72.2	4	3	75
2	Հրուշակեղենի արտադրություն**	5,513,558	3,067,297	55.6	23	6	26
3	Պլաստմասայե արտադրատեսակների արտ.	2,010,637	1,192,327	59.3	54	5	9
4	Ոսկերչական արտադրություն	4,987,224	2,319,209	46.5	39	3	8
5	Հանքային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն	5,461,929	2,253,792	41.3	52	9	17
6	Հիմնական քիմիական նյութերի արտադրություն	4,519,530	4,488,640	99.3	11	3	27
7	Սուրճի արտադրություն	3,613,389	565,225	15.6	33	4	12
8	Խմիչքի արտադրություն***	25,467,366	4,025,653	15.8	57	12	21
9	Կաթնամթերքի արտադրություն	10,235,175	1,837,120	17.9	66	11	17
10	Կահույքի արտադրություն	1,298,090	48,014	3.7	86	4	5
11	Տպագրական գործ	5,044,821	607,168	12.0	160	17	11
12	Ծխախոտի արտադրություն	7,923,387	6,000,000	75.7	4	2	50
13	Տրիկոտաժի և մանած. հյուսվածքների արտ.	2,135,945	1,536,271	71.9	51	13	25
14	Մեխանիկական սարքավորանքի արտ.****	3,284,237	1,099,113	33.5	80	15	19
15	Մսի և մսամթերքի արտադրություն	2,987,005	427,309	14.3	82	4	5
16	Մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահած.-ում	2,269,711	341,610	15.1	18	6	33
	Ընդամենը	**145,862,713**	**72,515,688**	**49.7**	**820**	**117**	**14.3**

**Աղբյուրը՝ Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, 2006թ. հունվար-դեկտեմբեր, ԱՎԾ, 2007թ.:*


***Հրուշակեղենի արտադրության ճյուղը ներառում է երկարատև պահվող հրուշակեղենի 15.82 և կակաո, շոկոլադ և շաքար պարունակող հրուշակեղենի 15.84 ենթաճյուղերը:*

**** Խմիչքի արտադրության տվյալները չեն ներառում առանձին ներկայացված հանքային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության ենթաճյուղի տվյալները:*

*****Մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղի տակ այստեղ ներկայացված է 29 ծածկանիշի տակ եղած "Մեքենաների և սարքավորանքի արտադրություն" ճյուղը:*

Ձեռնարկությունների բաշխումն ըստ կազմակերպահիրավական տեսակների երեք հարցումների արդյունքում գրեթե նույնն է: Հարաբերական առումով՝ մի փոքր կրճատվել է ՓԲԸ-ների ներկայացվածությունը /տե՛ս Գծանկար 17/:

Գծանկար 17. Ուսումնասիրված ձեռնարկությունների բաշխումն ըստ կազմակերպաիրավական տեսակների



Նախորդ հարցման համեմատ հարաբերական առումով կրճատվել է օտարերկրյա կապիտալով գործող ձեռնարկությունների թիվը: Սա բացատրվում է ինչպես այդ ձեռնարկությունների՝ հարցումից դուրս մնալով, այնպես էլ մի քանի ձեռնարկությունների սեփականատերերի /կամ դրանց կարգավիճակի/ փոփոխությամբ: Ձեռնարկության չափերի առումով փոփոխություններ գրեթե չեն գրանցվել: Երրորդ փուլի հարցման ժամանակ որպես սահման՝ ձեռնարկությունների՝ որպես արտահանող և դեպի ներքին շուկա կողմնորոշվածություն ունեցող, կրկին կիրառվել է 50% շեմի ցուցանիշը: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ կրճատվել է դեպի արտահանումը կողմնորոշված ձեռնարկությունների թիվը և աճել հումք ներմուծող ձեռնարկությունների թիվը: Միևնույն ժամանակ, ընդհանրապես արտահանման գործընթացում ընդգրկված ձեռնարկությունների թիվն աճել է:

Աղյուսակ 10. Ուսումնասիրված ձեռնարկությունների բաշխումն ըստ չափերի, կապիտալում օտարերկրյա մասնակցության և նպատակային շուկայի


	Ձեռնարկությունների բաշխումն ըստ կապիտալի մասնակցության	2007թ. I հարցում	2007թ. II հարցում
1	Առանց օտարերկրյա մասնակցության	101	96
2	Օտարերկրյա մասնակցությամբ	27	21
	ընդամենը	128	117
	Ձեռնարկությունների բաշխումն ըստ չափերի		
1	միկրո	12	14
2	փոքր	67	60
3	միջին	9	8
4	խոշոր	39	35
	ընդամենը	127	117
	Ձեռնարկությունների բաշխումն ըստ գործունեության կողմնորոշման		
1	Ընդհանրապես չարտահանող	69	58
2	Դեպի արտահանումը կողմնորոշված	30	22
3	Արտահանող և ներքին շուկայում սպառող	29	37

4	Հումք ներմուծող	63	70

** Դեպի արտահանում կողմնորոշված են համարվում այն ձեռնարկությունները, որոնք արտահանում են իրենց արտադրանքի 50 տոկոսից ավելին:*
** Արտահանող և ներքին շուկայում սպառող են համարվում այն ձեռնարկությունները, որոնք արտահանում են իրենց արտադրանքի 50 տոկոսից պակաս:*

Ձեռնարկությունների ընտրանքում Երևանում գործող կազմակերպությունների տեսակարար կշիռը կազմում է 52% (62 ձեռնարկություն): Նախորդ հարցման համեմատ Երևանում ուսումնասիրված ձեռնարկությունների բացարձակ թիվը նվազել է 1-ով, իսկ հարաբերական առումով ավելացել 3 տոկոսային կետով: Մնացած ձեռնարկությունների բաշխվածությունը երեք հարցումների համար ՀՀ մարզերի և ԼՂՀ միջև ներկայացված է հաջորդ պատկերում /տե՛ս Գծանկար 18/:

Գծանկար 18. Ուսումնասիրված ձեռնարկությունների մարզային բաշխվածությունը /ձեռնարկությունների թիվը/



Ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վերլուծություն /արտադրողականություն, միավոր աշխատուժի ծախս, շահութաբերություն/

Հաշվի առնելով ՀՀ ԿԲ փորձագիտական խմբի դիտողություններն ու առաջարկությունները, աշխատանքի արտադրողականության և գործունեության արդյունավետության այլ հաշվարկային ցուցանիշների ճշգրտման և համադրելիության կտրվածքով՝ ավարտական փուլում ձեռնարկվել են բոլոր հնարավոր քայլերը հաշվարկներն առավելագույն ճշգրտության և համադրելիության հասցնելու համար: Մասնավորապես իրականացվել են հետևյալ քայլերը՝

- Արտադրողականության բոլոր տիպի ցուցանիշները վերահաշվարկվել են երկրորդ և երրորդ հարցումների ընդհանուր ձեռնարկությունների համար: Քանի որ հաշվարկները իրականացվել են առանձին-առանձին, ըստ յուրաքանչյուր ընկերության, իրականացվել է ստացված արդյունքների տրամաբանական ստուգում և համեմատություն նախորդ հարցման ցուցանիշի հետ:
- Այն ձեռնարկությունների համար, որոնք տրամադրել էին միայն մեկ կամ երկու տարվա ֆինանսական տեղեկատվություն, կատարվել է էքստրապոլյացիա՝ ելնելով ճյուղի աճի դինամիկայից /հասույթի մեծության համար/ և աշխատավարձի աճի տեմպերից /աշխատավարձի ֆոնդը որոշելու համար/: Բնականաբար, աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս հաշվի է առնվել նաև աշխատողների թվաքանակի փոփոխության ազդեցությունը:
- Սոցիալական ապահովագրության վճարների և ամորտիզացիոն հատկացումների կտրվածքով մի շարք ձեռնարկություններում դիտարկվել են անհամապատասխանություններ: Սոցապ. վճարների կտրվածքով որոշ ձեռնարկություններում ըստ ներկայացված տվյալների դրանց հարաբերակցությունը աշխատավարձի ֆոնդի նկատմամբ կազմել է 40-50 տոկոս: Սոցապ. հատկացումները վերահաշվարկվել են տվյալ տարվա ճյուղի միջին սոցապ. հատկացումներ/ աշխատավարձի ֆոնդ հարաբերակցությունից ելնելով: Իսկ ամորտազացիոն հատկացումների համար, տվյալների ոչ ամբողջական լինելու դեպքում մի քանի խոշոր ձեռնարկությունների մոտ մեկ ժամանակաշրջանից մյուսը դիտարկվում են հատկացումների զգալի տատանումներ: Այս դեպքում ենթադրություն է կատարվել, որ ամորտիզացիոն հատկացումները մնացել են նույն սահմաններում և բաց թողնված տարիները լրացվել են /մասնավորապես «Աշտարակ կաթ» և «Նաիրիտ» ձեռնարկությունների դեպքում/:
- Տարիների միջև համեմատելիությունն ապահովելու նպատակով բոլոր երեք տարիների գները բերվել են 2007թ. գներին /որպես 2007թ. գների ինդեքս վերցվել է հունվար-նոյեմբեր ամիսների ինդեքսը/: Ընդ որում, հնարավորության դեպքում հաշվարկը կատարվել է կոնկրետ ապրանքատեսակի գների ինդեքսով: Հակառակ դեպքում կիրառվել է սպառողական գների ինդեքսը: Միայն գունավոր մետաղների համար ինդեքսավորում չի իրականացվել:
- Քանի որ վերը նշված էքստրապոլյացիայի արդյունքում աշխատավարձի և հասույթների տվյալները դարձել են ամբողջական, ուստի միավոր աշխատուժի ծախսի (Unit Labor Cost) ցուցանիշը հաշվարկվել է մեկ աշխատողին բաժին ընկնող աշխատավարձի ֆոնդը հարաբերելով մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությանը՝ հաշվարկված ավելացված արժեքի հիման վրա: ULC ճյուղային ցուցանիշները հաշվարկվել են ճյուղի ավելացված արժեքը/հասույթը հարաբերելով ճյուղում զբաղվածների թվի վրա: Նույն սկզբունքով հաշվարկվել է նաև ճյուղի միջին արտադրողականությունը և միջին

աշխատավարձի ցուցանիշները՝ փոփոխությունների համադրելիությունները ապահովելու նպատակով:

- Հաշվարկներն իրականացվել են MS Excel միջավայրում և համապատասխան էլեկտրոնային ֆայլը ներկայացվում է սույն հաշվետվությանը կից: Որոշ հաշվարկային ցուցանիշներ ներմուծվել են նաև վերջին հարցումների արդյունքում կազմված՝ SPSS-ով կառուցված տվյալների բազայի մեջ:

Ավարտական փուլում, ինչպես վերը նշվել էր, ճշգրտվել /համալրվել/ են ըստ ավելացված արժեքի հաշվարկված արտադրողականությունների տվյալները: Քանի որ շահույթի վերաբերյալ տեղեկատվություն ստացվել էր ֆինանսական ցուցանիշներ ներկայացրած ոչ բոլոր ձեռնարկությունների կողմից, ճյուղի շահույթի մեծության որոշման նպատակով եղած տվյալների հիման վրա հաշվարկվել է ձեռնարկությունների շահութաբերության միջին մակարդակը, որի հիման վրա ճյուղի համախառն հասույթի ցուցանիշից որոշվել է շահույթի մոտավոր մեծությունը ամբողջ ճյուղի համար: Ամորտիզացիոն հատկացումների վերաբերյալ տեղեկատվություն ստացվել է ֆինանսական բաժնի հարցերին պատասխանած ձեռնարկությունների 70 տոկոսի կողմից:

Ներկայացված խոշորացված 8 ճյուղերից և ենթաճյուղերից երկու տարի անընդմեջ արտադրողականության աճ է գրանցվել 5 ճյուղում, իսկ անընդմեջ կրճատում՝ միայն ծխախոտի արտադրության ճյուղում: Բացարձակ ցուցանիշներով գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության ճյուղերը ընդգծված առավելություն ունեն մնացած ձեռնարկությունների նկատմամբ: 8 ճյուղերից 6-ում 2007 թվականին 2005 նկատմամբ գրանցվել է արտադրողականության մակարդակի աճ /տե՛ս Աղյուսակ 11/:

Ձեռնարկությունների գործունեության արդյունավետության մեկ այլ ցուցանիշ է միավոր աշխատուժի ծախսը (Unit Labor Cost): Որպես այդպիսին, ULC-ին ցույց է տալիս արտադրողականության և աշխատուժի արժեքի միջև գոյություն ունեցող կապը: Այս ցուցանիշի աճը նշանակում է, որ աշխատանքի վարձատրության աճի տեմպը գերազանցում է աշխատանքի արտադրողականության աճի ցուցանիշը, և այլ հավասար պայմաններում լրացուցիչ ճնշումներ է ստեղծում ձեռնարկության/ճյուղի ծախսային մրցունակության վրա[25]:

Ուսումնասիրված ձեռնարկություններում միավոր աշխատուժի ծախսն ամենից բարձրն է ոսկերչական արտադրության ճյուղերում: Համաձայն ներկայացված տվյալների այդ ճյուղում գործող ձեռնարկությունները աշխատել են վնասով կամ գրեթե զրոյական շահույթով /տե՛ս Աղյուսակ 11/: Ընդհանուր առմամբ, 2005-2007թթ. ընթացքում սույն ցուցանիշը դիտարկված խոշորացված 8 ճյուղերից 4-ում նվազել է, 3-ում՝ ավելացել և մեկում մնացել անփոփոխ: Ամենակտրուկը այս ցուցանիշը կրճատվել է տրիկոտաժի արտադրության ճյուղում: Ըստ ներկայացված տվյալների սա նաև միակ ճյուղն է, որտեղ 3 տարիների ընթացքում գրանցվել է միջին աշխատավարձի կրճատում: ***Սակայն այստեղ հարկ է նշել, որ այս ճյուղում գործող ձեռնարկությունները շատ անգամ աշխատողներին աշխատավարձ վճարում են արտադրանքի պատվերի առկայության դեպքում /այսինքն ոչ ամբողջ տարին/, իսկ աշխատողների միջին ցուցակային թիվը նշելիս հաշվի են առել բոլոր աշխատողների միջին թիվը և ոչ թե փաստացի միջին ցուցակային թիվը:***

Ամենից բարձր արտադրողականություն ունեցող երկու ճյուղերը՝ գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության, նաև ամենաշահութաբերն են:

[25] Richard McKenzie, David Brackfield, “The OECD system of Unit labor costs and related indicators”, March 2008, OECD statistics working paper.

Աղյուսակ 11. Ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը բնութագրող մի շարք ցուցանիշներ 2005-2007թթ.՝ բացարձակ մեծությունները և տարեկան աճի տեմպերը

	Արտադրողականություն 2005թ., հազ. դրամ[26]	Արտադրողականություն 2006թ., հազ. դրամ	Արտադրողականություն 2007թ., հազ. դրամ		Արտադրողականության աճը 2006-ին 2005-ի նկատմամբ	Արտադրողականության աճը 2007-ին 2006-ի նկատմամբ
	2005	2006	2007		2006/2005	2007/2005
Գունավոր մետաղներ	17,260.3	10,214.4	14,063.3		-41%	38%
Տպագրական գործ	947.6	969.0	1,544.7		2%	59%
Սննդամթերք	1,112.5	1,330.6	1,464.3		20%	10%
Քիմ. և պլաստմ. իրեր	1,054.5	1,318.6	1,473.0		25%	12%
Մեխ. սարք.	576.5	654.7	803.0		14%	23%
Տրիկոտաժ	594.0	731.6	786.8		23%	8%
Ծխախոտ	7,536.1	7,171.0	5,347.2		-5%	-25%
Ոսկի	1,367.0	1,328.9	1,721.3		-3%	30%
	Միավոր աշխատուժի ծախս, 2005թ.[27]	Միավոր աշխատուժի ծախս, 2006թ.	Միավոր աշխատուժի ծախս, 2007թ.		ՄԱԾ-ի աճը 2006-ին 2005-ի նկատմամբ	ՄԱԾ-ի աճը 2007-ին 2006-ի նկատմամբ
Գունավոր մետաղներ	0.09	0.13	0.13		58%	-1%
Տպագրական գործ	0.47	0.50	0.44		6%	-12%
Սննդամթերք	0.50	0.48	0.48		-5%	0%
Քիմ. և պլաստմ. իրեր	0.66	0.60	0.66		-10%	10%
Մեխ. սարք.	0.68	0.70	0.64		3%	-9%
Տրիկոտաժ	0.81	0.74	0.60		-8%	-19%
Ծխախոտ	0.16	0.21	0.31		32%	50%
Ոսկի	0.83	0.86	0.86		4%	0%
	Շահութաբերության մակարդակ 2005	Շահութաբերության մակարդակ 2006	Շահութաբերության մակարդակ 2007		Շահութաբերության աճը 2006-ին 2005-ի նկատմամբ /տոկոսային կետ/	Շահութաբերության աճը 2007-ին 2006-ի նկատմամբ /տոկոսային կետ/
Գունավոր մետ	19.0%	13.8%	18.3%		-5%	4%
Տպագր. գործ	12.0%	12.1%	11.0%		0%	-1%
Սննդամթերք	5.4%	6.6%	7.2%		1%	1%
Քիմ. և պլաստ.	10.0%	9.9%	9.3%		0%	-1%
Մեխ. սարք.	6.2%	5.5%	7.9%		-1%	2%
Տրիկոտաժ	4.5%	7.7%	11.0%		3%	3%
Ծխախոտ	23.7%	24.0%	16.7%		0%	-7%
Ոսկի	-	-	-		-	-
	Միջին աշխատավարձ 2005, հազ. դրամ	Միջին աշխատավարձ 2006, հազ. դրամ	Միջին աշխատավարձ 2007, հազ. դրամ		Աշխատավարձի աճը 2006-ին 2005-ի նկատմամբ	Աշխատավարձի աճը 2007-ին 2006-ի նկատմամբ
Գունավոր մետ	96.8	97.2	131.2		0%	35%
Տպագր. գործ	31.5	34.3	49.4		9%	44%
Սննդամթերք	39.3	44.8	45.9		14%	3%
Քիմ. և պլաստ.	47.7	53.8	66.4		13%	23%
Մեխ. սարք.	26.9	30.7	34.5		14%	12%

[26] Արտադրողականությունը հաշվարկվել է ավելացված արժեքի հիման վրա


[27] Միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշը հաշվարկվել է մեկ աշխատողին բաժին ընկնող աշխատավարձի ֆոնդը և սոցիալական ապահովության ուղղված միջոցների գումարը հարաբերելով մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությանը՝ հաշվարկված ավելացված արժեքի հիման վրա

Տրիկոտաժ	47.8	44.2	43.6		-7%	-2%
Ծխախոտ	83.9	105.1	116.4		25%	11%
Ոսկի	80.5	80.1	103.3		0%	29%

Ուսումնասիրված ճյուղերում առավելագույն միջին աշխատավարձը 2007 թվականին գրանցվել է գունավոր մետաղների արտադրության ճյուղում՝ 131 հազար դրամ, իսկ նվազագույնը՝ մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղում՝ 34.5 հազար դրամ[28]: Ուսումնասիրված ճյուղերի միջին աշխատավարձը 2007թ. կազմել է գրեթե 60 հազար դրամ: Բոլոր ճյուղերում, բացառությամբ տրիկոտաժի արտադրության, 2007 թվականին նախորդ տարիների նկատմամբ գրանցվել է աշխատավարձի մակարդակի աճ. առավելագույնը տպագրական գործի ճյուղում՝ 57% և ամենաքիչը սննդարդյունաբերության ճյուղում՝ 20% /աճը բերված է 2007-ը 2005-ի նկատմամբ/: /տե՛ս Աղյուսակ 11/

Միջին աշխատավարձի, արտադրողականության և միավոր աշխատուժի աճի տեպերի միջև եղած տրամաբանական կապը ներկայացված է հետևյալ գծանկարում /տե՛ս Գծանկար 19/: Այսպես՝ տպագրական գործի, մեխանիկական սարքավորանքի, տրիկոտաժի արտադրության և սննդամթերքի արտադրության ճյուղերում արտադրողականությունն ավելի արագ տեմպերով է աճել, քան աշխատավարձի ծախսերը, ինչն իր արտահայտությունն է գտել միավոր աշխատուժի ծախսի նվազող ցուցանիշում: Քիմիական և պլաստամասե իրերի ու ոսկերչական արտադրանքի թողարկման ճյուղերում, փաստորեն, արտադրողականության աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է եղել աշխատավարձի աճով և միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշն այստեղ մնացել է անփոփոխ: Արդյունավետության բարելավման տեսանկյունից ակնհայտ հետևապահ են գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության ճյուղերը, որոնցում աշխատավարձի մակարդակի զգալի աճը զուգորդվել է արտադրողականության կրճատումով:

Գծանկար 19. Աշխատավարձի, արտադրողականության և միավոր աշխատուժի ծախսի աճը 2007 թվականին 2005 թվականի նկատմամբ




[28] Ինչպես արդեն նշվել էր, ճյուղի միջին աշխատավարձը հաշվարկվել է ճյուղի աշխատավարձի ֆոնդը հարաբերելով ճյուղի աշխատողների թվի վրա՝ ըստ էության իրականացվել է միջին կշռված հաշվարկ, որտեղ կշիռների դերում հանդես են եկել աշխատողների թիվը յուրաքանչյուր ձեռնարկությունում:

Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Պատկերն ավելի ամբողջական դարձնելու նպատակով համեմատվել է նաև միավոր աշխատուժի ծախսի և շահութաբերության ցուցանիշների դինամիկան 2005-2007թթ. ընթացքում /տե՛ս Գծանկար 20/: Դիտարկված 8 խոշորացված ճյուղերից 7-ում այս ցուցանիշների փոփոխությունները ունեցել են հակադարձ ուղղվածություն: Ամենազգալին շահութաբերությունը աճել է տրիկոտաժի արտադրության ճյուղում: Միայն տպագրական գործի ճյուղում է միավոր աշխատուժի ծախսի կրճատումը զուգորդվել շահութաբերության նվազմամբ: Սա, թերևս, կարող է պայմանավորված լինել ամորտիզացիոն հատկացումների կտրուկ փոփոխությամբ /աճով/: Երկրորդ պատճառը կարող է լինել նաև այն, որ շահութաբերության միջին մակարդակը, որը հաշվարկվել է համապատասխան տվյալներ ներկայացրած ձեռնարկությունների հիման վրա, կարող է իրականում տարբերվել հաշվարկային ցուցանիշից /այսինքն՝ մեր կողմից գնահատված շահութաբերության մակարդակը ամբողջապես չի արտացոլում ճյուղի իրական պատկերը/: Ծխախոտի արտադրության ճյուղում շահութաբերության նվազման պատճառներից մեկը ակնհայտորեն աշխատավարձի առաջանցիկ աճն է արտադրողականության նկատմամբ: Նույն գործոնը նաև պայմանավորում է գունավոր մետաղների և քիմիական և պլաստամասե իրերի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների շահութաբերության աննշան կճատմանը:

Գծանկար 20. Շահութաբերության և միավոր աշխատուժի ծախսի աճը 2007թ. 2005 թվականի նկատմամբ




Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Համադրելով նշված երկու գծանկարների հակիրճ վերլուծությունները կարելի է փաստել, որ տրիկոտաժի, սննդամթերքի և մեխանիկական սարքավորանքի ճյուղերը բարելավվել են իրենց գործունեության արդյունավետությունը 2005-2007թթ. ընթացքում: Այդ նույն ժամանակահատվածում տպագրական և քիմ. ու պլաստասե իրերի ճյուղերում չնայած գրանցվել է արտադրողականության աճ, որոշակիորեն հետընթաց են ապրել շահութաբերության և աշխատուժի ծախսումների արդյունավետության տեսանկյունից: Ինչպես արդեն նշվել է, գունավոր մետաղների և ծխախոտի թողարկման ճյուղերում գրանցվել է բացասական միտում գործունեության արդյունավետությունը բնութագրող բոլոր ցուցանիշների կտրվածքով, և չնայած այդ հանգամանքին, այս երկու ճյուղերը շարունակում են մնալ ամենաարտադրողականը և շահութաբերը:

Վերլուծության շրջանակներում դիտարկվել են նաև սննդամթերքի թողարկման առանձին ճյուղերի ցուցանիշները դինամիկայում: Առավել արտադրողական են ոչ ալկոհոլային խմիչքների և սուրճի արտադրության ճյուղերը, իսկ ամենացածր արտադրողական են հրուշակեղենի և մսամթերքի արտադրության ենթաճյուղերը: Ընդհանուր առմամբ դինամիկան 2005-2007թթ. ընթացքում դրական է եղել, բացառությամբ հրուշակեղենի արտադրության ենթաճյուղի /տե՛ս Գծանկար 21/:


Գծանկար 21. Արտադրողականության մակարդակը սննդի արդյունաբերությունում՝ ըստ ենթաճյուղերի



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ըստ չափերի դիտարկելիս կարևոր է ընդգծել, որ ստացվել են բավական տարբեր արդյունքներ: Միայն փոքր ձեռնարկություններում է գրանցվել աճ 3 տարիների ընթացքում: Միջին ձեռնարկություններն ունեցել են կտրուկ անկում 2006-ին, իսկ միկրոները հակառակը՝ կտրուկ աճ: Ինչ վերաբերում է խոշոր ձեռնարկություններին, ապա դրանք շարունակում են մնալ ավելի արտադրողական, չնայած երեք գունավոր մետաղների արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները հաշվարկից հանելիս արտադրողականությունը զգալիորեն կրճատվում է:

Գծանկար 22. Ձեռնարկությունների արտադրողականության ցուցանիշներն ըստ ձեռնարկությունների չափերի




Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Քանի որ ավարտական փուլի շրջանակներում հաշվարկվեցին արտադրողականություններն ըստ յուրաքանչյուր ձեռնարկության, ուստի

արտադրողականության մակարդակների համեմատականներ անցկացվեցին նաև ըստ մի շարք լրացուցիչ պարամետրերի: Ընդհանուր առմամբ, արտաքին ձեռնարկությունների հետ մրցակցող ձեռնարկությունների արտադրողականության մակարդակները միջին հաշվով ավելի բարձր են: Ավելի արտադրողական են նաև հումք ներմուծող ձեռնարկությունները, ինչի պատճառ կարող է հանդիսանալ, ի թիվս այլ գործոնների, նաև դրամի արժեվորման հետևանքով հումքի գնի հարաբերական կրճատումը, ինչպես նաև ձեռնարկությունների կողմից երբեմն նշվող ներմուծվող հումքի ավելի բարձր որակը: Ակնհայտ է նաև օտարեկրյա մասնակցություն ունեցող ձեռնարկությունների առավելությունը /տե՛ս Գծանկար 23/:

Գծանկար 23. Արտադրողականության մակարդակները ըստ մրցակցության շուկաների /արտաքին և ներքին/, հումքի ներմուծման աղբյուրների և օտարերկրյա մասնակցության 2007թ., հազ. դրամ /ըստ ավելացված արժեքի/ /համապատասխան խմբի ձեռնարկությունների պարզ միջին արտադրողականություն/




Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Մրցակցությունը ներքին և արտաքին շուկաներում

Մրցակիցների թվի նկատմամբ ձեռնարկությունների գնահատականները նախորդ հարցման համեմատ գրեթե չեն փոխվել: Մասնավորապես, ստորև բերված գծանկարում ներկայացված են ներքին շուկայում մրցակցող այն ճյուղերի գնահատականները, որոնցում հարցմանը մասնակցող ձեռնարկությունների կազմի և թվի փոփոխությունները գրեթե չեն գրանցվել: Ընդհանրապես մրցակից չունեցող ձեռնարկություններ հանդիպում են հիմնականում այն ճյուղերում, որոնցում հնարավոր է թողարկել դիֆերենցված արտադրատեսակներ կամ թողարկել արտադրանքը ըստ հատուկ պատվերների: Առավել ինտենսիվ մրցակցություն է նկատվում տպագրական գործի և սննդի արտադրության մի շարք ենթաճյուղերում /մսամթերք, մրգերի և բանջարեղենի վերամշակում, մսամթերք/:

Գծանկար 24. Ներքին մրցակիցների թվի վերաբերյալ ձեռնարկությունների գնահատականները ըստ մի շարք ճյուղերի /2007 թվականի երկրորդ հարցում/




Ձեռնարկությունների թիվը ճյուղում
3
15
5
13
9
16
6
4
11
11
4
6

Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Երեք հարցումների արդյունքներն ամփոփելով կարելի է փաստել, որ ամենաշատը՝ 10-ից ավել մրցակից ունեն միկրո ձեռնարկությունները, սակայն այս ցուցանիշը /10-ից ավելի մրցակից ունեցող ձեռնարկությունների տեսակարար կշիռը/ երեք հարցումների արդյունքում կրճատման

միտում ունի և 75%-ից հասել է 53%: Ընդ որում, որքան ավելի մեծ են ձեռնարկությունների չափերը, այնքան ավելանում է ընդհանրապես մրցակից չունեցողների թիվը /տե՛ս Գծանկար 25/:


Գծանկար 25. Ընդհանրապես մրցակից չունեցող ձեռնառկությունների տեսակարար կշիռն ըստ դրանց չափերի



Աղբյուրը՝ ՀՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Մինչև 3 մրցակից ունեցող ձեռնարկությունների միջին արտադրողականությունը գրեթե 2 անգամ գերազանցում է 4 և ավելի ներքին մրցակից ունեցողների արտադրողականության մակարդակները: Այստեղ կարևոր է ընդգծել, որ արտադրողականության տարբերությունները կարող են ոչ այդքան պայմանավորված լինել մրցակիցների թվով /կամ մրցակցության ինտենսիվությունից/, որքան ձեռնարկությունների չափերով: Ինչպես երևում է գծանկարից, ձեռնարկությունների չափերի մեծացմանը զուգահեռ կրճատվում է 4 և ավելի մրցակից ունեցող ձեռնարկությունների թիվը, և միևնույն ժամանակ չափերի մեծացմանը գրեթե զուգընթաց բարձրանում է արտադրողականությունը: Ամեն դեպքում կարելի է եզրակացնել, որ առավել արտադրողական են խոշոր ձեռնարկությունները, որոնք ունեն ավելի փոքր թվով մրցակիցներ /տե՛ս Գծանկար 26/:

Գծանկար 26. Ձեռնարկությունների մրցակիցների թիվը և միջին արտադրողականության մակարդակները ըստ ձեռնարկությունների չափերի /2007թ. երկրորդ հարցում/




Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ընդհանուր առմամբ, ներմուծող կազմակերպությունների հետ մրցակցում են ուսումնասիրված ձեռնարկությունների 35 տոկոսը /2007թ. երկու հարցումների միջին ցուցանիշը/: Ներմուծողների հետ մրցակցող ձեռնարկությունների գրեթե 70 տոկոսը համարում է, որ ներմուծողներին պատկանում է շուկայի զգալի մասը: Այդպիսի կարծիք ընդգծված կերպքով ունեն տրիկոտաժի արտադրությունում գործող ձեռնարկությունները:

Ստորև բերված գծանկարում ներկայացված է ներմուծողների հետ մրցակցության աստիճանի դինամիկան ըստ առավել ներկայացուցչական ճյուղերի: Քիմիական նյութերի /բացառությամբ Նաիրիտի/ և ծխախոտի արտադրության բոլոր ձեռնարկությունները նշել են, որ մրցակցում են ներմուծողների հետ[29]: Առավել քիչ մրցակցում են ներմուծողների հետ կաթնամթերքի, պլաստմասե իրերի և տպագրական գործում զբաղված ձեռնարկությունները: Պլաստմասե արտադրատեսակներ թողարկող ձեռնարկությունների նման պատասխանը թերևս կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ դրանց կողմից թողարկված արտադրանքը բավական սպեցիֆիկ է և դրանց ներմուծումը դրսից նպատակահարմար չէ /օրինակ, պլաստիկ շշերի կափարիչներ/:

Գծանկար 27. Ներմուծող կազմակերպությունների հետ մրցակցող ձեռնարկությունների տեսակարար կշիռը՝ ըստ առավել ներկայացուցչական ճյուղերի, 2006 և 2007թթ..




Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ներմուծողների հետ մրցակցելիս խոչընդոտող գործոնների առումով կարելի նշել, որ ընդհանուր առմամբ /միմյանց հետ համադրելով երեք հարցումների արդյունքները/ ներմուծվող ապրանքների ավելի ցածր գինը ընկալվում է որպես առաջնային բացասական ազդեցություն ունեցող գործոն: Ինչ վերաբերում է արտադրանքի որակին, երեք հարցումների արդյունքները գրեթե միանման այն համարում են ամենաթույլ գործոն /տե՛ս Գծանկար 28/:

[29] Կահույքի արտադրության ճյուղում կտրուկ փոփոխությունը կարող է պայմանավորված լինել նաև ընտրանքի փոփոխությամբ:


Գծանկար 28. Գործոններ, որոնք խոչընդոտում են ձեռնարկությունների մրցունակությանը ներմուծվող արտադրանքի նկատմամբ /1-առավել կարևոր խոչընդոտոր, 5-ամենթույլ խոչընդոտ/, բոլոր ուսումնասիրված ճյուղերի միջին գնահատականները



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Հետաքրքիր պատկեր է ստացվել արտահանմանը խոչընդոտող գործոնները վերլուծելիս: Նախորդ երկու հարցումներում հիմնական խոչընդոտ համարվող՝ արտադրանքի անծանոթ լինելու գործոնը զիջել է իր տեղը արտադրանքի գնին: Նման փոփոխության պատճառ կարող է լինել գնի վերաբերյալ հարցի մանրամասնեցումը հարցաթերթում /մասնավորապես ՀՀ դրամի արժեվորման հիմնախնդրի ներկայացումը/: Ինչպես և ներմուծողների հետ պայքարելիս, այս դեպքում ևս ձեռնարկություններն իրենց կողմից թողարկվող արտադրանքի որակը գնահատել են որպես ամենաթույլ՝ ամենաքիչ խնդիրներ առաջացնող գործոն:


Գծանկար 29. Արտահանման գործընթացում ուսումնասիրված ձեռնարկություններին խոչընդոտոտող գործոնների կարևորությունը /1-հիմնական խոչընդոտ, 5-ամենաթույլ խոչընդոտ/



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Քանի որ և՛ արտահանողների, և՛ ներմուծողների հետ մրցակցողներն ըստ էության մրցակցում են արտաքին արտադրողի հետ, ուստի հետաքրքիր էր համեմատել այս երկու խմբերի գնահատականները նշված խոչընդոտների առումով: Խոչընդոտները գրեթե հավասարապես են դասակարգված, բացառությամբ արտադրանքի ապրանքանիշի անծանոթ լինելուց: Այստեղ կարևոր է նշել, որ երկու խումբ ձեռնարկությունների համար էլ ժամանակի ընթացքում ապրանքանիշի խնդիրը դարձել է պակաս կարևոր: Միևնույն ժամանակ նման տարբերությունը բնական է այն առումով, որ տեղական ապրանքանիշը չի կարող տեղական շուկայում ունենալ նույն խնդիրները, ինչ արտաքին շուկայում:

Գծանկար 30. Արտահանող և ներմուծողների հետ մրցակցող ձեռնարկություններին խոչընդոտող գործոնների կարևորությունը /1-հիմնական խոչընդոտ, 5-ամենաթույլ խոչընդոտ/, 2007թ. երկրորդ հարցում



Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ինչ վերաբերում է ներմուծողների հետ ամենից շատ մրցակցող ճյուղերին, ապա այստեղ ստացվել է հետևյալ պատկերը: Սուրճ արտադրողները համարում են, որ մրցակիցներն իրենցից առաջ են անցնում արտադրանքի փաթեթավորման գործում, իսկ կահույք և տրիկոտաժե ապրանքներ արտադրողների համար մեկ խնդիրը ներմուծված ապրանքի առավել ցածր գինն է:


Մրցակից ապրանքներ ամենից շատ ներմուծվում են Ռուսաստանից և Եվրոմիության երկրներից: Այս երկու աղբյուրներին անդրադարձել են գրեթե բոլոր ճյուղերը՝ Ռուսաստանն՝ 26 ձեռնարկություն, ԵՄ-ին՝ 19: Ըստ ճյուղերի դիտարկելիս պատկերը մնացել է նույնը, այն է՝ տրիկոտաժի ճյուղի արտադրանքին մրցակից ապրանքներ ներմուծվում են հիմնականում Չինաստանից, Թուրքիայից և Արաբական Միացյալ Էմիրություններից, իսկ խմիչքներ՝ Ուկրաինայից:

Սույն հաշվետվության Հավելված 4-ում ներկայացված է ուսումնասիրված ձեռնարկությունների արտահանման աշխարհագրությունը: Տվյալները ներկայացված են տոկոսային կտրվածքով և վերաբերում են այն ձեռնարկություններին, որոնք ընդհանրապես արտահանում են իրենց արտադրանքը:

Հումքի ներմուծումը և դրամի արժեվորման ազդեցությունը ուսումնասիրված ձեռնարկությունների վրա

Օգտագործվող հումքի ձեռքբերման աղբյուրների կառուցվածքը ընդհանուր առմամբ երեք հարցումների ընթացքում էական փոփոխություն չի կրել: Որոշակիորեն փոքրացել է ԱՊՀ երկրներից հումք ներկրողների տեսակարար կշիռը, սակայն դրա փոխարեն մեծացել է արտերկրից հումք ներկրողների մասնաբաժինը /երրորդ հարցման արդյունքները երկրորդի նկատմամբ/՝ ընդհանուր առմամբ ***տեղական / օտարերկրյա աղբյուրներ*** հարաբերակցությունը թողնելով նույնը:

Գծանկար 31. Ուսումնասիրված ձեռնարկությունների կողմից օգտագործվող հումքի ձեռք բերման աղբյուրների կառուցվածքը 2006-2007թթ., %



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ


Ամփոփելով վերջին երկու հարցումների տվյալները կարելի է փաստել, որ հումքի ներմուծման պատճառները գրեթե չեն փոխվել: Ներմուծվող հումքի օգտագործման պատճառները վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ հիմնական պատճառը նման հումքի բացակայությունն է (62%): Հարցվածների քառորդ մասը ներմուծում է հումք, քանի որ այն ավելի բարձր որակի է, քան տեղականը, և ամենափոքր թիվը՝ 14% հումք ներմուծելու մեջ տեսնում են գնային առավելությունները:

Հումքի ներմուծման տեսանկյունից և ընդհանրապես արտաքին շուկաներում գործունեության տեսանկյունից կարևոր է ՀՀ դրամի արժեվորման ազդեցությունը ձեռնարկությունների վրա: Եթե մինչ այժմ մենք նման վերլուծություն կատարել ենք ըստ ճյուղերի, ապա այժմ փորձել ենք վերլուծել՝ արդեն իսկ անդրադառնալով յուրաքանչյուր ձեռնարկությանը՝ հաշվի առնելով, թե արդյոք այդ ձեռնարկությունն արտահանում է, ներմուծում է հումք, այդ երկու գործողություններն էլ իրականացնում է, թե իրականացնում է դրանցից միայն մեկը:

Ընդհանուր առմամբ երեք հարցումների արդյունքում դրամի արժեվորման ազդեցությունը ներկայացված է Գծանկար 32-ում: Հարկ է շեշտել, որ յուրաքանչյուր հացման ժամանակ ձեռնարկություններին առաջարկվել է գնահատել այդ ազդեցությունը սկսած 2004 թվականից, ուստի ցուցանիշը յուրօրինակ գումարային արտահայտություն ունի՝ այսինքն ամեն հաջորդ

հարցումը ներառում է ավելի մեծ ժամանակահատված: Հարկ է նաև նշել, որ 2006 թվականին անցկացված առաջին հարցմանը սույն հարցին պատասխանել են մասնակից ձեռնարկությունների ընդամենը 70 տոկոսը, մինչդեռ հաջորդ երկու հարցմանը պատասխանել են ավելի քան 95 տոկոսը, ուստի տարբերությունները կարող են պայմանավորված լինել նաև այս հանգամանքով:

Գծանկար 32. Հայկական դրամի արժեվորման ազդեցությունը ձեռնարկությունների մրցունակության վրա 2004-2007թթ. ընթացքում (միջինն ըստ բոլոր ճյուղերի, %)



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ինչպես երևում է ստորև ներկայացված աղյուսակից, արտահանող ձեռնարկությունների 60 տոկոսը, անկախ այն հանգամանքից ներմուծում է հումք, թե չի ներմուծում, բացասական է գնահատել դրամի արժեվորումը իր մրցակցային դիրքի վրա: Հետաքրքրաշարժ է այն փաստը, որ հումք ներմուծող և չարտահանող 23 ձեռնարկությունների միայն 35%-ն է նշել, որ արժեվորումը ունեցել է դրական ազդեցություն, և նույնքան ձեռնարկություն էլ գտնում է, որ արժեվորումը բացասական դեր է խաղացել: Սա կարող է պայմանավորված լինել այն փաստով, որ այդ ձեռնարկությունները մրցակցում են ներմուծողների հետ: Մասնավորապես, այս խմբում ընդգրկված կահույքի, քիմ. արտադրության և մեխ. սարքավորանքի արտադրության մի շարք ձեռնարկություններ իսկապես մրցակցում են ներմուծողների հետ:

Աղյուսակ 12. Հայկական դրամի արժեվորման ազդեցությունը ձեռնարկությունների մրցունակության վրա արտահանման և ներմուծման տեսանկյունից 2007թ. երկրորդ հարցման արդյունքներով, %

Ձեռնարկության բնույթը ըստ արտահանման և հումքի ներմուծման		Ունեցել է բացասական ազդեցություն	Ազդեցություն չի ունեցել	Ունեցել է դրական ազդեցություն	Ընդամենը
ներմուծում է հումք և չի արտահանում		8	7	8	23
	%	*35%*	*30%*	*35%*	*100%*
և ներմուծում է հումք, և արտահանում է		23	8	6	37
	%	*62%*	*22%*	*16%*	*100%*
արտահանում է, բայց հումք չի ներմուծում		13	9	0	22
	%	*59%*	*41%*	*0%*	*100%*
Արտահանող ձեռնարկություններ		36	17	6	59
	%	*61%*	*29%*	*10%*	*100%*
Հումք ներմուծող ձեռնարկություններ		31	15	14	60

%	*52%*	*25%*	*23%*	*100%*

Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ներդիր 1. Logit Էկոնոմետրիկ մոդելի հետ կապված խնդիրները

Համաձայն ՀՀ ԿԲ փորձագիտական խմբի և ԳՀ աշխատանքային խմբի միջև ձեռք բերված պայմանավորվածության, ավարտական փուլի աշխատանքների շրջանակներում պետք է փորձ արվեր գնահատել դրամի արժեվորման ազդեցության պատճառները՝ օգտվելով էկոնոմետրիկ մոդելների, մասնավորապես՝ Logit մոդելի օգնությամբ:
Սակայն հարցաթերթի մանրակրկիտ ուսումնասիրությունը և մոդելի պահանջների ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ սույն հարցաթերթում պարունակվող հարցերի շրջանակներում այդ մոդելի կիրառումը նպատակահարմար չէ: Մասնավորապես, դրամի արժեվորման հետ կապված հարցը պարունակում է երեք տիպի պատասխան, մինչդեռ նշված մոդելում կախյալ փոփոխականը կարող է ընդունել երկու արժեք, իսկ երեք պատասխանները երկուսի փոխելու ընթացքում հավաստի հիմք ընտրել հնարավոր չէր:

Տվյալ ազդեցությունը դիտարկելով ձեռնարկությունների չափերի տեսակետից նկատում ենք, որ առավել մեծ բացասական ազդեցություն դիտվում է միջին և խոշոր ձեռնարկություններում: Սա բնական է, քանի որ ի տարբերություն փոքր և միկրո ձեռնարկությունների միջին և խոշոր ձեռնարկությունների ավելի մեծ մասն է կողմնորոշված դեպի արտահանումը, որոնց թվում դեպի արտահանումը կողմնորոշված ձեռնարկությունների կշիռը չնչին է:

Աղյուսակ 13. Հայկական դրամի արժեվորման ազդեցությունը ձեռնարկությունների մրցունակության վրա ըստ ձեռնարկությունների չափսերի 2007թ. երկրորդ հարցման արդյունքներով, %


		Ունեցել է բացասական ազդեցություն, %	Ազդեցություն չի ունեցել, %	Ունեցել է դրական ազդեցություն, %
1	միկրո	33.3	60.0	6.7
2	փոքր	26.3	49.1	24.6
3	միջին	87.5	12.5	0.0
4	խոշոր	59.5	32.4	8.1

Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Արտադրական հզորություններ

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ ուսումնասիրվող ձեռնարկությունների արտադրական հզորությունների օգտագործման միջին աստիճանը փոփոխություն չի կրել: Դիտարկելով այս ցուցանիշի ճյուղային կառուցվածքը նկատում ենք, որ էական շեղում նկատվել է միայն ոսկերչական արտադրության ձեռնարկություններում (նվազել է մոտ 22 տոկոսային կետով):


Գծանկար 33. Ուսումնասիրված ձեռնարկությունների արտադրական հզորությունների օգտագործման աստիճանն ըստ ճյուղերի 2006-2007թթ., %



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Նշված ցուցանիշի ուսումնասիրությունն ըստ ձեռնարկության չափերի ցույց է տալիս, որ միջին չափի ձեռնարկություններում էապես նվազել է հզորությունների օգտագործման աստիճանը: Ինչ վերաբերում է մյուս չափի ձեռնարկություններին, ապա այստեղ էական շեղումներ չեն նկատվում:

Գծանկար 34. Ուսումնասիրված ձեռնարկությունների արտադրական հզորությունների օգտագործման աստիճանը ըստ ձեռնարկության չափերի 2006-2007թթ, %



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Կառավարման համակարգ

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ գոյություն ունեն որոշակի տարբերություններ օտարերկրյա և հայրենական կապիտալով գործող ձեռնարկություններում՝ կառավարման մարմինների կազմակերպման տեսանկյունից: Առաջիններում ակնհայտ է կառավարման մարմինների ղեկավարների անկախության ավելի բարձր աստիճանը /տե՛ս Աղյուսակ 14/: Երեք հարցումների արդյունքները բավական մոտ են իրար: Միևնույն ժամանակ կարևոր է շեշտել, որ նման տարբերությունները մասամբ բացատրվում են նաև այն հանգամանքով, որ օտարերկրյա կապիտալով գործող ձեռնարկություններում մեծ տեսակարար կշիռ են կազմում խոշոր և միջին ձեռնարկությունները, որոնցում կառավարման նշված մարմիններում անկախ ղեկավարներն ավելի հաճախ են հանդիպում, քան փոքր և միկրո ձեռնարկություններում:


Աղյուսակ 14. Կառավարման մարմինների անկախությունը օտարերկրյա և հայրենական կապիտալով գործող ձեռնարկություններում 2006 և 2007 թվականներին

	Խորհրդի նախագահը և գործադիր տնօրենը անկախ անձինք են		Գործադիր տնօրենը և հիմնադիրը անկախ անձինք են	
	Առանց օտարերկրյա մասնակցության	Օտարերկրյա մասնակցությամբ	Առանց օտարերկրյա մասնակցության	Օտարերկրյա մասնակցությամբ
2006	33%	90%	22%	63%
2007 I	32%	62%	23%	59%
2007 II	22%	64%	22%	71%

Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ամենից հաճախ հիմնադիրը և գործադիր տնօրենը անկախ են խոշոր ձեռնարկություններում, այսինքն՝ դրանց 55 տոկոսում: Հարցին պատասխանած բոլոր 15 միկրո ձեռնարկություններում այդ անձինք կամ փոխկապակցված են, կամ համընկնում են:


Գծանկար 35. Անկախ հիմնադիր և գործադիր տնօրեն ունեցող ձեռնարկություններ տեսակարար կշիռները, ըստ ձեռնարկությունների չափսերի /2007 թվականի II հարցում/



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ օտարերկրյա ձեռնարկությունները իրենց խորհրդի կազմում ունեցել են ավելի շատ անկախ տնօրեններ, չնայած 2007 թվականի տվյալներով այդ տարբերությունը կրճատվել է: Ինչ վերաբերում է մինորիտար բաժնետերերի ներկայացուցիչներին, այստեղ նկատվում է հակառակ պատկերը: Այս հանգամանքը կարող է բացատրվել նրանով, որ օտարերկրյա ներդրողները հաճախ 100 տոկոսանոց վերահսկողություն են սահմանում ձեռք բերվող կազմակերպության նկատմամբ:


Գծանկար 36. Անկախ տնօրենների և մինորիտար բաժնետերերի մասնակցությունը ընկերությունների խորհուրդներում օտարերկրյա և հայրենական կապիտալով գործող ձեռնարկություններում 2006 և 2007 թվականներին /երեք հարցումների միջին ցուցանիշ/



Աղբյուրը՝ ՀՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Վերջին հարցմանը մասնակցած ձեռնարկություններից 46-ում (կամ հարցին պատասխանած ընդհանուր ձեռնարկությունների 35%-ում) առկա է ներքին աուդիտի ֆունկցիա: Նշենք, որ այս հարցին պատասխանել է ընդհանուր առմամբ 116 ձեռնարկություն: Ձեռնարկությունների չափերի մեծացման հետ մեկտեղ ավելանում է նաև ներքին աուդիտի կիրառման պրակտիկան:


Գծանկար 37. Ներքին աուդիտի ֆունկցիա ունեցող ձեռնարկությունների տեսակարար կշիռները, ըստ չափերի



Աղբյուրը՝ ՀՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Վերջապես, կառավարման համակարգի տեսանկյունից կարևոր է հասկանալ՝ արդյոք կորպորատիվ կառավարման ավելի բարձր ստանդարտները ազդում են ձեռնարկության գործառնական ցուցանիշների վրա: Այդ առումով մենք համեմատել ենք կառավարման մարմինների միջև փոխկապակցվածության տարբեր աստիճանների և ըստ ավելացված արժեքի արտադրողականության միջև կապը: Ինչպես երևում է Գծանկար 38-ից, անկախ մարմիններ ունեցող ձեռնարկություններում արտադրողականության մակարդակը միջին հաշվով գերազանցում է մնացած ձեռնարկությունների համապատասխան ցուցանիշները, չնայած տարբերություններն այնքան էլ մեծ չեն:

Գծանկար 38. Կառավարման մարմինների անկախությունը և արտադրողականության ցուցանիշները /հազ. դրամ/:




Աղբյուրը՝ ՀՄՃՈՒԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ֆինանսական ռեսուրսների կառավարում

Ուսումնասիրելով ձեռնարկությունների կողմից օգտագործվող ֆինանսական գործիքների կառուցվածքը, համադրելով այն 2006թ. հետազոտության արդյունքների հետ նկատում ենք, որ ընդհանուր առմամբ չի փոխվել ֆինանասական գործիքներից՝ որպես ռեսուրսների ներգրավման աղբյուրից օգտվողների տեսակարար կշիռը. այն տատանվում է 48-50%-ի սահմաններում:


Գծանկար 39. Ձեռնարկությունների կողմից օգտագործվող ֆինանսական գործիքների կառուցվածքը 2006-2007թթ., %



Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Դա զարմանալի չէ, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ ձեռնարկություններն իրենց ներդրումները ֆինանսավորում են առավելապես ներքին աղբյուրների, մասնավորապես, կուտակված շահույթի հաշվին: Ինչպես ցույց են տալիս BEEPS-ի տվյալները, Հայաստանի ձեռնարկություններն իրենց ներդրումների մոտ 68%-ը ֆինանսավորում են ներքին ռեսուրսների հաշվին: Հետաքրքիր է, որ այս ցուցանիշով Հայաստանը գտնվում է ավելի լավ դիրքում, քան նշված երկու խումբ երկրների միջին ցուցանիշներն են: Իսկ ֆորմալ փոխառությունների տոկոսայնությամբ՝ անհամեմատ ավելի առաջ են:


Գծանկար 40. Ներդրումների ֆինանսավորման աղբյուրները, %[30]



**** Ֆորմալ փոխառությունները ներառում են ստացված վարկերը տեղական առևտրային բանկերից, օտարերկրյա առևտրային բանկերից և պետական մասնաբաժնով բանկերից***
Աղբյուրը՝ BEEPS 2005

Դիտարկելով բանկային վարկերից օգտվող ձեռնարկությունների կառուցվածքը ճյուղային կտրվածքով՝ տեսնում ենք, որ այս ցուցանիշն անկում է ապրել պլաստմասայի արտադրության, ծխախոտի, ինչպես նաև մեխանիկական սարքավորանքի արտադրության ձեռնարկություններում:

Գծանկար 41. Ուսումնասիրված ձեռնարկությունների կողմից կիրառվող բանկային վարկերի մակարդակը ճյուղային կտրվածքով 2006-2007թթ., %



Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

[30] EBRD-World Bank Business Environment and Enterprise Performance Survey (BEEPS)

Ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը խոչընդոտող գործոնների ուսումնասիրությունն ըստ ձեռնարկությունների գնահատականների ցույց է տալիս, որ որպես հիմնական գործոն հանդես է գալիս ներգրավվող միջոցների բարձր գինը: Համեմատելով այն BEEPS-ի տվյալների հետ՝ նկատում ենք, որ ֆինանսական ռեսուրսների գինը հանդիսանում է ամենաբարձր խոչընդոտը ոչ միայն Հայաստանում, այլև ԱՊՀ մյուս երկրներում, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում (միջինում): Հետաքրքիր է, որ Հայաստանը խիստ զիջում է նշված երկրների խմբին՝ միջոցների ներգրավման բարդ ընթացակարգի ցուցանիշով: ՁՄՁՌԿՈՒ-ի արդյունքներով ստացված ցուցանիշները համընկնում են BEEPS-ի տվյալների հետ ռեսուրսների գնի և բարդ ընթացակարգերի ցուցանիշներով: Մյուս երկու ցուցանիշներով առկա են որոշակի տարբերություններ: BEEPS-ի արդյունքներից էապես տարբերվել է «այլ» ենթապատասխանը, որի մեջ ներառվում է.


ՁՄՁՌԿՈՒ՝

1. Առաջարկվող և պահանջվող ժամկետների անհամապատասխանությունը,
2. Այլ,

BEEPS՝

1. Վարկերի կարիք չունենք
2. Կարծում ենք՝ բանկը կմերժեր
3. Այլ

Գծանկար 42. Ձեռնարկությունների կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը խոչընդոտող գործոնները[31]



**Հարցումների արդյունքներ*

Աղբյուրը՝ BEEPS 2005 և ՁՄՁՌԿՈՒ

Դիտարկելով խոչընդոտները Հայաստանում ըստ ձեռնարկությունների չափերի՝ տեսնում ենք, որ բոլոր չափի ձեռնարկություններում, բացառությամբ փոքրերի, աճել է ներգրավվող միջոցների բարձր գնի՝ որպես հիմնական խոչընդոտի դերը:

[31] EBRD-World Bank Business Environment and Enterprise Performance Survey (BEEPS)


Աղյուսակ 15. Ձեռնարկությունների կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը խոչընդոտող հիմնական գործոններն ըստ ձեռնարկության չափերի, 2007թ առաջին և երկրորդ հարցումների արդյունքներով.

Չափը	Տարեթիվը	Գործոններ			
		ներգրավվող միջոցների բարձր գինը, %	*առաջարկվող և պահանջվող ժամկետների անհամապատասխանությունը, %*	*գրավի առարկայի նկատմամբ խիստ պահանջները, %*	*միջոցների ներգրավման բարդ ընթացակարգը, %*
միկրո	2007_1	50.0	16.7	22.2	11.1
	2007_2	66.7	16.7	16.7	0.0
փոքր	2007_1	50.0	16.7	33.3	0.0
	2007_2	50.0	14.3	17.9	17.9
միջին	2007_1	44.4	22.2	18.5	14.8
	2007_2	60.0	40.0	0.0	0.0
խոշոր	2007_1	42.9	28.6	28.4	0.0
	2007_2	60.0	20.0	10.0	10.0

Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Բավական հետաքրքիր է ուսումնասիրել ձեռնարկությունների կողմից կիրառվող ֆինանսական գործիքների ժամկետայնության կառուցվածքի դինամիկան: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ որոշակիորեն նվազել է միջնաժամկետ գործիքներից օգտվողների տեսակարար կշիռը:


Գծանկար 43. Ձեռնարկությունների կողմից օգտագործվող ֆինանսական գործիքների ժամկետայնություններ 2006-2007թթ., %



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ինչ վերաբերում է ձեռնարկություններին անհրաժեշտ ֆինանսական գործիքների ժամկետայնությանը, ապա այստեղ տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ՝ համեմատած նախորդ հարցման արդյունքների հետ: Մասնավորապես, էապես մեծացել է միջնաժամկետ գործիքների կարիք ունեցող ձեռնարկությունների կշիռը (մոտ 21 տոկոսային կետով):

Գծանկար 44. Ձեռնարկություններին անհրաժեշտ ֆինանսական գործիքների ժամկետայնությունը 2006-2007թթ., %



Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Բացի վերը նշվածից, ուսումնասիրվել է նաև ձեռնարկությունների կողմից օգտագործվող գործիքների փաստացի և անհրաժեշտ ժամկետայնությունների տարբերությունները: Ինչպես պատկերված է Աղյուսակ 16-ում, բոլոր տիպի ձեռնարկություններում երկարաժամկետ գործիքների նկատմամբ պահանջարկը գերազանցում է առկա գործիքների օգտագործման աստիճանին (միայն միկրո ձեռնարկություններում է, որ խզումը էական չէ): Միևնույն ժամանակ օգտագործվող կարճաժամկետ գործիքների ծավալներն ավելի շատ են, քան դրանց նկատմամբ պահանջարկը (բացառությամբ փոքր ձեռնարկությունների): Առավել մեծ խզումներ առաջանում են նաև միջնաժամկետ առկա և անհրաժեշտ գործիքների միջև միջին և միկրո ձեռնարկություններում:


Աղյուսակ 16. Ուսումնասիրված ձեռնարկությունների կողմից օգտագործվող և անհրաժեշտ գործիքների ժամկետայնությունները, %

Չափը	Առկա/անհրաժեշտ	Կարճաժամկետ, %	Միջնաժամկետ, %	Երկարաժամկետ, %
միկրո	անհրաժեշտ	0.0	42.8	57.1
	առկա	25.0	25.0	50.0
փոքր	անհրաժեշտ	11.1	46.3	42.5
	առկա	38.2	41.2	20.6
միջին	անհրաժեշտ	14.2	42.8	42.8
	առկա	80.0	0.0	20.0
խոշոր	անհրաժեշտ	6.4	41.9	51.6
	առկա	43.5	43.5	13.0

Աղբյուրը՝ ՁՄՁՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

Ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսների ուսումնասիրության հաջորդ հատվածը վերաբերում է ուսումնասիրվող ձեռնարկությունների ազատ ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման գործիքների և ժամկետայնության վերլուծությանը: Մասնավորապես, ինչպես երևում է Գծանկար 45-ից, ինչպես և նախորդ հարցման ժամանակ, ձեռնարկությունների մոտ 18%-ը տեղաբաշխում է իր ազատ ֆինանսական միջոցները որևիցե ֆինանսական գործիքում: Առանձնահատուկ փոփոխություններ ֆինանսական գործիքների առումով չեն արձանագրվել, բացառությամբ կորպորատիվ պարտատոմսեր ենթաբաժնի, որն աճել է 0.9 տոկոսային կետով:

Գծանկար 45. Ձեռնարկությունների կողմից ազատ ռեսուրսների տեղաբաշխման գործիքները 2006-2007թթ., %



Աղբյուրը՝ ՁՄՖՌԿՈՒ շրջանակներում իրականացված հարցումներ

«Չենք տեղաբաշխում» տարբերակը ներառում է նաև այն ձեռնարկություններին, որոնք իրենց ազատ դրամական միջոցները պահում են բանկերում՝ հաշվարկային հաշիվների վրա:

Եզրակացություն

Ճյուղային մրցունակության տեսանկյունից գնահատելով ուսումնասիրված ճյուղերի /խոշորացված ճյուղերի/ արտադրողականություններն ու դրանց դինամիկան կարելի է վկայել, որ 8 ճյուղերից և ենթաճյուղերից երկու տարի անընդմեջ արտադրողականության աճ է գրանցվել 5 ճյուղում, իսկ կրճատում միայն մեկ՝ ծխախոտի արտադրության ճյուղերում: Բացարձակ ցուցանիշներով գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության ճյուղերը ընդգծված առավելություն ունեն մնացած ձեռնարկությունների նկատմամբ:

Ուսումնասիրված ձեռնարկություններում միավոր աշխատուժի ծախսն ամենից բարձրն է ոսկերչական արտադրության ճյուղերում: Համաձայն ներկայացված տվյալների այդ ճյուղում գործող ձեռնարկություններն աշխատել են վնասով կամ գրեթե զրոյական շահույթով: Ընդհանուր առմամբ 2005-2007թթ. ընթացքում սույն ցուցանիշը դիտարկված խոշորացված 8 ճյուղերից 4-ում նվազել է, 3-ում՝ ավելացել և մեկում մնացել անփոփոխ:

Միջին աշխատավարձի, արտադրողականության և միավոր աշխատուժի աճի տեպերի միջև կապը վերլուծելով՝ պարզ է դառնում, որ տպագրական գործի, մեխանիկական սարքավորանքի, տրիկոտաժի արտադրության և սննդամթերքի արտադրության ճյուղերում արտադրողականությունը ավելի արագ տեմպերով է աճել, քան աշխատավարձի ծախսերը, ինչն իր արտահայտությունն է գտել միավոր աշխատուժի ծախսի նվազող ցուցանիշում: Քիմիական և պլաստամասե իրերի և ոսկերչական արտադրանքի թողարկման ճյուղերում փաստորեն արտադրողականության աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է եղել աշխատավարձի աճով և միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշը այստեղ մնացել է անփոփոխ: Արդյունավետության բարելավման տեսանկյունից ակնհայտ հետնապահ են գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության ճյուղերը, որոնցում աշխատավարձի մակարդակի զգալի աճը զուգորդվել է արտադրողականության կրճատումով:

Շահութաբերության միջին մակարդակն ըստ ուսումնասիրված ճյուղերի 2007թ. կազմել է 10%: Խոշորացված 8 ճյուղերից 3-ում 2007 թվականին նախորդ տարվա նկատմամբ գրանցվել է շահութաբերության մակարդակի աճ: Ընդ որում այն ճյուղերում, որտեղ գրանցվել է միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշի աճ 2005-2007թթ., այդ ճյուղերում շահութաբերությունը կրճատվել է կամ մնացել է նույն մակարդակին, և հակառակը /բացառությամբ տպագրական գործի/: Սա տրամաբանական է, քանի որ միավոր աշխատուժի ծախսի կրճատումը պետք է ուղեկցվի շահութաբերության մակարդակի աճով /ավելացված արժեքի կառուցվածքում մեծանում է շահույթի տեսակարար կշիռը և կրճատվում աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսերի կշիռը/:

Խոշոր ձեռնարկությունները շարունակում են մնալ ավելի արտադրողական, քան մնացածները, չնայած գունավոր մետաղները հաշվարկից հանելու դեպքում, տարբերությունն արդեն այդքան կտրուկ չէ:

Միջին հաշվով արտահանող ձեռնարկությունների արտադրողականությունը 30%-ով բարձր է ոչ արտահանողներից /գունավոր մետաղներ արտադրողները դուրս են հաշվարկից/: Գրեթե նույնքան ավելի արտադրողական են հումք ներմուծողները, համեմատած տեղական հումք օգտագործողների հետ:

Առավել մեծ թվով ներքին մրցակիցներ ունեն միկրո ձեռնարկությունները: Ժամանակի ընթացքում /երեք հարցումների/ նվազել է ընդհանրապես մրցակից չունեցող ձեռնարկությունների թիվը, և ավելացել 10 և ավելի մրցակից ունեցողների թիվը: Ընդ որում, որքան ավելի մեծ են ձեռնարկությունների չափերը, այնքան ավելանում է ընդհանրապես մրցակից չունեցողների թիվը: Մինչև 3 մրցակից ունեցող ձեռնարկությունների միջին արտադրողականությունը գրեթե 2 անգամ գերազանցում է 4 և ավելի ներքին մրցակից ունեցողների արտադրողականության մակարդակները: Միևնույն ժամանակ ձեռնարկությունների չափերի մեծացմանը զուգահեռ կրճատվում է 4 և ավելի մրցակից ունեցող ձեռնարկությունների թիվը: Այսինքն՝ առավել արտադրողական են խոշոր ձեռնարկությունները, որոնք ունեն ավելի փոքր թվով մրցակիցներ:

Ե՛վ արտահանողները, և՛ թե ներմուծողների հետ մրցակցողները, որոնք ըստ էության մրցակցում են արտաքին արտադրողի հետ, բավական մոտ գնահատականներ են տվել համապատասխանաբար արտահանելիս և ներմուծողների հետ մրցակցելիս խոչընդոտների վերաբերյալ: Կարևոր է նշել, որ երեք հարցումների արդյունքներով արտահանողների համար հիմնական խոչընդոտ համարվող արտադրանքի անծանոթ լինելու գործոնը զիջել է իր տեղը արտադրանքի գնին: Նման փոփոխության պատճառ կարող է լինել գնի վերաբերյալ հարցի մանրամասնեցումը հարցաթերթում /մասնավորապես՝ ՀՀ դրամի արժեվորման հիմնախնդրի ներկայացումը/: Ներկայումս և՛ ներմուծողների հետ պայքարողների, և՛ արտահանողների համար առաջնային խոչընդոտը արտադրանքի գինն է: Իսկ որպես ամենաթույլ ազդեցություն ունեցող գործոն նշվում է իրենց կողմից թողարկվող արտադրանքի որակը: Նման գնահատականը կարող է լուրջ խոչընդոտ լինել ձեռնարկությունների հետագա արտաքին գործունեության ծավալման համար, քանի որ, օրինակ, ԵՄ հետ առևտրի հիմնական սահմանափակիչ գործոն հանդիսանում է ապրանքների որակական հատկանիշների նկատմամբ խիստ պահանջները /մասնավորապես՝ սննդի/:

Քիմիական նյութերի /բացառությամբ Նախիտի/, կահույքի և ծխախոտի արտադրության բոլոր ձեռնարկությունները մրցակցում են ներմուծողների հետ: Վերջին հարցման արդյունքներով ներմուծողների հետ ընդհանրապես չմրցակցող ճյուղ չի մնացել: Մեծամասամբ, երբ ձեռնարկությունները նշում են, որ մրցակցում են ներմուծողների հետ, նրանք կարծում են, որ ներմուծողներին է պատկանում շուկայի զգալի մասը:

Ներմուծվող հումքի օգտագործման պատճառները վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ հիմնական պատճառը համանման հումքի բացակայությունն է (62%): Հարցվածների քառորդ մասը ներմուծում է հումք, քանի որ այն ավելի բարձր որակի է, քան տեղականը և ամենափոքր թիվը՝ 14% հումք ներմուծելու մեջ գնային առավելություններ է տեսնում:

Արտահանող ձեռնարկությունների 60 տոկոսը, անկախ այն հանգամանքից ներմուծում է հումք, թե չի ներմուծում, բացասական է գնահատել դրամի արժեվորումն իր մրցակցային դիրքի վրա: Հետաքրքիր է այն, որ 23 հումք ներմուծող և չարտահանող ձեռնարկությունների միայն 35%-ն է նշել, որ արժեվորումն ունեցել է դրական ազդեցություն, և նույնքան ձեռնարկություն էլ գտնում է, որ արժեվորումը բացասական դեր է խաղացել: Սա կարող է պայմանավորված լինել այն փաստով, որ այդ ձեռնարկությունները մրցակցում են ներմուծողների հետ: Մասնավորապես այս խմբում ընդգրկված կահույքի, քիմ. արտադրության և մեխ. սարքավորանքի արտադրության մի շարք ձեռնարկություններ իսկապես մրցակցում են ներմուծողների հետ:

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ գոյություն ունեն որոշակի տարբերություններ օտարերկրյա և հայրենական կապիտալով գործող ձեռնարկություններում՝ կառավարման մարմինների կազմակերպման տեսանկյունից: Առաջիններում նկատելի է

կառավարման մարմինների ղեկավարների անկախության ավելի բարձր աստիճանը: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ օտարերկրյա ձեռնարկություններն իրենց խորհրդի կազմում ունեցել են ավելի շատ անկախ տնօրեններ, չնայած 2007 թվականի տվյալներով այդ տարբերությունը կրճատվել է: Անկախ մարմիններ /անկախ գործադիր տնօրեն և հիմնադիր, անկախ գործադիր տնօրեն և Խորհրդի նախագահ/ ունեցող ձեռնարկություններում արտադրողականության մակարդակը միջին հաշվով գերազանցում է մնացած ձեռնարկությունների համապատասխան ցուցանիշները, չնայած տարբերություններն այնքան էլ նշանակալի չեն:

Ամփոփելով ուսումնասիրությունը ֆինանսական ռեսուրսների կառավարման մասով անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված ձեռնարկությունների մեծ մասը (մոտ 64%-ը) օգտվում են ֆինանսավորման որոշակի արտաքին աղբյուրներից: Ընդ որում այդ ձեռնարկությունների գերակշիռ բաժինը (48%) օգտվում են բանկային վարկերից: Մնացած աղբյուրները չնչին դեր են խաղում ձեռնարկությունների գործունեության ֆինանսավորման մեջ: Սակայն կարելի եզրակացնել, որ այդ վարկերն ուղղվում են հիմնականում շրջանառու կապիտալի համալրմանը, այն է՝ ընթացիկ գործունեության ֆինանսավորմանը, քանի որ, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները հիմնական կապիտալում ներդրումների մոտ 68%-ը ֆինանսավորվում են ներքին ռեսուրսների/ կուտակված շահույթի հաշվին: Ընդ որում Հայաստանը ֆորմալ փոխառու աղբյուրների օգտագործման աստիճանով ավելի առաջ է ԱՊՀ և Արեվելյան եվրապայի ու Կենտրոնական Ասիայի երկրները միջինում վերցրած: Որպես ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը խոչընդոտող հիմնական գործոն հանդիսանում է ֆինանսական ռեսուրսների գինը:

Պորտերի Աղամանդ

Ձեռնարկությունների մրցունակության և ֆինանսական ռեսուրսների կառավարման ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվել իրականացնել որոշակի ընտրված ճյուղերի մեջ մտնող ձեռնարկությունների միջճյուղային համեմատություններ՝ ելնելով Պորտերի Աղամանդի մեթոդաբանության հիմնական դրույթներից: Ընտրված մեթոդաբանությունը հիմնված է ՌՀՊՀ հետազոտական խմբի և ԿԲ փորձագիտական խմբի համատեղ քննարկումների արդյունքների վրա: Վերլուծության համար ընտրվել են 4 խումբ գործոններ, որոնց գնահատման համար օգտագործվել են Հիմնական հարցաթերթի մեջ ընդգրկված հարցերը: Այդ գործոնների խմբերն են.

Արտադրության գործոններ

- Որակյալ աշխատուժի առկայություն
- Որակյալ աշխատուժի աշխատավարձ
- Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին
- Արտադրական տեխնոլոգիաների որակը
- Արտադրական տեխնոլոգիաների ծավալ
- Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին
- Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնություն

Պահանջարկի պայմաններ

- Տեղական շուկայի ծավալների սահմանափակություն
- Շուկայական տեղեկատվության մատչելիություն
- Գնորդների կենտրոնացվածության աստիճան

Հարակից և աջակից ոլորտներ

- Ֆինանսական կազմակերպությունների ներկայիս մակարդակ
- Տրանսպորտային ընկերությունների ներկայիս մակարդակ
- Փաթեթավորման նյութերի մատակարար ընկերությունների ներկայիս մակարդակ
- Էներգիա մատակարարող ընկերությունների ներկայիս մակարդակ

Մրցակցային միջավայրը և ֆիրմայի ռազմավարությունը

- մրցակիցների թիվ
- բիզնես խմբերի առկայություն
- ներմուծողների հետ մրցակցության աստիճան
- շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը
- ֆինանսական պլանավորում
- փոխարինող ապրանքների առկայություն

Յուրաքանչյուր գործոնին տրվում է գնահատական (+ կամ -) կախված նրանից, թե տվյալ ճյուղում այդ գործոնն ինչպես է ազդում այդ ճյուղի ընդհանուր մրցունակության վրա՝ ելնելով հարցին պատասխանած ձեռնարկությունների տեսակարար կշռից: Վերը նշված հարցերի հիման վրա նաև կառուցվել է Պորտերի Աղամանդի գծապատկերը՝ հետևյալ մեթոդաբանությամբ.

յուրաքանչյուր խմբի մեջ մտնող բոլոր գործոնների դրական լինելու դեպքում ստացվում է լավագույն ադամանդ, որին համապատասխանում է 100% արժեքը: Ադամանդը կառուցելիս, տվյալ խմբի հարցերի դրական պատասխանների քանակը հարաբերվել է այդ խմբի հարցերի ընդհանուր քանակի վրա: Արդյունքը տոկոսային արտահայտությամբ դարձել է տվյալ ճյուղի Ադամանդի մեկ կողմը:

Կաթնամթերքի արտադրություն


Ճյուղի հիմնական բնութագրիչները

Ուսումնասիրված ձեռնարկությունների քանակը[32]	11
Ուսումնասիրված ձեռնարկությունների ծածկույթը[33], %	17.9%
Արտադրողականությունը	
ըստ հասույթի[34]	4,612 դրամ
ըստ ավելացված արժեքի	1,522 դրամ
միավոր աշխատուժի ծախս	0.18
Շահութաբերության միջին մակարդակ, %	8%
Գործունեության կողմնորոշումը	ներքին շուկա
Արտահանման կշիռն ընդհանուր արտադրության մեջ	-
Արտահանման հիմնական երկիրը (ները)	-
Ներմուծողների հետ մրցակցության մակարդակ	Ցածր
Ճյուղ մուտք գործելու հիմնական արգելքը	Թանկարժեք տեխնոլոգիաներ
Հիմնական հումքի ձեռք բերման աղբյուրը	տեղական/օտարերկրյա
Դրամի արժեվորման ազդեցությունը	հիմնականում ազդեցություն չի ունեցել
Մատակարարների կենտրոնացվածությունը	Կենտրոնացվածություն չկա
Աշխատողների միջին ցուցակային թիվը[35], մարդ	97
Արտադրական հզորությունների օգտագործման միջին աստիճանը	59.1%
Բանկային վարկերից օգտվելու մակարդակը	բարձր (7 ձեռնարկություն 11-ից)
Օգտագործվող հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	հիմնականում միջնաժամկետ
Անհրաժեշտ հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	հիմնականում միջնաժամկետ
Ֆինանսական ռեսուրսներից օգտվելուն խոչընդոտող հիմնական	-

[32] ըստ 2007թ. երկրորդ հարցման արդյունքների
[33] ըստ արտադրության ծավալների
[34] 2007թ. գներով
[35] միջինը՝ մեկ ձեռնարկության կտրվածքով

գործոնը	
Բնականոն գործունեությանը խոչընդոտող հիմնական մարմինը	Հարկային Պետական Ծառայություն

Կաթնամթերքի արտադրության Աղամանդ



Արտադրության գործոններ	+/-
Որակյալ աշխատուժի առկայություն	+
Որակյալ աշխատուժի աշխատավարձ	+
Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին	+
Արտադրական տեխնոլոգիաների որակը	+
Արտադրական տեխնոլոգիաների ծավալ	+
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին	-
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնություն	-
Պահանջարկի պայմաններ	**+/-**
Տեղական շուկայի ծավալների սահմանափակություն	-
Շուկայական տեղեկատվության մատչելիություն	+
Գնորդների կենտրոնացվածության աստիճան	+
Հարակից և աջակից ոլորտներ	**+/-**
Ֆինանսական կազմակերպություններ	+
Տրանսպորտային ընկերություններ	+
Փաթեթավորման նյութերի մատակարար ընկերություններ	+
Էներգիա մատակարարող ընկերություններ	+
Մրցակցային միջավայրը և ֆիրմայի ռազմավարությունը	**+/-**
Մրցակիցների թիվ	+
Բիզնես խմբերի առկայություն	+

Ներմուծողների հետ մրցակցության աստիճան	+
Շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը	+
Ֆինանսական պլանավորում	-
Փոխարինող ապրանքների առկայություն	-

Արտադրության Գործոններ

Ուսումնասիրելով կաթնամթերքի ճյուղի ձեռնարկությունների տրված գնահատականներն իրենց արտադրության գործոնների վերաբերյալ, տեսնում ենք, որ այս ճյուղում ուսումնասիրված արտադրական 4 գործոններից միայն մեկն է ընդհանուր առմամբ խոչընդոտում ձեռնարկությունների մրցունակությանը, այն է ֆինանսական ռեսուրսները: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ չնայած ուսումնասիրված 11 ձեռնարկությունից 7-ը օգտվում են բանկային վարկերից, այնուամենայնիվ ձեռնարկությունների գերակշիռ մասը՝ մոտ 82%-ը նշել են, որ ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գինը խոչընդոտում է իրենց մրցունակությանը: Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնության առումով նման պատկեր է ձևավորվել ձեռնարկությունների մոտ 64%-ի մոտ:

Մնացած գործոնները, այն է՝ որակյալ աշխատուժի պակասը և գինը (աշխատավարձը), օգտագործվող հիմնական հումքի գինը, և օգտագործվող սարքավորումների որակը և քանակը ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում ձեռնարկությունների մրցունակությանը:

Պահանջարկի պայմաններ

Անդրադառնալով Պահանջարկի պայմաններին, շուկայական տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև գնորդների կենտրոնացվածությունը՝ կարող ենք նշել, որ դրանք չեն խոչընդոտում ձեռնարկությունների մրցունակությանը: Գնորդների կենտրոնացվածության առումով անհրաժեշտ է նշել, որ կաթնամթերքի արտադրության ճյուղը համարվում է առավել ապակենտրոնացված գնորդների կազմ ունեցող ճյուղերից մեկը (11 ձեռնարկություններից 9-ը նշել են, որ ունեն բազմաթիվ գնորդներ):

Պահանջարկի պայմաններից միայն տեղական շուկայի ծավալների սահմանափակությունն է որոշակիորեն խոչընդոտում իրենց մրցունակությանը: Չնայած դրան, տվյալ ճյուղն իր արտադրանքը վաճառում է բացառապես ներքին շուկայում և դեռևս չկան արտահանման միտումներ (երկու ձեռնարկություն նշել են, որ հազվադեպ արտահանում են, սակայն դա կատարվում է հատուկ պատվերներով և չնչին տեսակարար կշիռ է կազմում իրենց արտադրանքի մեջ):

Հարակից և աջակից ոլորտներ

Հարակից և աջակից ոլորտների՝ ձեռնարկությունների մրցունակության վրա ազդեցության տեսանկյունից ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆինանսական կազմակերպությունների, տրանսպորտային, փաթեթավորման նյութեր մատակարարող, ինչպես նաև էներգիա մատակարարող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների ներկայիս որակը չի խոչընդոտում կաթնամթերքի ճյուղի ձեռնարկությունների մրցունակությանը:

Մրցակցային միջավայր և Ֆիրմայի ռազմավարություն

Մրցակցային միջավայրի ուսումնասիրությունը սկսվում է մրցակիցների թվի ուսումնասիրությամբ: Համաձայն կաթնամթերքի արտադրության ձեռնարկությունների գնահատականների՝ տվյալ ճյուղում իրենց ձեռնարկությունների համար հիմնականում կան 3-ից ավելի մրցակից ընկերություններ, որը մեր կողմից դրական է գնահատվում տվյալ ճյուղի ձեռնարկությունների համար: Սակայն միևնույն ժամանակ այս ճյուղում առկա են որոշակի

բիզնես խմբեր (հարցվողների 45%-ի գնահատականներով), որը խոչընդոտում է իրենց մրցունակությանը: Ներմուծողների հետ մրցակցության տեսանկյունից, կաթնամթերքների արտադրության ճյուղը գտնվում է բավականին լավ դիրքում, քանի որ, դատելով ձեռնարկությունների գնահատականներից, նրանք չեն հանդիսանում մրցակիցներ տեղական արտադրողների համար և տիրապետում են շուկայի չնչին մասը:
Բացի այդ, ըստ մեր գնահատականների՝ մրցակցային միջավայրի վրա անուղղակի ազդեցություն ունի ձեռնարկության կողմից ֆինանսական պլանավորման իրականացումը (հիմնականում՝ միջին և երկարաժամկետ ֆինանսական պլանի կազմումը)՝ որպես ռազմավարական պլանավորման հիմնական և անքակտելի մաս: Այս տեսանկյունից կաթնամթերքի արտադրությունը գտնվում է բավականին խոցելի դիրքում, քանի որ 11 ձեռնարկություններից միայն 3-ն են կազմում ֆինանսական պլան 1 տարուց ավելի ժամկետով, չնայած որ ձեռնարկությունների մոտ 45%-ը իրականացնում է կազմած ֆինանսական պլանը օգտագործում է կապիտալ ծախսերի պլանավորման համար:
Եվ վերջապես, մեր կողմից դիտարկվել է փոխարինող ապրանքների առկայությունը, որպես ճյուղի մրցունակության վրա ազդող գործոն: Այս տեսանկյունից, 11 ձեռնարկությունններից 6-ը նշել են շուկայում իրենց արտադրատեսակներին փոխարինող ապրանքների առկայության մասին, որը մեր կողմից գնահատվում է որպես ճյուղի մրցունակությանը նպաստող գործոն:


Այլ

Կաթնամթերքի արտադրության ճյուղ մուտք գործելու տեսանկյունից՝ համաձայն ձեռնարկությունների գնահատականների հիմնականում գոյություն ունի մեկ խոչընդոտ՝ թանկարժեք տեխնոլոգիաների անհրաժեշտությունը (այս պատասխանը նշել են ձեռնարկությունների 72.7%-ը): Մնացած նշված տարբերակները, այդ թվում՝ ճյուղային առանձնահատկություններով պայմանավորված կապիտալի մեծ ծավալները, թանկարժեք լիցենզիայի պահանջը, կառավարչական կադրերի և բարձրակարգ մասնագետների բացակայությունը էապես չեն խոչընդոտում կաթնամթերքի ճյուղ մուտք գործելուն:
Բացի այդ, դրամի արժեվորումը տվյալ ճյուղի վրա ընդհանուր առմամբ ազդեցություն չի ունեցել (մեկական ձեռնարկություն նշել են բացասական և դրական ազդեցության մասին, իսկ մնացածը՝ ազդցություն չի ունեցել), որը ամենայն հավանականությամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ ճյուղի ձեռնարկությունները չունեն կողմնորոշում դեպի արտահանում և, միևնույն ժամանակ, օգտագործում են տեղական հումք:

Մեխանիկական սարքավորանքի արտադրություն

Ճյուղի հիմնական բնութագրիչները	
Ուսումնասիրված ձեռնարկությունների քանակը	15
Ուսումնասիրված ձեռնարկությունների ծածկույթը, %	33.5%
Արտադրողականությունը	
ըստ հաստյքի, դրամ	3,204
ըստ ավելացված արժեքի, դրամ	808
միավոր աշխատուժի ծախս	0.26
Շահութաբերության միջին մակարդակ, %	8%
Գործունեության կողմնորոշումը	ներքին ու արտաքին շուկաներ
Արտահանման կշիռն ընդհանուր արտադրության մեջ, %	45.8%
Արտահանման հիմնական երկիրը(ները)	Ռուսաստան, Ղազախստան
Ներմուծողների հետ մրցակցության մակարդակ	ցածր
Ճյուղ մուտք գործելու հիմնական արգելքը	թանկարժեք տեխնոլոգիաներ
Հիմնական հումքի ձեռք բերման աղբյուրը	տեղական / օտարերկրյա
Դրամի արժեվորման ազդեցությունը	բացասական
Մատակարարների կենտրոնացվածությունը	կենտրոնացված
Աշխատողների միջին ցուցակային թիվը, մարդ	64
Արտադրական հզորությունների օգտագործման միջին աստիճանը, %	36.9%
Բանկային վարկերից օգտվելու մակարդակը	խիստ ցածր
Օգտագործվող հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	-
Անհրաժեշտ հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	միջին և երկարաժամկետ
Ֆինանսական ռեսուրսներից օգտվելուն խոչընդոտող հիմնական գործոնը	ֆին. ռեսուրսների գինը
Բնականոն գործունեությանը խոչընդոտող հիմնական մարմինը	Հարկային Պետական Ծառայություն / Աշխատանքի Պետական Տեսչություն

Մեխանիկական սարքավորանքի արտադրության Ադամանդ



Արտադրության գործոններ	+/-
Որակյալ աշխատուժի առկայություն	-
Որակյալ աշխատուժի աշխատավարձ	+
Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին	-
Արտադրական տեխնոլոգիաների որակը	+
Արտադրական տեխնոլոգիաների ծավալ	+
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին	-
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնություն	-
Պահանջարկի պայմանները	**+/-**
Տեղական շուկայի ծավալների սահմանափակություն	-
Շուկայական տեղեկատվության մատչելիություն	+
Գնորդների կենտրոնացվածության աստիճան	+
Հարակից և աջակից ոլորտներ	**+/-**
Ֆինանսական կազմակերպություններ	+
Տրանսպորտային ընկերություններ	+
Փաթեթավորման նյութերի մատակարար ընկերություններ	+
Էներգիա մատակարարող ընկերություններ	+
Մրցակցային միջավայրը և ֆիրմայի ռազմավարությունը	**+/-**
Մրցակիցների թիվ	-
Բիզնես խմբերի առկայություն	+
Ներմուծողների հետ մրցակցության աստիճան	+
Շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը	+
Ֆինանսական պլանավորում	-
Փոխարինող ապրանքների առկայություն	+

Արտադրության գործոններ

Այս ճյուղում, ի տարբերություն, նախորդի, բացի ֆինանսական ռեսուրսների գնից և ժամկետայնությունից, մրցունակությանը խոչընդոտում են նաև որակյալ աշխատուժի բացակայությունը աշխատանքի շուկայում, ինչպես նաև օգտագործվող հիմնական հումքի գինը: Այս առումով, հետաքրքրական է, որ ուսումնասիրված 15 ձեռնարկություններից 7-ը օգտագործում են ներկրվող հումք (մեծամասամբ՝ Հայաստանում այդպիսի արտադրանք չլինելու պատճառով): Միևնույն ժամանակ, նշված 7 ձեռնարկություններից 5-ի վրա դրամի արևելորումը ունեցել է բացասական ազդեցություն: Սա կարելի բացատրել նրանով, որ տվյալ ձեռնարկությունները հիմնականում արտահանում են իրենց արտադրանքի որոշակի մասը: Բացի հումք ներկրողներից, գոյություն ունեն նաև տեղական հումք օգտագործող ձեռնարկություններ, որոնց համար հիմնական հումքի գինը նույնպես հանդիսանում է խոչընդոտ:

Հաջորդ խոչընդոտը ֆինանսական ռեսուրսների գինն ու ժամկետայնությունն է: Ընդ որում, ժամկետայնությունը հանդիսանում է առավել մեծ խոչընդոտ, քան գինը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված 15 ձեռնարկություններից միայն 3-ն են օգտագործում բանկային վարկեր: Միևնույն ժամանակ ձեռնարկությունների 2/3-ը նշել են, որ ունեն միջնաժամկետ և երկարաժամկետ ռեսուրսների կարիք: Կարելի էր ենթադրել, որ այդ ռեսուրսներն անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումների, այն է՝ նոր սարքավորումների ձեռք բերման համար: Սակայն միևնույն ժամանակ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրենց կողմից արդեն իսկ օգտագործվող սարքավորումների որակը և ծավալը ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում իրենց մրցունակությանը: Սա կարելի է բացատրել նրանով, որ օգտագործվող սարքավորումները, իրոք, բավարար են տվյալ արտադրանքը արտադրելու և շուկայում իրենց գրաված տեղը պահելու համար: Սակայն միևնույն ժամանակ ձեռնարկությունները ցանկանում են ընդլայնել իրենց գործունեությունը՝ արտադրանքի դիվերսիֆիկացիայի շնորհիվ, որոնց համար արդեն անհրաժեշտ են նոր տեխնոլոգիաներ:

Պահանջարկի պայմաններ

Պահանջարկի պայմաններից, ինչպես և կաթնամթերքի արտադրության ճյուղում, միակ խոչընդոտը տեղական շուկայի ծավալների սահմանափակությունն է: Սակայն, այս անգամ, ուսումնասիրված 15 ձեռնարկություններից 9-ը արտահանում են իրենց արտադրանքը, և բացի այդ, ճյուղի ընդհանուր արտադրանքի 45%-ը սպառվում է օտարերկրյա շուկաներում (Ռուսաստան, ԵՄ երկրներ, Ղազախստան): Դա, ինչպես արդեն նշել ենք, հանգեցրել է նրան, որ դրամի արեվորումը բացասաբար է անդրադարձել ձեռնարկությունների 66.7%-ի մրցունակության վրա:

Հարակից և աջակից ոլորտներ

Հարակից և աջակից ոլորտների՝ ձեռնարկությունների մրցունակության վրա ազդեցության տեսանկյունից, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆինանսական կազմակերպությունների, տրանսպորտային, փաթեթավորման նյութեր մատակարարող, ինչպես նաև էներգիա մատակարարող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների ներկայիս որակը չի խոչընդոտում մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղի ձեռնարկությունների մրցունակությանը:

Մրցակցային միջավայր և Ֆիրմայի ռազմավարություն

Մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղի ձեռնարկությունների հիմնական մասը (80%-ը) գտնում են, որ իրենք կամ չունեն մրցակից կամ մրցակիցների թիվը սահմանափակվում է


3-ով: Դա, ըստ իրենց գնահատականների, հիմնականում պայմանավորված է իրենց կողմից արտադրված արտադրատեսակի յուրահատկությամբ: Դրա հետ կապված, ձեռնարկությունների փոքր մասն է գտնում, որ տեղական շուկայում գոյություն ունեն իրենց արտադրատեսակներին փոխարինող ապրանքներ: Սակայն միևնույն ժամանակ, տվյալ ճյուղում բացակայում են բիզնես խմբերը, ինչպես նաև բավականին թույլ է ներմուծողների հետ մրցակցության աստիճանը (հետևաբար՝ փոքր է նաև շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը):

Ֆիրմայի ռազմավարական պլանավորման տեսանկյունից, ուսումնասիրված 15 ձեռնարկությունների 87%-ը կամ չի իրականացնում ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում, կամ իրականացնում է մինչև 1 տարի ժամկետով, որը մեր կողմից դիտվում է որպես բացասական գործոն՝ ֆիրմայի մրցունակության տեսանկյունից:

Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն

Ճյուղի հիմնական բնութագրիչները	
Ուսումնասիրված ձեռնարկությունների քանակը	13
Ուսումնասիրված ձեռնարկությունների ծածկույթը, %	71.9%
Արտադրողականությունը	
ըստ հաստույթի, դրամ	3,690
ըստ ավելացված արժեքի, դրամ	786
միավոր աշխատուժի ծախս	0.26
Շահութաբերության միջին մակարդակ, %	11%
Գործունեության կողմնորոշումը	Հիմնականում ներքին շուկա
Արտահանման կշիռն ընդհանուր արտադրության մեջ, %	26.7%
Արտահանման հիմնական երկիրը(ները)	-
Ներմուծողների հետ մրցակցության մակարդակ	բարձր
Ճյուղ մուտք գործելու հիմնական արգելքը	խոշոր արգելքներ չկան
Հիմնական հումքի ձեռք բերման աղբյուրը	օտարերկրյա
Դրամի արժեվորման ազդեցությունը	բացասական
Մատակարարների կենտրոնացվածությունը	թույլ
Աշխատողների միջին ցուցակային թիվը, մարդ	123
Արտադրական հզորությունների օգտագործման միջին աստիճանը, %	54.2%
Բանկային վարկերից օգտվելու մակարդակը	բարձր
Օգտագործվող հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	կարճաժամկետ
Անհրաժեշտ հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	միջին և երկարաժամկետ
Ֆինանսական ռեսուրսներից օգտվելուն խոչընդոտող հիմնական գործոնը	ֆին. ռեսուրսների գինը
Բնականոն գործունեությանը խոչընդոտող հիմնական մարմինը	Հարկային Պետական Ծառայություն / Մաքսային Պետական Կոմիտե

Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության Աղամանդ



Արտադրության գործոններ	+/-
Որակյալ աշխատուժի առկայություն	+
Որակյալ աշխատուժի աշխատավարձ	+
Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին	-
Արտադրական տեխնոլոգիաների որակը	+
Արտադրական տեխնոլոգիաների ծավալ	+
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին	-
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնություն	-
Պահանջարկի պայմաններ	**+/-**
Տեղական շուկայի ծավալների սահմանափակություն	-
Շուկայական տեղեկատվության մատչելիություն	+
Գնորդների կենտրոնացվածության աստիճան	-
Հարակից և աջակից ոլորտներ	**+/-**
Ֆինանսական կազմակերպություններ	+
Տրանսպորտային ընկերություններ	+
Փաթեթավորման նյութերի մատակարար ընկերություններ	+
Էներգիա մատակարարող ընկերություններ	+
Մրցակցային միջավայրը և ֆիրմայի ռազմավարությունը	**+/-**
Մրցակիցների թիվ	-
Բիզնես խմբերի առկայություն	+
Ներմուծողների հետ մրցակցության աստիճան	-
Շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը	-
Ֆինանսական պլանավորում	-
Փոխարինող ապրանքների առկայություն	-

Արտադրության Գործոններ

Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության ճյուղի արտադրական գործոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 4 խումբ գործոններից 2-ը՝ աշխատուժը և տեխնոլոգիաները չեն խոչընդոտում նրա մրցունակությանը:

Ձեռնարկությունների 77%-ը նշել են, որ հիմնական հումքի գինը հանդիսանում է հիմնական և զգալի խոչընդոտ իրենց մրցունակությանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսումնասիրված 13 ձեռնարկություններից 11-ը օգտվում են օտարերկրյա հումքից (հիմնականում Հայաստանում այդպիսի արտադրանք չարտադրվելու պատճառով): Միևնույն ժամանակ, այս ճյուղի արտադրանքի արտահանումը կազմում է ճյուղի համախառն արտադրանքի 26.7%-ը: Չնայած դրան, 13-ից 9-ը նշել են, որ հայկական դրամի արժեվորումը բացասաբար է անդրադարձել իրենց մրցունակության վրա: Սա կարող է ունենալ միայն մեկ բացատրություն, ճյուղում առկա է բավականին մեծ մրցակցություն ներմուծող ընկերությունների հետ (ձեռնարկությունների 62%-ը նշել են այդ տարբերակը): Ընդ որում, ըստ իրենց գնահատականների, ներմուծողներին է պատկանում շուկայի գերակշիռ մասը:

Այս ճյուղում ևս ֆինանսական ռեսուրսները հանդիսանում են խնդրահարույց գործոն ձեռնարկությունների համար, չնայած որ ձեռնարկությունների մոտ 70%-ը օգտվում է բանկային վարկերից: Ընդ որում գինը և ժամկետայնությունը ձեռնարկությունների կողմից ստացել են հավասար գնահատականներ:

Պահանջարկի պայմաններ

Այս անգամ ևս շուկայական տեղեկատվության մատչելիությունը չի խոչընդոտում ուսումնասիրված ձեռնարկությունների մրցունակությանը, ինչը չի կարելի ասել տեղական շուկայի ծավալների սահմանափակության մասին: Վերջինս հանդիսանում է առնվազն զգալի խոչընդոտ ձեռնարկությունների մոտ 54%-ի համար: Չնայած դրան, ինչպես արդեն նշել ենք, այս ձեռնարկությունները հիմնականում կողմնորոշված են դեպի ներքին շուկա:

Բացի այդ, տվյալ ճյուղում նկատվում են գնորդների որոշակի կենտրոնացումներ: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված 13 ձեռնարկություններից 5-ը աշխատում են հատուկ պատվերներով: Եվ միայն 38%-ն է նշել, որ ունեն բազմաթիվ գնորդներ: Համադրելով վերը շարադրվածը տվյալ շուկայում առկա ներմուծողների մեծ տեսակարար կշռի հետ, կարող ենք ասել, որ տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության ձեռնարկությունները գտնվում են բավականին խոցելի դրության մեջ:

Հարակից և աջակից ոլորտներ

Ինչպես և նախորդ ուսումնասիրված ճյուղերում, հարակից և աջակից ոլորտները էական խոչընդոտ չեն հանդիսանում տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության ճյուղի ձեռնարկությունների համար:

Մրցակցային միջավայր և Ֆիրմայի ռազմավարություն


Տվյալ ճյուղի ձեռնարկությունների 53%-ի գնահատականներով իրենք կամ չունեն մրցակից, կամ ունեն 1-3 մրցակից: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ուսումնասիրված ձեռնարկությունները, ինչպես արդեն նշել ենք, իրենց հիմնական մրցակիցներ են համարում ներմուծող կազմակերպություններին: Այս հանգամանքով կարելի է բացատրել այն, որ ըստ ձեռնարկությունների մեծ մասի գնահատականների շուկայում առկա են իրենց արտադրանքին փոխարինող ապրանքներ:

Անդրադառնալով ֆիրմային ռազմավարական պլանավորմանը՝ անհրաժեշտ է նշել, որ միայն մեկ ձեռնարկություն է իրականացնում ֆինանսական կանխատեսում և պլանավորում միջնաժամկետ կտրվածքով, չնայած այն բանին, որ այդ պլանը նա օգտագործում է միայն ընթացիկ ծախսերի վերահսկման համար: Մնացած ձեռնարկությունները կամ չեն իրականացնում ֆինանսական կանխատեսում և պլանավորում, կամ իրականացնում են մինչև մեկ տարի կտրվածքով:

Տպագրական և հրատարակչական արտադրություն

Ճյուղի հիմնական բնութագրիչները	
Ուսումնասիրված ձեռնարկությունների քանակը	17
Ուսումնասիրված ձեռնարկությունների ծածկույթը, %	11%
Արտադրողականությունը	
ըստ հաստյքի, դրամ	5,927
ըստ ավելացված արժեքի, դրամ	1,544
միավոր աշխատուժի ծախս	0.19
Շահութաբերության միջին մակարդակ, %	11%
Գործունեության կողմնորոշումը	ներքին շուկա
Արտահանման կշիռն ընդհանուր արտադրության մեջ	0.75%
Արտահանման հիմնական երկիրը(ները)	-
Ներմուծողների հետ մրցակցության մակարդակ	թույլ
Ճյուղ մուտք գործելու հիմնական արգելքը	կապիտալի մեծ ծավալները / թանկարժեք տեխնոլոգիաներ
Հիմնական հումքի ձեռք բերման աղբյուրը	օտարերկրյա
Դրամի արժեվորման ազդեցությունը	հիմնականում ազդեցություն չի ունեցել
Մատակարարների կենտրոնացվածությունը	թույլ
Աշխատողների միջին ցուցակային թիվը, մարդ	19
Արտադրական հզորությունների օգտագործման միջին աստիճանը	72%
Բանկային վարկերից օգտվելու մակարդակը	բարձր
Օգտագործվող հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	կարճաժամկետ / միջնաժամկետ
Անհրաժեշտ հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	երկարաժամկետ
Ֆինանսական ռեսուրսներից օգտվելուն խոչընդոտող հիմնական գործոնը	գրավի նկատմամբ խիստ պահանջները
Բնականոն գործունեությանը խոչընդոտող հիմնական մարմինը	Հարկային Պետական Ծառայություն / Մաքսային Պետական Կոմիտե

Տպագրական և Հրատարակչական գործի Ադամանդ



Արտադրության գործոններ	+/-
Որակյալ աշխատուժի առկայություն	+
Որակյալ աշխատուժի աշխատավարձ	+
Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին	-
Արտադրական տեխնոլոգիաների որակը	+
Արտադրական տեխնոլոգիաների ծավալ	+
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին	-
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնություն	-
Պահանջարկի պայմաններ	**+/-**
Տեղական շուկայի ծավալների սահմանափակություն	-
Շուկայական տեղեկատվության մատչելիություն	+
Գնորդների կենտրոնացվածության աստիճան	-
Հարակից և աջակից ոլորտներ	**+/-**
Ֆինանսական կազմակերպություններ	+
Տրանսպորտային ընկերություններ	+
Փաթեթավորման նյութերի մատակարար ընկերություններ	+
Էներգիա մատակարարող ընկերություններ	+
Մրցակցային միջավայրը և ֆիրմայի ռազմավարությունը	**+/-**
Մրցակիցների թիվ	+
Բիզնես խմբերի առկայություն	+
Ներմուծողների հետ մրցակցության աստիճան	+
Շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը	+
Ֆինանսական պլանավորում	-
Փոխարինող ապրանքների առկայություն	+

Արտադրության գործոններ

Ինչպես և նախորդ ճյուղում, որակյալ աշխատուժը և արտադրական տեխնոլոգիաները չեն խոչընդոտում տպագրական գործի ձեռնարկությունների մրցունակությանը: Հիմնական խոչընդոտներից մեկը օգտագործվող հումքի գինն է: Այդ մասին նշել են ձեռնարկությունների մոտ 59%-ը: Ներկրվող հումքը հիմնականում բերվում է ԵՄ երկրներից (ձեռնարկությունների՝ 52%), Ռուսաստանից (23%), ԱՄՆ-ից (11%) և այլն: Հումքի գնի՝ որպես խոչընդոտ լինելու հանգամանքը, մեր կարծիքով, որոշակիորեն պայմանավորված է հենց այն փաստով, որ տվյալ հումքը ներմուծվում է մեծամասամբ առավել զարգացած, եվրոպական երկրներից: Եվ դա է երևի պատճառը, որ չնայած ներմուծման մեծ ծավալներին՝ հայկական դրամի արժեվորումը դրական է ազդել ձեռնարկությունների միայն 29.4%-ի վրա (17 ձեռնարկությունից 7-ը նշել են որևէ ազդեցության բացակայության մասին, իսկ 5-ը՝ բացասական ազդեցության մասին):

Հաջորդ կարևոր գործոնը, որը խոչընդոտում է այս ճյուղի ձեռնարկությունների մրցունակությանը, ֆինանսական ռեսուրսներն են: Այս առումով ձեռնարկությունների մոտ 70%-ը նշել են, որ ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գինը և ժամկետայնությունը հանդիսանում է առնվազն զգալի խոչընդոտ իրենց մրցունակությանը: Չնայած դրան, այս ճյուղի ձեռնարկությունների 47%-ը օգտվում են բանկային վարկերից:

Պահանջարկի պայմաններ

Պահանջարկի ուսումնասիրված 3 պայմաններից միայն մեկը՝ շուկայական տեղեկատվության մատչելիությունը չի խոչընդոտում ձեռնարկությունների մրցունակությանը:

Ձեռնարկությունների 53%-ի համար առնվազն զգալի խոչընդոտ է համարվում տեղական շուկայի ծավալների սահմանափակությունը: Դա տրամաբանական է, քանի որ այս ճյուղը հիմնականում կողմնորոշված է դեպի ներքին շուկա (արտահանումը չնչին տեսակարար կշիռ է կազմում համախառն արտադրանքի մեջ):

Միևնույն ժամանակ, ճյուղում առկա են գնորդների որոշակի կենտրոնացումներ: 17 ձեռնարկությունից 6-ը աշխատում են հատուկ պատվերներով: Միայն 8 ձեռնարկություն է գտնում, որ ինքն ունի բազմաթիվ գնորդներ:

Հարակից և աջակից ոլորտներ

Ինչպես և նախորդ ուսումնասիրված ճյուղերում, հարակից և աջակից ոլորտները էական խոչընդոտ չեն հանդիսանում տպագրական և հրատարակչական գործի ճյուղի ձեռնարկությունների համար:

Մրցակցային միջավայր և Ֆիրմայի ռազմավարություն

Մրցակցային միջավայրն ուսումնասիրելիս նկատում ենք, որ այս ճյուղը գտնվում է մրցակցային առավել խիստ պայմաններում, որը, մեր կարծիքով, դրական է ազդում ընդհանուր ճյուղի մրցունակության վրա: Մասնավորապես, ճյուղում առկա են բազմաթիվ մրցակիցներ, չկան բիզնես խմբեր, ներմուծողների հետ մրցակցության մակարդակը թույլ է, և, հետևաբար, շուկայի՝ նրանց պատկանող մասը փոքր է:


Սակայն ֆինանսական հոսքերի կանխատեսման և պլանավորման առումով այստեղ իրավիճակը մի փոքր այլ է: Ուսումնասիրված 17 ձեռնարկությունից 8-ը ընդհանրապես չի իրականացնում պլանավորում և կանխատեսում, իսկ ևս 7 ձեռնարկություն իրականացնում է միայն 1 տարի ժամկետով:

Քիմիական և պլաստմասայե արտադրատեսակների արտադրություն

Ճյուղի հիմնական բնութագրիչները	
Ուսումնասիրված ձեռնարկությունների քանակը	8
Ուսումնասիրված ձեռնարկությունների ծածկույթը	87%
Արտադրողականությունը	
ըստ հասույթի, դրամ	5,704
ըստ ավելացված արժեքի, դրամ	991
միավոր աշխատուժի ծախս	0.40
Շահութաբերության միջին մակարդակ, %	9%
Գործունեության կողմնորոշումը	հիմնականում ներքին շուկա
Արտահանման կշիռն ընդհանուր արտադրության մեջ	21.5%
Արտահանման հիմնական երկիրը(ները)	Եվրոմիության երկրներ
Ներմուծողների հետ մրցակցության մակարդակ	թույլ
Ճյուղ մուտք գործելու հիմնական արգելքը	կապիտալի մեծ ծավալները
Հիմնական հումքի ձեռք բերման աղբյուրը	օտարերկրյա
Դրամի արժեվորման ազդեցությունը	միանշանակ չէ
Մատակարարների կենտրոնացվածությունը	կենտրոնացված
Աշխատողների միջին ցուցակային թիվը, մարդ	28[36]
Արտադրական հզորությունների օգտագործման միջին աստիճանը, %	63.8%
Բանկային վարկերից օգտվելու մակարդակը	ցածր
Օգտագործվող հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	միջնաժամկետ
Անհրաժեշտ հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	միջին և երկարաժամկետ
Ֆինանսական ռեսուրսներից օգտվելուն խոչընդոտող հիմնական գործոնը	-
Բնականոն գործունեությանը խոչընդոտող հիմնական մարմինը	Հարկային Պետական Ծառայություն / Բնօգտագործման Նախարարություն

[36] Ներառված չէ Նաիրիտ գործարանի թվերը: Ներառելու դեպքում միջին ցուցակային թիվը կազմում է 299 մարդ:

Քիմ. և Պլաստ. նյութերի արտադրության Ադամանդ



Արտադրության գործոններ	+/-
Որակյալ աշխատուժի առկայություն	+
Որակյալ աշխատուժի աշխատավարձ	-
Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին	-
Արտադրական տեխնոլոգիաների որակը	+
Արտադրական տեխնոլոգիաների ծավալ	+
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին	-
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնություն	-
Պահանջարկի պայմաններ	**+/-**
Տեղական շուկայի ծավալների սահմանափակություն	-
Շուկայական տեղեկատվության մատչելիություն	+
Գնորդների կենտրոնացվածության աստիճան	-
Հարակից և աջակից ոլորտներ	**+/-**
Ֆինանսական կազմակերպություններ	+
Տրանսպորտային ընկերություններ	+
Փաթեթավորման նյութերի մատակարար ընկերություններ	+
Էներգիա մատակարարող ընկերություններ	+
Մրցակցային միջավայրը և ֆիրմայի ռազմավարությունը	**+/-**
Մրցակիցների թիվ	-
Բիզնես խմբերի առկայություն	+
Ներմուծողների հետ մրցակցության աստիճան	+
Շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը	-
Ֆինանսական պլանավորում	-
Փոխարինող ապրանքների առկայություն	-

Արտադրության գործոններ

Քիմիական և պլաստմասայե արտադրատեսակների արտադրության ճյուղում առաջին կարևոր խոչընդոտը որակյալ աշխատուժի գինն է, կամ այլ կերպ ասած՝ աշխատավարձը: Չնայած դրան, ուսումնասիրված ձեռնարկությունների մեծամասնության կարծիքով այդ աշխատուժի բացակայությունը աշխատուժի շուկայում չի խոչընդոտում իրենց մրցունակությանը: Եվ բացի այդ ձեռնարկությունների միայն 25%-ն է գտնում, որ կառավարչական կադրերի և բարձրակարգ մասնագետների բացակայությունը խոչընդոտում է իր ճյուղ մուտք գործելուն:

Հաջորդ խոչընդոտը արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գինն է: Այս առումով, ուսումնասիրված ձեռնարկությունների 62.5%-ը գտնում է, որ հումքի գինը հանդիսանում է առնվազն զգալի խոչընդոտ: Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված 8 ձեռնարկություներից 7-ը օգտագործում է ներկրվող հումք (հիմնականում ներկրում են ոչ ԱՊՀ երկրներից): Միևնույն ժամանակ այս ճյուղի ընդհանուր արտադրանքի միջինում 21%-ն է արտահանվում: Դա հանգեցրել է նրան, որ հայկական դրամի արժեվորումը բացասաբար է անդրադարձել ձեռնարկությունների ընդամենը 37%-ի վրա:

Կարևոր խոչընդոտներից է նաև ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գինը և ժամկետայնությունը: Ընդ որում, այս գործոնները հավասարապես են խոչընդոտում ձեռնարկությունների մրցունակությանը: Դա հանգեցրել է նրան, որ ուսումնասիրված 8 ձեռնարկությունից միայն 3–ն են օգտվում բանկային վարկերից, չնայած նրան, որ 8-ից 4-ը ունեն երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների կարիք, ևս 3-ը՝ միջնաժամկետ:

Պահանջարկի պայմաններ

Ուսումնասիրվող ճյուղում որոշակիորեն խնդիր է նաև տեղական շուկայի ծավալների սահմանափակությունը: Այդ մասին նշել են ձեռնարկությունների մոտ 63%-ը: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, ձեռնարկությունները փորձում են արտահանել իրենց կողմից թողարկվող արտադրանքը, որը կազմում է միջինում 21%:

Բացի այդ, տվյալ ճյուղը որոշակի խոչընդոտներ ունի նաև գնորդների կենտրոնացվածության տեսանկյունից: 8-ից 3-ը իրենց արտադրանքը վաճառում են հատուկ պատվերներով, 2-ը ունեն մի քանի գնորդներ:

Հարակից և աջակից ոլորտներ

Հարակից և աջակից ոլորտներում խոչընդոտներ չկան:

Մրցակցային միջավայր և Ֆիրմայի ռազմավարություն

Մրցակցային միջավայրը ուսումնասիրելիս, նկատում ենք, որ 8-ից 4-ը նշել են մրցակիցների բացակայության մասին, իսկ ևս 3-ը ունեն 1-3 մրցակից: Միևնույն ժամանակ բավականին թույլ է ներմուծողների հետ մրցակցության աստիճանը: Հետաքրքրական է, որ չնայած ձեռնարկությունները ներմուծողներին մրցակից չեն համարում, սակայն գտնում են, որ ներմուծողներին է պատկանում շուկայի գերակշիռ մասը: Սա միգուցե կարելի է բացատրել այն հանգամանքով, որ տվյալ ձեռնարկությունները արտադրում են որոշակի յուրահատուկ արտադրատեսակներ և հետևաբար շուկայում ունեն իրենց արտադրանքին ներհատուկ տեղը, սակայն դրա հետ մեկտեղ շուկայում առկա են իրենց արտադրանքին փոխարինող ապրանքներ, որոնք և հիմնականում ներմուծվում են արտերկրներից:


Ռազմավարության տեսանկյունից ձեռնարկությունների մեծ մասը իրականացնում է ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում մինչև մեկ տարի ժամկետով:

Խմիչքի արտադրություն[37]

Ճյուղի հիմնական բնութագրիչները	
Ուսումնասիրված ձեռնարկությունների քանակը	21
Ուսումնասիրված ձեռնարկությունների ծածկույթը, %	20.3%
Արտադրողականությունը	
ըստ հասույթի, դրամ	6,524
ըստ ավելացված արժեքի, դրամ	1,754
միավոր աշխատուժի ծախս	0.20
Շահութաբերության միջին մակարդակ, %	9%
Գործունեության կողմնորոշումը	հիմնականում ներքին շուկա
Արտահանման կշիռն ընդհանուր արտադրության մեջ	19.9%
Արտահանման հիմնական երկիրը(ները)	Ռուսաստան, ԱՄՆ
Ներմուծողների հետ մրցակցության մակարդակ	ցածր
Ճյուղ մուտք գործելու հիմնական արգելքը	թանկարժեք տեխնոլոգիաներ
Հիմնական հումքի ձեռք բերման աղբյուրը	տեղական
Դրամի արժեվորման ազդեցությունը	հիմնականում բացասական
Մատակարարների կենտրոնացվածությունը	թույլ
Աշխատողների միջին ցուցակային թիվը, մարդ	114
Արտադրական հզորությունների օգտագործման միջին աստիճանը, %	59.5%
Բանկային վարկերից օգտվելու մակարդակը	բարձր
Օգտագործվող հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	միջին և երկարաժամկետ
Անհրաժեշտ հիմնական ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը	միջին և երկարաժամկետ
Ֆինանսական ռեսուրսներից օգտվելուն խոչընդոտող հիմնական գործոնը	-
Բնականոն գործունեությանը խոչընդոտող հիմնական մարմինը	Հարկային Պետական Ծառայություն

[37] Ներառում է նաև «Հանքային և ոչ ալկոհոլային խմիչքի արտադրություն» և «Խմիչքի արտադրություն» ենթաճյուղերը

Խմիչքի արտադրության Ադամանդ



Արտադրության գործոններ	+/-
Որակյալ աշխատուժի առկայություն	+
Որակյալ աշխատուժի աշխատավարձ	+
Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին	-
Արտադրական տեխնոլոգիաների որակը	+
Արտադրական տեխնոլոգիաների ծավալ	+
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին	+
Ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնություն	-
Պահանջարկի պայմաններ	**+/-**
Տեղական շուկայի ծավալների սահմանափակություն	-
Շուկայական տեղեկատվության մատչելիություն	+
Գնորդների կենտրոնացվածության աստիճան	+
Հարակից և աջակից ոլորտներ	**+/-**
Ֆինանսական կազմակերպություններ	+
Տրանսպորտային ընկերություններ	+
Փաթեթավորման նյութերի մատակարար ընկերություններ	+
Էներգիա մատակարարող ընկերություններ	+
Մրցակցային միջավայրը և ֆիրմայի ռազմավարությունը	**+/-**
Մրցակիցների թիվ	+
Բիզնես խմբերի առկայություն	+
Ներմուծողների հետ մրցակցության աստիճան	+
Շուկայի՝ ներմուծողներին պատկանող մասը	-
Ֆինանսական պլանավորում	-
Փոխարինող ապրանքների առկայություն	-

Արտադրության գործոններ

Խմիչքի արտադրության համար անհրաժեշտ արտադրական գործոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ առկա է 2 հիմնական խոչընդոտ. հիմնականա հումքի գինը և ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը:

Հիմնական հումքի գնի՝ որպես մրցունակությանը խոչընդոտող գործոնի մասին նշել են ձեռնարկությունների 53%-ը: Ընդ որում այս ճյուղի ձեռնարկությունների մեծ մասը հիմնականում օգտագործում են տեղական հումքի աղբյուրներ: Միևնույն ժամանակ ճյուղի արտադրանքի միայն 20%-ն է արտահանվում այլ երկրներ: Չնայած դրան, ձեռնարկությունների 57%-ի կարծիքով ՀՀ դրամի արժեվորումը բացասական է ազդել իրենց ձեռնարկության մրցունակության վրա:

Ֆինանսական ռեսուրսների ժամկետայնության առումով, ձեռնարկությունների 53%-ը գտնում է, որ դա հանդիսանում է իրենց համար լուրջ խոչընդոտ, չնայած որ ձեռնարկությունների 71%-ը օգտվում է բանկային վարկերից: Միևնույն ժամանակ, 21 ձեռնարկություններից 17-ը ունի միջնաժամկետ և երկարաժամկետ ռեսուրսների կարիք:

Պահանջարկի պայմաններ

Պահանջարկի պայմաններն ուսումնասիրելիս նկատում ենք, որ առկա 3 պայմանից միայն մեկն է խոչընդոտում ձեռնարկությունների մրցունակությանը՝ տեղական շուկայի ծավալների սահմանափակությունը: Այդ մասին են նշել ձեռնարկությունների մոտ 53%-ը: Չնայած դրան, ինչպես արդեն նշեցինք, արտահանումը դեռևս փոքր տեսակարար կշիռ է կազմում համախառն արտադրանքի մեջ:

Հարակից և աջակից ոլորտներ

Հարակից և աջակից ոլորտներում խոչընդոտներ չկան:

Մրցակցային միջավայր և Ֆիրմայի ռազմավարություն

Մրցակցային միջավայրի առաջին գործոնի՝ մրցակիցների թվի տեսանկյունից այս ճյուղը գտնվում է բավականին լավ դիրքում: Ձեռնարկությունների մեծ մասը գտնում է, որ ունի բազմաթիվ մրցակիցներ: Բիզնես խմբերը որոշակիորեն առկա են տվյալ ճյուղում, չնայած որ ձեռնարկությունների մեծ մասը նշել է նրանց բացակայության մասին: Բավականին թույլ է նաև ներմուծողների հետ մրցակցության աստիճանը: Չնայած դրան, այստեղ ևս, ինչպես և քիմիական և պլաստմասայե արտադրատեսակների արտադրության ճյուղում, ձեռնարկությունները գտնում են, որ բիզնես խմբերին է պատանում շուկայի զգալի մասը: Այստեղ ևս մենք հակված ենք այն բացատրությանը, որը տրվեց քիմիական և պլաստմասայե արտադրատեսակների արտադրության ճյուղում:

Ուսումնասիրելով ձեռնրակությունների՝ ֆինանսական հոսքերի կանխատեսումների և պլանավորման նկատմամբ հակվածությունը, տեսնում ենք, որ 21 ձեռնարկությունից 10-ը ընդհանրապես չեն կատարում կանխատեսում, իսկ 8-ը կատարում են մինչև մեկ տարի ժամկետով:

Ճյուղային մրցունակության ամփոփ գնահատական

Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից փորձ է արվել տալ ուսումնասիրվող ճյուղերի մրցունակության ամփոփ գնահատական (այսուհետ՝ Գնահատական), որը հնարավորություն կտա համեմատելու վերլուծվող ճյուղերի մրցունակության մակարդակները: Այլ կերպ ասած, սույն գնահատականը հաշվարկվել է տնտեսության ներսում ճյուղերի մրցունակության մակարդակները գնահատելու և համեմատելու նպատակով:

Գնահատականի հաշվարկման մեթոդոլոգիայի նկարագրությունը

Գնահատականի հաշվարկման մեթոդոլոգիայի էությունը կայանում է հետևյալում:

- Նախ առանձնացվել են այն ենթաճյուղերը/ճյուղերը, որոնց համար պետք է հաշվարկվեն մրցունակության գնահատականները[38]:
- Այնուհետև, ուսումնասիրության ընթացքում օգտագործված հարցաթերթից ընտրվել են համապատասխան ցուցանիշները, որոնք պատկերացում են տալիս ճյուղում գործող ձեռնարկությունների մրցունակության մասին՝ տարբեր կտրվածքներով:
- Յուրաքանչյուր ցուցանիշի համար սահմանվել է մրցունակության վրա ազդեցության դրական կամ բացասական գործոն լինելու չափանիշ և գնահատման մոտեցում:[39]
- Յուրաքանչյուր ճյուղում հաշվարկվել է տվյալ ճյուղի մրցունակ ձեռնարկությունների տեսակարար կշիռը հարցմանը մասնակցած տվյալ ճյուղի ձեռնարկությունների քանակում:
- Ճյուղերը դասավորվել են ըստ ստացված կշիռների նվազման/աճի և սահմանվել յուրաքանչյուր ճյուղի դիրքը ըստ այդ ցուցանիշի /որքան բարձր, այդքան մրցունակ/: Ընդ որում, ըստ նվազման դասակարգումը կիրառվել է այն ցուցանիշների նկատմամբ, երբ ցուցանիշի ավելի բարձր մակարդակը վկայում է մրցունակության բարձր մակարդակի մասին: Ըստ աճի դասակարգումը կիրառվել է այն ցուցանիշների նկատմամբ, երբ ցուցանիշի ավելի բարձր մակարդակին համապատասխանում է մրցունակության ավելի ցածր մակարդակ:
- Այնուհետև ամեն մի ցուցանիշի կտրվածքով յուրաքանչյուր ճյուղին տրվել է համապատասխան գնահատական /**քալ**/, որն արժեքային առումով համընկնում է դասակարգման արդյունքում կոնկրետ ճյուղի զբաղեցրած հերթական համարին/դիրքին:
- Հաջորդ քայլով հաշվարկվել է դիտարկված բոլոր ցուցանիշների հիման վրա յուրաքանչյուր ճյուղի ստացված վերջնական գնահատականը: Որքան բարձր է ստացված գնահատականը, այդքան ավելի նպաստավոր են ճյուղի մրցունակության վրա ազդող գործոնները, այսինքն՝ ճյուղն ավելի մրցունակ է:

[38] Գումավոր և ոսկերչական արտադրանք թողարկող ճյուղերը չեն դիտարկվել, քանի որ այդ ճյուղերը հիմնականում մրցակցում են արտաքին շուկաներում: Սննդի ճյուղում առանձնացվել են կաթնամթերքի, խմիչքի /ոչ ալկոհոլային և ալկոհոլային/ և այլ սննդի խմբեր: Մնացած ճյուղերի խմբավորումը համապատասխանում է հաշվետվության նախորդ բաժիններում կիրառված մոտեցմանը: Ընտրված ճյուղերի ցանկը և դրանցում ընդգրկված ձեռնարկությունների թիվը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

[39] բերված է ստորև:

Գնահատականի հաշվարկման համար առանձնացվել են հարցաթերթի հետևյալ հարցերը[40].

7. Մոտավոր հաշվարկներով գնահատեք Ձեր կազմակերպության ներքին /ՀՀ-ում/ մրցակիցների թիվը.

Ենթադրություն՝ *որքան շատ մրցակիցներ ունեն ձեռնարկությունները, այնքանով բարձր է ճյուղում մրցունակության մակարդակը:*

Գնահատման մոտեցումը՝ ցուցանիշի գնահատման համար վերցվել է 4-ից ավելի մրցակից ունեցող ձեռնարկությունների քանակը, այնուհետև հարաբերվել է հարցին պատասխանած՝ տվյալ ենթաճյուղում ձեռնարկությունների ընդհանուր քանակին:

11. Արդյոք ձեր ընկերությունը մրցակցու՞մ է որևէ ներմուծող կազմակերպության հետ.

Ենթադրություն՝ *ճյուղում որքան շատ են ներմուծող ձեռնարկությունների հետ մրցակցողները, այդքան ցածր է ճյուղի մրցունակության մակարդակը:*

Գնահատման մոտեցումը՝ նախ վերցվել են տվյալ ճյուղում հարցմանը մասնակցած ձեռնարկությունները, որոնք դասակարգվել են ըստ արտահանող ձեռնարկությունների հետ մրցակցության հանգամանքի: Այնուհետև արտահանող ձեռնարկություններից առանձնացվել են այն ձեռնարկությունները, որոնց կարծիքով շուկայի գերակշիռ և/կամ զգալի մասը պատկանում է ներմուծող կազմակերպությանը (երին) /հարց 14-ով/: Գնահատականի հաշվարկում ներառվել են վերոնշյալ ձեռնարկությունների տեսակարար կշիռը ներմուծող կազմակերպությունների հետ մրցակցող ձեռնարկությունների մեջ:

14. Ձեր կարծիքով, շուկայի որ մասն է պատկանում ներմուծող կազմակերպությանը (երին)

Ենթադրություն՝ *սույն ցուցանիշի գնահատման ընթացքում առավել բարձր մրցունակությամբ են բնութագրվում այն ձեռնարկությունները, որոնք նշել են, որ իրենց մրցակից ներմուծող ձեռնարկություններին է պատկանում շուկայի չնչին մասը: Հետևաբար շուկայի զգալի և/կամ գերակշիռ մասի՝ ներմուծողներին պատկանելու փաստի մասին նշված ձեռնարկությունները դիտարկվել են իբրև առավել ևնազ մրցունակ:*

17. Արդյո՞ք ձեր արտադրանքը արտահանվում է այլ երկրներ

Ենթադրություն՝ *եթե արտահանվում է, ապա այլ հավասար պայմաններում ճյուղն ավելի մրցունակ է: Հաշվարկվել է, թե հարցվողների որ մասն է արտահանում:*

Գնահատման մոտեցումը՝ արտահանող ձեռնարկությունը ստանում է 1, իսկ չարտահանողը՝ 0 միավոր: Գնահատականի հաշվարկում ներառվել է արտահանողների տեսակարար կշիռը ճյուղում (հարցմանը մասնակից ձեռնարկությունների քանակի կտրվածքով):

22. Որքանով է որակավորված /մասնագիտացված/ աշխատուժի գինը /աշխատավարձ և դրա հետ կապված ծախսումներ/ խոչընդոտում ձեռնարկության մրցունակությանը՝

Ենթադրություն՝ *եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին:*

[40] Հարցերի համարակալումն իրականացվել է ըստ հարցաթերթում վերջիններիս զբաղեցրած հերթական համարի՝ համադրումն առավել հեշտացնելու նպատակով:

Գնահատման մոտեցումը[41]՝ Ձեռնարկությունները կարող էին այս հարցին պատասխանել, նշելով հիմնական, զգալի և մասնակի խոչընդոտ լինելու հանգամանքը, կամ պնդելով, որ դա խոչընդոտ չէ: Մրցունակությունը գնահատվել է հիմնական և զգալի խոչընդոտ համարող ձեռնարկությունների քանակը հարաբերելով ընդհանուր քանակին: Ընդ որում, այն ձեռնարկությունները, որոնք նման հարցերին պատասխանելիս նշել են, որ այդ հանգամանքը խոչընդոտ չի, կամ հանդիսանում է մասնակի խոչընդոտ, ապա այդ ձեռնարկություններն ավելի մրցունակ են, մնացած երկու պատասխանները նշողների համեմատ:

23.Որքանով է որակյալ աշխատուժի բացակայությունը աշխատուժի շուկայում խոչընդոտում ձեռնարկության մրցունակությանը:

Ենթադրություն՝ *եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկություններն առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին*[42]*:*

28. Որքանով է արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գինը խոչընդոտում ձեռնարկության մրցունակությանը:

Ենթադրություն՝ *եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին*[43]*:*

30. Քանի մատակարար կազմակերպություն գոյություն ունի Ձեր ենթաճյուղում:

Ենթադրություն՝ *որքան շատ են մատակարարները, այնքան մեծ է մրցունակությունը, քանի որ փոքր է կախումը մեկ մատակարարից: Հետևաբար, շատ մատակարար ունեցող ձեռնարկություններով ճյուղն ավելի մրցակցային է մյուսների համեմատ:*

32. Որքանով է ձեռնարկության արտադրական առկա հզորությունների որակը /տեխնոլոգիաների և սարքավորումների որակը/ խոչընդոտում ձեռնարկության մրցունակությանը:

Ենթադրություն՝ *եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին*[44]*:*

33. Որքանով է ձեռնարկության արտադրական առկա հզորությունների ծավալը /դրանց բացակայությունը կամ պակասը/ խոչընդոտում ձեռնարկության մրցունակությանը:

Ենթադրություն՝ *եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել*

[41] Այսուհետ, սույն ինդեքսի հաշվարկման ցուցանիշների կազմում ներառված այն ցուցանիշները, որոնց պատասխանները դասակարգված են նման ձևով, կգնահատվեն վերոնշյալ մոտեցման հիման վրա:
[42] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[43] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[44] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:

մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին[45]*:*

35. Ձեռնարկության գործունեության ֆինանսավորման նպատակով հետևյալ որ գործիքներից եք առավելապես օգտվում:

Ենթադրություն՝ *եթե ձեռնարկությունն օգտվում է որևէ ֆինանսական գործիքից, ապա ենթադրվում է, որ այն ունի լավ ֆինանսական մենեջմենթ, հետևապես ավելի մրցունակ է մնացածների համեմատ:*

37. Որքանով է ձեռնարկության կողմից ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գինը խոչընդոտում ձեռնարկության գործունեությանը:

Ենթադրություն՝ *եթե ձեռնարկությունը չի «բողոքում» ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գնի՝ իր մրցունակությանը խոչընդոտ լինելու հանգամանքից, այն դիտարկվում է իբրև մրցունակության ավելի բարձր մակարդակ ունեցող*[46]*:*

38. Որքանով է ձեռնարկության կողմից ներգրավվող ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը խոչընդոտում ձեռնարկության գործունեությանը:

Ենթադրություն՝ *եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին*[47]*:*

39. Ձեր ձեռնարկության գործունեության ֆինանսավորման նպատակով ինչ ժամկետայնության գործիքներից եք առավելապես օգտվում:

Ենթադրություն՝ *եթե ձեռնարկությունն օգտվում է երկարաժամկետ գործիքներից, ապա նրա մրցունակությունը գտնվում է որոշակի բարձր մակարդակի վրա, քանի որ բանկերն իրենց հերթին իրականացնում են պոտենցիալ հաճախորդի վարկունակության գնահատում, ինչը կարելի է դիտարկել իբրև մրցունակության ցուցանիշին առնչվող ցուցանիշ:*

Գնահատման մոտեցումը՝ համադրվել են ֆինանսական գործիքների նկատմամբ ձեռնարկությունների կարիքները և փաստացի օգտագործման արդյունքները /հարցեր 39 և 40/: Այն ձեռնարկությունները, որոնցում համընկնում են կարիքներն ու փաստացի օգտագործումը, ստացել են 1 միավոր:

43. Իրականացնում է արդյոք ձեր ձեռնարկությունը ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում, և ինչ ժամկետով:

Ենթադրություն՝ *Ֆինանսական պլանավորման և ֆինանսական հոսքերի կանխատեսումների իրականացումը հանդիսանում են կարևոր գործիք և նախապայման ձեռնարկության մրցունակության մակարդակի բարձրացման համար:*

Գնահատման մոտեցումը՝ ենթադրվում է, որ ձեռնարկության մրցունակությունը ուղիղ համեմատական է վերջինիս կողմից իրականացվող ֆինանսական հոսքերի պլանավորման և կանխատեսման ժամկետների հետ:

49. Ինչպիսի փոխհարաբերությունների մեջ են ձեր ձեռնարկության Գործադիր տնօրենը և հիմնադիրը /կամ ամենախոշոր բաժնետերը/:

[45] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[46] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[47] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:

Ենթադրություն *՝ մեծ և միջին չափերի ձեռնարկություններում հիմնադրի և գործադիր տնօրենի պաշտոնների համատեղումը պայմանականորեն կարելի է դիտարկել ձեռնարկության մրցունակության վրա բացասաբար անդրադարձող գործոն:*

Գնահատման մոտեցումը ՝ Գնահատականի այս բաղադրիչը հաշվարկվել է հետևյալ տրամաբանությամբ: Առանձնացվել են միջին և մեծ չափի ձեռնարկությունները, որից հետո բացահայտվել են այն ձեռնարկությունները, որտեղ գործադիր տնօրենը և հիմնադիրը տարբեր անձինք են: Նշված դեպքերում ձեռնարկությանը տրվել է 1 միավոր, իսկ մնացած դեպքերում՝ 0, որից հետո այդ նույն ձեռնարկությունների քանակը հարաբերվել է մեծ և միջին ձեռնարկությունների քանակին:

50. Ձեր ձեռնարկությունում գոյություն ունի արդյոք ներքին աուդիտի ֆունկցիա:

Ենթադրություն *՝ ներքին աուդիտի ֆունկցիայի առկայությունը բարձրացնում է ձեռնարկության և ճյուղի մրցունակության մակարդակը:*

Գնահատման մոտեցումը ՝ եթե առկա է, ձեռնարկությունը ստանում է 1, հակառակ դեպքում՝ 0:

51. Որքանով է տեղական շուկայի ծավալների սահմանափակությունը խոչընդոտում ձեռնարկության գործունեության ընդլայնմանը:

Ենթադրություն *՝ եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին[48]:*

52. Որքանով է շուկայական տեղեկատվության մատչելիությունը խոչընդոտում ձեռնարկության մրցունակությանը:

Ենթադրություն *՝ եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին[49]:*

53. Որքանով է ձեր արտադրանքի ներկայիս որակը խոչընդոտում ձեռնարկության իրացման ծավալների ցանկալի աճին:

Ենթադրություն *՝ եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին[50]:*

55. Որքանով է ֆինանսական կազմակերպությունների /բանկեր, վարկային կազմակերպություններ և այլն/ ներկայիս մակարդակը խոչընդոտում ձեռնարկության գործունեությանը:

Ենթադրություն *՝ եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել*

[48] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[49] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[50] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:

մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին[51]*:*

56. Որքանով է տրանսպորտային ընկերությունների ներկայիս մակարդակը /նրանց կողմից մատուցվող ծառայությունների գինը և որակը/ խոչընդոտում ձեռնարկության գործունեությանը:

Ենթաղրություն *՝ եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին*[52]*:*

57. Որքանով է փաթեթավորման նյութերի մատակարար ընկերությունների ներկայիս մակարդակը /նրանց կողմից մատուցվող ապրանքների և ծառայությունների գինը և որակը/ խոչընդոտում ձեռնարկության գործունեությանը:

Ենթաղրություն *՝ եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին*[53]*:*

58. Որքանով է էներգիա մատակարարող ընկերությունների ներկայիս մակարդակը /նրանց կողմից մատուցվող ապրանքների և ծառայությունների գինը և որակը/ խոչընդոտում ձեռնարկության գործունեությանը:

Ենթաղրություն *՝ եթե տվյալ ճյուղի ձեռնարկությունները նշում են, որ նշված հանգամանքը չի խոչընդոտում կամ խոչընդոտում է մասնակիորեն, ապա այդ ձեռնարկությունները առավել մրցունակ են այն ձեռնարկությունների համեմատ, որոնք նշել են այս հանգամանքի՝ հիմնական կամ զգալի խոչընդոտ լինելու մասին*[54]*:*

Գնահատականի հաշվարկում ներառվել է նաև ենթաճյուղերի արտադրողականության ցուցանիշը՝ հիմքում ունենալով այն ենթադրությունը, որ որքան բարձր է ենթաճյուղի արտադրողականությունը, այնքան բարձր է վերջինիս մրցունակությունը:

Գնահատականի հաշվարկում ընդգրկված գործոնների/ցուցանիշների/ թվային արժեքները ներկայացված են Հավելված 1-ում:

Գնահատականը նախատեսվում է հաշվարկել հետևյալ ենթաճյուղերի համար (տե՛ս Աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Գնահատականի հաշվարկին մասնակից ենթաճյուղերը

N	Ճյուղի անվանումը	Ձեռնարկությունների քանակը
1	Մեխանիկական սարքավորումներ	15

[51] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[52] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[53] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:
[54] Գնահատվում է ինչպես հարց 22-ում:

2	Տրիկոտաժ և մանածագործական հյուսվածքներ	13
3	Կաթնամթերք	11
4	Տպագրական գործ	17
5	Հիմնական քիմիական և պլաստմասսե	8
6	Խմիչք, հանքային և ոչ ալկոհոլային խմիչք	21
7	Սնունդ /այլ/	20
Ընդամենը		105

Ստացված արդյունքները ներկայացված են ստորև (տե՛ս Աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Գնահատականի արժեքներն ըստ ենթաճյուղերի

N	Ենթաճյուղի անվանումը	Գնահատականի մեծությունը
1	Խմիչքի արտադրություն	113
2	Կաթնամթերքի արտադրություն	109
3	Տպագրական գործ	101
4	Պլաստմասայե արտադրատեսակների արտ.	97
5	Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն	87
6	Մեխանիկական սարքավորանքի արտ.	83
7	Սնունդ /այլ/	70

Այն բանից հետո, երբ սույն հետազոտության նախորդ բաժնում տրվեցին ճյուղերի նկարագրությունները՝ Պորտերի Ադամանդի մեթոդաբանության հիմնական դրույթների տեսանկյունից, և այս բաժնում հաշվարկված գնահատականների արժեքների հիման վրա կարող ենք կատարել մի շարք ամփոփիչ մտահանգումներ:

Մասնավորապես, կարող ենք նշել, որ Հավելված 1-ում պատկերված են գնահատականի հաշվարկին մասնակցող ցուցանիշները /գործոնները/, որոնցից առավել բարենպաստներն ունեն 7 արժեքը, իսկ ամենաանբարենպաստները՝ 1 արժեքը:

Այսպիսով՝ հաշվարկված գնահատականների վերլուծության արդյունքում ստացվում է, որ վերլուծվող ճյուղերի մեջ մրցունակության մակարդակով առաջին տեղում է խմիչքի արտադրության ճյուղը (113), որին հետևում են կաթնամթերքի արտադրության և տպագրական գործի ճյուղերը՝ համապատասխանաբար 109 և 101 գնահատականի արժեքներով:

Մասնավորապես, խմիչքի արտադրության ճյուղը բնութագրվում է հետևյալ տվյալներով՝

- ✓ Տվյալ ճյուղի ձեռնարկությունների 66.67 տոկոսը նշել են, որ իրենց արտադրանքն արտահանվում է արտերկիր: Հակառակ է պատկերը կաթնամթերքի արտադրության ճյուղում. ոչ մի ձեռնարկություն չի արտահանում իր արտադրանքը:

- ✓ Ճյուղի ձեռնարկությունների ավելի քան 80 տոկոսի համար որակյալ աշխատուժի բացակայությունը աշխատուժի շուկայում չի խոչընդոտում իրենց մրցունակությանը, իսկ վատագույն դեպքում հանդիսանում է մասնակի խոչընդոտ:

- ✓ 80.95 տոկոս ձեռնարկություններն իրենց գործունեության ընթացքում օգտվում են այս կամ այն տեսակի ֆինանսական գործիքներից, որը, ինչպես և նախատեսված է գնահատման մոտեցմամբ, թույլ է տալիս ենթադրել, որ ճյուղի ձեռնարկությունների գերակշիռ մասում առկա է համեմատաբար արդյունավետ գործող ֆինանսական մենեջմենթ, հետևապես ավելի մրցունակ են:

- ✓ Խմիչքի արտադրության ճյուղն էլ ավելի է ամրապնդում իր դիրքը մրցունակության մակարդակի առումով, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ճյուղի ձեռնարկությունների միայն 13.33 տոկոսն է նշել, որ ֆինանսական ռեսուրսների ներգրավման գինը հանդիսանում է հիմնական և/կամ զգալի խոչընդոտ:

- ✓ Բացի այդ խմիչքի արտադրության ճյուղի ձեռնարկությունների 57.14 տոկոսը օգտվում է հենց այնպիսի ժամկետայնությամբ ֆինանսական գործիքներից, որի կարիքն ունի:

- ✓ Ձեռնարկության գործունեության ընդլայնմանը հարցում տեղական շուկայի ծավալների սահմանափակությունն իբրև հիմնական և/կամ զգալի խոչընդոտ նշել է ձեռնարկությունների 52.38 տոկոսը: Այս ցուցանիշի առումով երկրորդ տեղում է Տպագրական գործ ճյուղը՝ 52.94 տոկոս ցուցանիշով: Եռյակը եզրափակում է Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն ենթաճյուղը՝ 53.85 տոկոս ցուցանիշով:

- ✓ Արտադրողականության մակարդակով ևս խմիչքի արտադրության ճյուղը զբաղեցնում է առաջնակարգ դիրք՝ 1754.4 հազ. դրամ ցուցանիշով: Տվյալ ճյուղին հաջորդում են կաթնամթերքի արտադրության և Պլաստմասե արտադրատեսակների և քիմիական արտադրության ճյուղերը՝ համապատասխանաբար 1522.2 հազ. դրամ և 1410.3 հազ. դրամ արժեքներով:

Խմիչքի արտադրության ճյուղի համար համեմատաբար անբարենպաստ են, մասնավորապես, հետևյալ գործոնները՝

- ✓ Նման մրցակցային առավելություններով հանդերձ խմիչքի արտադրության ճյուղի բոլոր ձեռնարկությունները նշել են, որ ներմուծող կազմակերպություններին է պատկանում շուկայի գերակշիռ և/կամ զգալի մասը: Նույն վիճակում է գտնվում նաև Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության ճյուղը:

- ✓ Խմիչքի արտադրության ճյուղի ձեռնարկությունների միայն 52.38 տոկոսն է իրականացնում է ձեռնարկության ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում: Սա, թերևս, անհասկանալի է այն պարագայում, երբ նույն ձեռնակրությունների գերակշիռ մասն օգտվում է ֆինանսական գործիքներից: Այս գործոնի կտրվածքով

ամենալավ դիրքում են գտնվում Պլաստմասե արտադրատեսակների արտադրության և կաթնամթերքի արտադրության ճյուղերը՝ համապատասնախաբար 85.71 և 63.64 տոկոս արժեքներով: Հատկանշական է, որ սույց ցուցանիշի առումով ամենավերջին տեղում է Սնուն /այլ/ ճյուղը, որի ընդամենը 45 տոկոսն է իրականացնում ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում:

- ✓ Խմիչքի արտադրության ճյուղի ձեռնարկությունների կեսում չի գործում ներքին աուդիտի ֆունկցիա, որով հանդերձ այս ճյուղը զբաղեցնում է վերջին տեղը: Առաջին տեղերում են Պլաստմասե արտադրատեսակների արտադրության, Տպագրական գործ և Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն ճյուղերը՝ համապատասխանաբար 75 տոկոս, 47.06 տոկոս և 38.46 տոկոս արժեքներով:

- ✓ Էներգիա մատակարարող ընկերությունների ներկայիս մակարդակը /նրանց կողմից մատուցվող ապրանքների և ծառայությունների գինը և որակը/ խմիչքի արտադրության ճյուղի ձեռնարկությունների 76.19 տոկոսի համար հանդիսանում է մասնակի խոչընդոտ, կամ էլ չի խոչընդոտում: Այս ցուցանիշով առաջնակարգ դիրքերում են Տպագրական գործի ճյուղը (94.12 տոկոս), Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն ճյուղը (92.31 տոկոս) և Կաթնամթերքի արտադրության ճյուղը (90.91 տոկոս):

Ճյուղերի մրցունակության վրա համեմատաբար ամենաբարենպաստ և ամենաանբարենպաստ ազդեցություն ունեցող ցուցանիշները պատկերված են Աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19. Ճյուղերի մրցունակության վրա ամենաբարենպաստ և ամենաանբարենպաստ ազդեցություն ունեցող ցուցանիշների ամփոփ աղյուսակ

Ճյուղի անվանումը	Առավել բարենպաստ ցուցանիշները (որոնց գծով ճյուղը վաստակել է 7 քալ)	Առավել անբարենպաստ ցուցանիշները (որոնց գծով ճյուղը վաստակել է 1 քալ)
Խմիչքի արտադրություն	▪ արտադրանքի արտահանում ▪ որակյալ աշխատուժի անհրաժեշտության բացակայությունը ▪ օգտագործվող ֆինանսական գործիքների ժամկետայնությունը ▪ ֆինանսական ռեսուրսների գինը ▪ ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը ▪ տեղական շուկայի ծավալների սահմանափակությունը ▪ արտադրողականությունը	▪ **ներմուծող կազմակերպության հետ մրցակցությունը** ▪ **ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում** ▪ **ներքին աուդիտի ֆունկցիայի առկայություն** ▪ **արտադրանքի ներկայիս որակը** ▪ **էներգիա մատակարարող ընկերությունների ներկայիս մակարդակը**
Կաթնամթերքի արտադրություն	▪ ներմուծող կազմակերպության հետ մրցակցությունը ▪ որակավորված աշխատուժի գինը ▪ անհրաժեշտ հիմնական հումքի գինը ▪ մատակարար կազմակերպությունների թիվը ▪ տրանսպորտային ընկերությունների ներկայիս մակարդակը	▪ **արտադրանքի արտահանում** ▪ **ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գինը** ▪ **գործադիր տնօրենի և հիմնադրի փոխհարաբերություններ**

Տպագրական գործ	▪ արտադրական առկա հզորությունների որակը ▪ արտադրական առկա հզորությունների ծավալը ▪ ֆինանսական կազմակերպությունների ներկայիս մակարդակը ▪ էներգիա մատակարարող ընկերությունների ներկայիս մակարդակը	▪ **կազմակերպության ներքին մրցակիցների թիվը** ▪ **գործադիր տնօրենի և հիմնադրի փոխհարաբերություններ**
Պլաստմասայե արտադրատեսակների արտադրություն	▪ կազմակերպության ներքին մրցակիցների թիվը ▪ ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում ▪ ներքին աուդիտի ֆունկցիայի առկայությունը	▪ **որակավորված աշխատուժի գինը** ▪ **փաթեթավորման նյութերի մատակարար ընկերությունների ներկայիս մակարդակը**
Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն	▪ շուկայական տեղեկատվության մատչելիությունը ▪ արտադրանքի ներկայիս որակը	▪ **արտադրանքի արտահանում** ▪ **անհրաժեշտ հիմնական հումքի գինը** ▪ **առկա հզորությունների որակը** ▪ **առկա հզորությունների ծավալը** ▪ **ֆինանսական ռեսուրսների ժամկետայնությունը** ▪ **օգտագործվող ֆինանսական գործիքների ժամկետայնությունը** ▪ **արտադրողականության մակարդակը**
Մեխանիկական սարքավորանքի արտադրություն	▪ փաթեթավորման նյութերի մատակարար ընկերությունների ներկայիս մակարդակը	▪ **որակյալ աշխատուժի բացակայությունը** ▪ **մատակարար կազմակերպությունների քանակը** ▪ **ֆինանսական գործիքներից օգտվելը** ▪ **տեղական շուկայի ծավալների սահմանափակությունը** ▪ **շուկայական տեղեկատվության մատչելիությունը**
Սնունդ /այլ/	▪ –	▪ **ֆինանսական հոսքերի կանխատեսում և պլանավորում** ▪ **արտադրանքի ներկայիս որակը** ▪ **ֆինանսական կազմակերպությունների ներկայիս մակարդակը** ▪ **տրանսպորտային ընկերությունների ներկայիս մակարդակը**

Ամփոփելով ստացված գնահատականները՝ կարող ենք կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները:

- ❖ Հարկ է նշել, որ մրցունակության մակարդակով՝ ըստ հաշվարկված գնահատականի, ամենավերջին տեղում է Սնունդ /այլ/ ճյուղը՝ 70 արժեքով:

- ❖ Հաշվարկված գնահատականների արժեքների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ բարենպաստ ցուցանիշների քանակով առավելապես աչքի է ընկնում խմիչքի արդտադրության ճյուղը՝ 7 գործոն, իսկ ամենաանբարենպաստ ցուցանիշների քանակի առումով «առաջատար» է տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրության ճյուղը՝ 7 գործոն:

- ❖ Յուրաքանչյուր ճյուղի մրցունակության մակարդակի հետագա բարձրացումը հիմնականում պայմանավորված կլինի վերջինիս մակարդակին ազդող բարենպաստ

ցուցանիշների պահպանման, ինչպես նաև համեմատաբար անբարենպաստ ցուցանիշների և խոչընդոտների վերացման/հաղթահարման շնորհիվ:

Եզրակացություն

Հավաքագրված տեղեկատվության վերլուծության արդյունքում կարելի է կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները.

I. *Ազգային մրցունակության առումով Հայաստանը ԱՊՀ պետությունների շարքում զբաղեցնում է միջանկյալ դիրք Գծանկար 14-ից երևում է, որ ԵՄ անդամ պետությունները /մասնավորապես 2004թ. անդամակցած/ կազմում են առանձին խումբ և բավականին առաջ են մնացած երկրներից: Անշուշտ մի շարք պարամետրերով, ինչպիսք են տնտեսական աճը, ներդրումները, ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավումը, Հայաստանն ակնհայտորեն հասել է հաջողությունների: Ընդհանուր տնտեսության արտադրողականությունը վերջին 5 տարիներին աճում է կայուն և բարձր տեմպերով: Սակայն արդյունաբերության մի քանի ճյուղերի արտադրողականության մակարդակները ԵՄ նոր անդամ պետությունների հետ համեմատելիս պարզ է դառնում, որ տարբերությունները զգալի են: Այսպես գոյություն ունեցող աճի տեմպերի պահպանման դեպքում 2003 թվականի ԵՄ նոր անդամ պետությունների միջին ցուցանիշին հասնելու համար մեխանիկական սարքավորանքի արտադրության ճյուղից կպահանջվի 7.5 տարի, տրիկոտաժի և մանագործական հյուսվածքների արտադրության ճյուղին՝ 4.5 տարի, իսկ սննդամթերքի արտադրության ճյուղին՝ 7 տարի ժամանակ: Միայն սննդի և ծխախոտի ճյուղերում Հայաստանը չի զիջում կամ նույնիսկ առաջ է Բուլղարիայից: Միևնույն ժամանակ Միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշը Հայաստանում ավելի ցածր է, ինչը վկայում է աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսերի հարաբերականորեն փոքր լինելու մասին և ինչ-որ առումով կարող է համարվել մրցակցային առավելություն: Այս առումով կարելի է փաստել, որ Հայաստանի արտադրանքը արտերկրում մրցունակ է հիմնականում էժան աշխատուժի հետևանքով, ինչը չի կարող լինել երկարաժամկետ մրցակցային առավելություն՝ մանավանդ հաշվի առնելով գոյություն ունեցող ինֆլյացիոն ճնշումները և դրամի արժեվորման հետևանքները:Նշված պայմաններում, առանց նոր ներդրումների՝ մասնավորապես արտադրական տեխնոլոգիաներում, արտադրողականության հետագա աճը դառնում է գրեթե անհնար, ուստի ձեռնարկությունները պետք է կառուցեն ներդրումների իրականացմանն ուղղված ռազմավարություն՝ արտաքին շուկաներում մրցունակ մնալու նպատակով:*

Լուրջ խնդիրներ կան նաև մրցունակության այլ գործոնների կտրվածքով: Դրանց շարքում կարևոր է ընդգծել արտահանման աճի կրճատումը, կոռուպցիայի տարածվածությունը և ֆինանսական համակարգի փոքրությունն ու սահմանափակ մասնակցությունը իրական հատվածում, հարկային համակարգի անկատարությունը: Հարցումների արդյունքները ֆինանսական ռեսուրսների մատչելիության, պետական մարմինների և ենթակառուցվածքների խոչընդոտ լինելու վերաբերյալ ըստ էության համընկնում են Համաշխարհային բանկի համանման հարցումների և հաշվարկների տվյալների հետ: Այսպես՝ սույն ուսումնասիրության շրջանակներում անցկացված հարցումների արդյունքներով հարկային ծառայությունը ամենաշատ խոչընդոտ առաջացնող մարմինն է, և Բիզնեսի վարման հեշտությունը բնութագրող Համաշխարհային բանկի տվյալների բազան նույնպես վատ է գնահատում հարկերի վճարման գործընթացը /վարչարարությունը/ Հայաստանում /Հայաստանը 170 երկրների շարքում զբաղեցնում է 148-րդ տեղը/: Չնայած հարցվածները ենթակառուցվածքները որպես այդպիսին չեն գնահատում լուրջ խոչընդոտ բիզնեսի վարման համար, Հայաստանը դեռևս զիջում է դիտարկվող երկրներին ընդհանուր ենթակառուցվածքների բարեփոխման առումով, ինչպես նաև ինտերնետի, բջջային կապի, էլեկտրաէներգիայի սպառման ծավալներով:

Ընդհանուր առմամբ մրցունակության հաշվարկային ցուցանիշի արդյունքները և գլոբալ մրցունակության ինդեքսի տվյալները բավական մոտ են իրար, ինչը վկայում է ընտրված պարամետրերի ռելևանտության մասին: Այսպես՝ ըստ մրցունակության հաշվարկային ցուցանիշի Հայաստանը 26 երկրների շարքում զբաղեցնում է 18-րդ տեղը և գտնվում է այնպիսի երկրների հարևանությամբ, ինչպիսիք են Թուրքիան, Ռուսաստանը, Ուկրաինան և Մոլդովան:

Ազգային մրցունակության բարձրացման հետագա ռազմավարությունն առաջին հերթին պետք է հիմնված լինի առավելագույն խնդիրներ առաջացնող պարամետրերի մանրամասն վերլուծության, դրանց պատճառների վերհանման և հաղթահարման վրա:

II. *Ճյուղային մրցունակության տեսանկյունից գնահատելով ուսումնասիրված ճյուղերի /խոշորացված ճյուղերի/ արտադրողականություններն ու դրանց դինամիկան՝ կարելի է վկայել, որ 8 ճյուղերից և ենթաճյուղերից երկու տարի անընդմեջ արտադրողականության աճ է գրանցվել 5 ճյուղում, իսկ կրճատում միայն մեկ՝ ծխախոտի արտադրության ճյուղերում: Բացարձակ ցուցանիշներով գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության ճյուղերը ընդգծված առավելություն ունեն մնացած ճեռնարկությունների նկատմամբ:*

Ուսումնասիրված ճեռնարկություններում միավոր աշխատուժի ծախսն ամենից բարձրն է ոսկերչական արտադրության ճյուղերում: Համաճայն ներկայացված տվյալների այդ ճյուղում գործող ճեռնարկությունները աշխատել են վնասով կամ գրեթե զրոյական շահույթով: Ընդհանուր առմամբ, 2005-2007թթ. ընթացքում սույն ցուցանիշը դիտարկված խոշորացված 8 ճյուղերից 4-ում նվազել է, 3-ում՝ ավելացել և մեկում մնացել անփոփոխ:

Միջին աշխատավարձի, արտադրողականության և միավոր աշխատուժի աճի տեպերի միջև կապը վերլուծելով պարզ է դառնում, որ տպագրական գործի, մեխանիկական սարքավորանքի, տրիկոտաժի արտադրության և սննդամթերքի արտադրության ճյուղերում արտադրողականությունն ավելի արագ տեմպերով է աճել, քան աշխատավարձի ծախսերը, ինչն իր արտահայտությունն է գտել միավոր աշխատուժի ծախսի նվազող ցուցանիշում: Քիմիական և պլաստամասե իրերի և ոսկերչական արտադրանքի թողարկման ճյուղերում փաստորեն արտադրողականության աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է եղել աշխատավարձի աճով և միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշն այստեղ մնացել է անփոփոխ: Արդյունավետության բարելավման տեսանկյունից ակնհայտ հետևապահ են գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության ճյուղերը, որոնցում աշխատավարձի մակարդակի զգալի աճը զուգորդվել է արտադրողականության կրճատումով:

Շահութաբերության միջին մակարդակն ըստ ուսումնասիրված ճյուղերի 2007թ. կազմել է 10%: Խոշորացված 8 ճյուղերից 3-ում 2007 թվականին նախորդ տարվա նկատմամբ գրանցվել է շահութաբերության մակարդակի աճ: Ընդ որում այն ճյուղերում, որտեղ գրանցվել է միավոր աշխատուժի ծախսի ցուցանիշի աճ 2005-2007թթ., այդ ճյուղերում շահութաբերությունը կրճատվել է կամ մնացել է նույն մակարդակին, և հակառակը /բացառությամբ տպագրական գործի/: Սա տրամաբանական է, քանի որ միավոր աշխատուժի ծախսի կրճատումը պետք է ուղեկցվի շահութաբերության մակարդակի աճով /ավելացված արժեքի կառուցվածքում մեծանում է շահույթի տեսակարար կշիռը և կրճատվում աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսերի կշիռը/:

Խոշոր ձեռնարկությունները շարունակում են մնալ ավելի արտադրողական, քան մնացածները, չնայած գունավոր մետաղները հաշվարկից հանելու դեպքում, տարբերությունն արդեն այդքան կտրուկ չէ:

Միջին հաշվով արտահանող ձեռնարկությունների արտադրողականությունը 30%-ով բարձր է ոչ արտահանողներից /գունավոր մետաղներ արտադրողները դուրս են հաշվարկից/: Գրեթե նույնքան ավելի արտադրողական են հումք ներմուծողները, համեմատած տեղական հումք օգտագործողների հետ:

Առավել մեծ թվով ներքին մրցակիցներ ունեն միկրո ձեռնարկությունները: Ժամանակի ընթացքում /երեք հարցումների/ նվազել է ընդհանրապես մրցակից չունեցող ձեռնարկությունների թիվը, և ավելացել 10 և ավելի մրցակից ունեցողների թիվը: Ընդ որում, որքան ավելի մեծ են ձեռնարկությունների չափերը, այնքան ավելանում է ընդհանրապես մրցակից չունեցողների թիվը: Մինչև 3 մրցակից ունեցող ձեռնարկությունների միջին արտադրողականությունը գրեթե 2 անգամ գերազանցում է 4 և ավելի ներքին մրցակից ունեցողների արտադրողականության մակարդակները: Միևնույն ժամանակ, ձեռնարկությունների չափերի մեծացմանը զուգահեռ կրճատվում է 4 և ավելի մրցակից ունեցող ձեռնարկությունների թիվը: Այսինքն՝ առավել արտադրողական են խոշոր ձեռնարկությունները, որոնք ունեն ավելի փոքր թվով մրցակիցներ:

Ե՛վ արտահանողները, և՛ թե ներմուծողների հետ մրցակցողները, որոնք ըստ էության մրցակցում են արտաքին արտադրողի հետ, բավական մոտ գնահատականներ են տվել համապատասխանաբար արտահանելիս և ներմուծողների հետ մրցակցելիս խոչընդոտների վերաբերյալ: Կարևոր է նշել, որ երեք հարցումների արդյունքներով արտահանողների համար հիմնական խոչընդոտ համարվող արտադրանքի անծանոթ լինելու գործոնը զիջել է իր տեղը արտադրանքի գնին: Նման փոփոխության պատճառ կարող է լինել գնի վերաբերյալ հարցի մանրամասնեցումը հարցաթերթում /մասնավորապես՝ ՀՀ դրամի արժեվորման հիմնախնդրի ներկայացումը/: Ներկայումս և՛ ներմուծողների հետ պայքարողների, և՛ արտահանողների համար առաջնային խոչընդոտը արտադրանքի գինն է: Իսկ որպես ամենաթույլ ազդեցություն ունեցող գործոն նշվում է իրենց կողմից թողարկվող արտադրանքի որակը: Նման գնահատականը կարող է լուրջ խոչընդոտ լինել ձեռնարկությունների հետագա արտաքին գործունեության ծավալման համար, քանի որ, օրինակ, ԵՄ հետ առևտրի հիմնական սահմանափակիչ գործոն հանդիսանում է ապրանքների որակական հատկանիշների նկատմամբ խիստ պահանջները /մասնավորապես՝ սննդի/:

Քիմիական նյութերի /բացառությամբ Նախիտի/, կահույքի և ծխախոտի արտադրության բոլոր ձեռնարկությունները մրցակցում են ներմուծողների հետ: Վերջին հարցման արդյունքներով ներմուծողների հետ ընդհանրապես չմրցակցող ճյուղ չի մնացել: Մեծամասամբ, երբ ձեռնարկությունները նշում են, որ մրցակցում են ներմուծողների հետ, նրանք կարծում են, որ ներմուծողներին է պատկանում շուկայի զգալի մասը:

Ներմուծվող հումքի օգտագործման պատճառները վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ հիմնական պատճառը համամման հումքի բացակայությունն է (62%): Հարցվածների քառորդ մասը ներմուծում է հումք, քանի որ այն ավելի բարձր որակի է, քան տեղականը, և ամենափոքր թիվը՝ 14% հումք ներմուծելու մեջ գնային առավելություններ է տեսնում:

Արտահանող ձեռնարկությունների 60 տոկոսը, անկախ այն հանգամանքից ներմուծում է հումք, թե չի ներմուծում, բացասական է գնահատել դրամի արժեվորումն իր մրցակցային դիրքի վրա: Հետաքրքիր է այն, որ 23 հումք ներմուծող և չարտահանող ձեռնարկությունների միայն 35%-ն է

նշել, որ արժեվորումն ունեցել է դրական ազդեցություն, և նույնքան ձեռնարկություն էլ գտնում է որ արժեվորումը բացասական դեր է խաղացել: Սա կարող է պայմանավորված լինել այն փաստով, որ այդ ձեռնարկությունները մրցակցում են ներմուծողների հետ: Մասնավորապես այս խմբում ընդգրկված կահույքի, քիմ. արտադրության և մեխ. սարքավորանքի արտադրության մի շարք ձեռնարկություններ իսկապես մրցակցում են ներմուծողների հետ:

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ գոյություն ունեն որոշակի տարբերություններ օտարերկրյա և հայրենական կապիտալով գործող ձեռնարկություններում՝ կառավարման մարմինների կազմակերպման տեսանկյունից: Առաջիններում նկատելի է կառավարման մարմինների ղեկավարների անկախության ավելի բարձր աստիճանը: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ օտարերկրյա ձեռնարկություններն իրենց խորհրդի կազմում ունեցել են ավելի շատ անկախ տնօրեններ, չնայած 2007 թվականի տվյալներով այդ տարբերությունը կրճատվել է: Անկախ մարմիններ /անկախ գործադիր տնօրեն և հիմնադիր, անկախ գործադիր տնօրեն և Խորհրդի նախագահ/ ունեցող ձեռնարկություններում արտադրողականության մակարդակը միջին հաշվով գերազանցում է մնացած ձեռնարկությունների համապատասխան ցուցանիշները, չնայած տարբերություններն այնքան էլ մեծ չեն:

Ամփոփելով ուսումնասիրությունը ֆինանսական ռեսուրսների կառավարման մասով անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված ձեռնարկությունների մեծ մասը (մոտ 64%-ը) օգտվում են ֆինանսավորման որոշակի արտաքին աղբյուրներից: Ընդ որում, այդ ձեռնարկությունների գերակշիռ բաժինը (48%) օգտվում են բանկային վարկերից: Մնացած աղբյուրները չնչին դեր են խաղում ձեռնարկությունների գործունեության ֆինանսավորման մեջ: Սակայն կարելի է եզրակացնել, որ այդ վարկերն ուղղվում են հիմնականում շրջանառու կապիտալի համալրմանը, այն է՝ ընթացիկ գործունեության ֆինանսավորմանը, քանի որ, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները հիմնական կապիտալում ներդրումների մոտ 68%-ը ֆինանսավորվում են ներքին ռեսուրսների/ կուտակված շահույթի հաշվին: Ընդ որում, Հայաստանը ֆորմալ փոխառու աղբյուրների օգտագործման աստիճանով ավելի առաջ է ԱՊՀ և Արեվելյան եվրապայի ու Կենտրոնական Ասիայի երկրները միջինում վերցրած: Որպես ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը խոչընդոտող հիմնական գործոն հանդիսանում է ֆինանսական ռեսուրսների գինը:

III. Ճյուղերի մրցունակության ամփոփ գնահատականի դուրս բերման արդյունքում համեմատականորեն ամենաբարենպաստ մրցակցային դիրքում է գտնվում ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության համախմբված ճյուղը: Այս ճյուղը մրցակցային առավել լավ դիրքում է արտադրողականության, արտահանման գործընթացում ընդգրկվածության, ֆինանսական ռեսուրսների կառավարման և մի շարք այլ ցուցանիշների կտրվածքով: Այս ճյուղին հաջորդում է կաթնամթերքի և տպագրական գործի ճյուղերը:

Հավելված 1. Ճյուղային մրցունակության ամփոփ գնահատականի հաշվարկին մասնակցող գործոնները /հարցերը/

	7		11		17		22		23		28		30		32		33		35		37		38	
	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք
Պլաստմասայե արտադրատեսակների արտ.	14.29	7	67.00	3	50.00	4	37.50	1	62.50	4	37.50	3	62.50	3	62.50	2	75.00	4	50.00	2	60.00	5	60.00	5
Խմիչք	50.00	4	100.00	1	66.67	7	90.48	6	80.95	7	47.62	5	75.00	4	71.43	4	80.95	6	80.95	7	86.67	7	66.67	6
Սննդամթերք այլ	75.00	2	57.00	5	60.00	5	73.68	2	50.00	2	50.00	6	89.47	6	70.00	3	70.00	2	75.00	6	53.85	4	38.46	2
Կաթնամթերքի արտադրություն	72.73	3	0.00	7	9.09	1	90.91	7	54.55	3	63.64	7	90.91	7	72.73	5	72.73	3	72.73	5	28.57	1	57.14	4
Տպագրական գործ	88.24	1	60.00	4	35.29	2	82.35	4	64.71	5	41.18	4	42.86	2	76.47	7	82.35	7	64.71	3	50.00	3	60.00	5
Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն	46.15	5	100.00	1	38.46	3	84.62	5	76.92	6	23.08	1	84.62	5	61.54	1	66.67	1	69.23	4	33.33	2	33.33	1
Մեխանիկական սարքավորանքի արտ.	26.67	6	20.00	6	60.00	6	80.00	3	46.67	1	33.33	2	28.57	1	73.33	6	80.00	5	20.00	1	60.00	6	40.00	3

	39-40		43		50		51		52		53		55		56		57		58		Արտադրո–ղականություն		49	
	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք	Ցուց անիշ	Դիրք
Պլաստմասայե արտադրատեսակների արտ.	37.50	6	85.71	7	75.00	7	37.50	3	75.00	5	100.00	5	75.00	5	62.50	3	62.50	1	87.50	4	1410.31	4	50	3
Խմիչք	57.14	7	52.38	2	19.05	1	47.62	7	71.43	4	90.48	3	76.19	6	76.19	6	76.19	3	76.19	1	1754.37	7	30	2
Սննդամթերք այլ	20.00	2	45.00	1	35.00	4	35.00	2	70.00	2	85.00	1	45.00	1	50.00	1	75.00	2	80.00	2	1119.56	3	71	4
Կաթնամթերքի արտադրություն	27.27	5	63.64	6	20.00	2	45.45	4	90.91	6	100.00	5	72.73	4	90.91	7	81.82	4	90.91	5	1522.18	5	0	1
Տպագրական գործ	23.53	3	52.94	3	47.06	6	47.06	6	70.59	3	94.12	4	82.35	7	70.59	5	82.35	5	94.12	7	1544.66	6	0	1
Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն	7.69	1	54.55	4	38.46	5	46.15	5	92.31	7	100.00	7	69.23	3	69.23	4	84.62	6	92.31	6	786.81	1	50	3
Մեխանիկական սարքավորանքի արտ.	26.67	4	57.14	5	33.33	3	26.67	1	53.33	1	86.67	2	66.67	2	60.00	2	100.00	7	86.67	3	808.09	2	86	5

Հավելված 2. Դիֆուզիոն ինդեքս

Դիֆուզիոն ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության նկարագրությունը

Մրցունակության վրա ազդող գործոնների փոփոխության՝ ձեռնարկությունների կողմից սպասումները գնահատելու նպատակով մեր կողմից կառուցվել է Դիֆուզիոն ինդեքսը, որը չափում է տնտեսական տարբեր երևույթների բարելավումը / վատթարացումը:

Ինդեքսի կառուցման նպատակով մշակվել է առանձին հարցաթերթ, որը պարունակում է ստանդարտացված պատասխաններ ձեռնարկությունների գործունեության հետևյալ ցուցանիշների փոփոխության սպասումների վերաբերյալ (մոտակա երեք ամիսների ընթացքում նախորդ երեք ամիսների նկատմամբ)՝

1. Իրացման ծավալ,
2. Շահութաբերության մակարդակ,
3. Որակավորված աշխատողների աշխատավարձ,
4. Չորակավորված (ոչ մասնագիտացված) աշխատողների աշխատավարձ,
5. Աշխատողների որակավորման բարձրացմանն ուղղված ծախսեր,
6. Տեխնոլոգիաների նորացման վրա կատարվող ծախսեր,
7. Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի գին,
8. Արտադրության համար անհրաժեշտ հիմնական հումքի որակ,
9. Ձեռնարկության կողմից ներգրավվող ֆինանսական ռեսուրսների գին,
10. Արտադրանքի նկատմամբ տեղական պահանջարկ,
11. Արտադրանքի տեսականի,
12. Արտադրանքի իրացման շուկաների աշխարհագրություն,
13. Թողարկվող արտադրանքի շուկայում մրցակցության մակարդակ,
14. Թողարկվող արտադրանքի ներկայիս որակ,
15. Մարքեթինգային ծախսեր:

Վերոնշյալ հարցերին ձեռնարկություններն իրենց սպասումների վերաբերյալ կարող էին տալ երեք տիպի պատասխաններ՝

- Սպասվում է աճ,
- Սպասվում է նվազում,
- Փոփոխություն չի սպասվում:

Ինդեքսը ցույց է տալիս, թե որքանով են փոփոխությունների նկատմամբ ձեռնարկությունների սպասումները «ցրված» ընտրանքում:

Դիֆուզիոն ինդեքսի հաշվարկն իրականացվել է հետևյալ հաջորդական քայլերով:

Նախապես բազայից առանձնացվել են Ինդեքսի հաշվարկին մասնակցող հարցերը[55]: Բոլոր ձեռնարկությունները առանձնացվել են ըստ իրենց ճյուղային պատկանելիության[56]: Հաշվարկվել է, թե կոնկրետ ճյուղի բոլոր ձեռնարկություններից համապատասխանաբար քանիսն է յուրաքանչյուր կոնկրետ հարցի գծով՝ (1) սպասում աճ, (2) սպասում նվազում և (3) փոփոխություն չի սպասում:

[55] Ինդեքսների հաշվարկում չեն ներառվել գումավոր մետաղների արտադրության և ոսկերչական արտադրության ենթաճյուղերը, քանի որ վերջիններիս առկայության պայմաններում որոշ ենթաճյուղեր ձեռք են բերում զրոյական տեսակարար կշիռ և այդ պարագայում չի կարելի ենթադրել, որ երկու-երեք ձեռնարկություն որոշեն ամբողջ տնտեսության սպասումները:

[56] Սննդի արդյունաբերության ճյուղում միավորված են խմիչքի արտադրություն, կաթնամթերքի արտադրություն, հանքային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն, թարմ հրուշակեղենի արտադրություն, մսի և մսամթերքի արտադրություն, մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, ինչպես նաև սուրճի արտադրություն ենթաճյուղերը:

Ինդեքսի հաշվարկման համար կիրառվող հարցերը բաժանվել են երկու խմբի: Առաջին խմբում ներառվել են այն հարցերը, որոնց գծով աճը հանգեցնում է ձեռնարկությունների մրցունակության մակարդակի բարձրացմանը (հարցաթերթի հետևյալ հարցերը՝ 1; 2; 5; 6; 8; 10; 11; 12 և 14), իսկ երկրորդ խմբում ներառված հարցերի գծով աճը, ընդհակառակը, վերջիններիս մրցունակության մակարդակի անկմանը (հարցաթերթի հետևյալ հարցերը՝ 3; 4; 7; 9; 13 և 15):

Ինդեքսն առաջին խմբի համար հաշվարկվել է հետևյալ կերպ՝ աճ ակնկալող ձեռնարկությունների քանակին ավելացվել է փոփոխություն չսպասող ձեռնակրությունների քանակի կեսը, այնուհետև այդ հանրագումարը հարաբերվել հարցին պատասխանած ձեռնարկությունների քանակին:

Դիֆուզիոն Ինդեքս = (Աճ սպասող ձեռնարկությունների քանակ + Փոփոխություն չսպասող ձեռնարկությունների քանակ/2) / Հարցին պատասխանած ձեռնարկությունների քանակ

Հարցերի երկրորդ խմբի համար Ինդեքսը հաշվարկվել է հետևյալ կերպ՝


Դիֆուզիոն Ինդեքս = (Նվազում սպասող ձեռնարկությունների քանակ + Փոփոխություն չսպասող ձեռնարկությունների քանակ/2) / Հարցին պատասխանած ձեռնարկությունների քանակ

«Փոփոխություն չի սպասվում» պատասխանների կեսը վերցվում է փոփոխություն չակնկալողների՝ աճի և նվազման նկատմամբ հակումների հավասարության սկզբունքից ելնելով:


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն հետազոտության իրականացման ընթացքում որոշ ձեռնարկություններ հետագա հարցումներին մասնակցություն ցուցաբերելու պատրաստակամություն չեն ցուցաբերել, որոշ ճյուղեր ինդեքսի հաշվարկից հանվել են:

Դիֆուզիոն ինդեքսի դինամիկան ամբողջ տնտեսության համար բոլոր չորս հարցումների արդյունքների հիման վրա ունի հետևյալ պատկերը[57]: (տե՛ս Գծանկարներ Հ2-5 – Հ2-19):

Գծանկար Հ2-5. Իրացման ծավալների *Diffusion Index*




Գծանկար Հ2-6. Շահութաբերության մակարդակի Diffusion Index




[57] Ինդեքսը հաշվարկվել է սնունդ, տրիկոտաժ և մանվածքներ, պլաստմասսե և քիմիական արտադրություն, կահույքի արտադրություն, մեխանիկական սարքավորումների արտադրություն, տպագրական գործ ճյուղերի համապատասխան ինդեքսների միջին ցուցանիշներին համապատասխան:


Գծանկար Հ2-7. Որակավորված աշխատողների աշխատավարձի Diffusion Index




Գծանկար Հ2-8. Չորակավորված աշխատողների աշխատավարձի Diffusion Index




Գծանկար Հ2-9. Որակավորման բարձրացման ծախսերի Diffusion Index




Գծանկար Հ2-10. Տեխնոլոգիաների նորացման ծախսերի Diffusion Index




Գծանկար Հ2-11. Հումքի գնի Diffusion Index




Գծանկար Հ2-12. Հումքի որակի Diffusion Index



Գծանկար Հ2-13. Ֆինանսական ռեսուրսների գնի Diffusion Index




Գծանկար Հ2-14. Տեղական պահանջարկի Diffusion Index




Գծանկար Հ2-15. Արտադրանքի տեսականու փոփոխության Diffusion Index


Գծանկար Հ2-16. Իրացման շուկաների աշխարհագրության Diffusion Index




Գծանկար Հ2-17. Մրցակցության մակարդակի Diffusion Index




Գծանկար Հ2-18. Արտադրանքի որակի Diffusion Index





Գծանկար Հ2-19. Մարքեթինգային ծախսերի Diffusion Index



Ինչպես նախորդ, այնպես էլ այս փուլում հաշվարկվել են Ինդեքսի հաշվարկին մասնակցող ճյուղերի իրացումից հասույթների տեսակարար կշիռները[58] (տե՛ս Աղյուսակ Հ2-20), որից հետո արդեն հաշվարկված Ինդեքսները ամեն մի հարցի գծով կշռվել են համապատասխան տեսակարար կշիռն արտահայտող գործակցով: Առաջին երկու Ինդեքսների կշռման համար կիրառվել են առաջին հարցման արդյունքում ստացված՝ ձեռնարկությունների հասույթներին վերաբերող տվյալները, քանի որ երկրորդ հարցումը բացառապես վերաբերել է Ինդեքսի հաշվարկման համար նախատեսված հարցերին:

Երրորդ Ինդեքսը կշռվել է երրորդ փուլում անցկացված հարցման արդյունքում ստացված տվյալների հիման վրա: Այն է՝ երրորդ փուլում ստացված հասույթների հիման վրա:

Չորրորդ ինդեքսի կշռման համար հիմք են հանդիսացել սույն փուլում 2007թ. համար գնահատված հասույթի մեծությունները: Տե՛ս աղյուսակ Հ2-20:

[58] Ներառված են հարցումների ընթացքում ձեռնարկությունների կողմից նշված հասույթների մեծությունները:

Աղյուսակ Հ2-20. Ուսումնասիրվող ճյուղերի հասույթների տեսակարար կշիռները 2006-2007թթ.*

Ճյուղի անվանումը	Իրացումից հասույթ, 2006թ.		Իրացումից հասույթ, մարտ-մայիս 2007թ.		Իրացումից հասույթ, հոկտ.-դեկտ. 2007թ.	
	հազ.դր.	Ճյուղի տես. կշիռը,	հազ.դր.	Ճյուղի տես. կշիռը,	հազ.դր.	Ճյուղի տես. կշիռը,
Սննդի արտադրություն	19,742,594	73.74%	13,612,364	67.86%	32,140,876	76.22%
Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն	1,670,055	6.24%	2,904,862	14.48%	3,161,135	7.50%
Պլաստմասայե արտադրատեսակների և հիմնական քիմիական նյութերի արտադրություն	1,510,256	5.64%	295,116	1.47%	1,627,159	3.86%
Կահույքի արտադրություն	39,000	0.15%	121,630	0.61%	127,308	0.30%
Մեխանիկական սարքավորանքի արտադրություն	2,215,819	8.28%	2,258,814	11.26%	3,461,276	8.21%
Տպագրական գործ	1,596,535	5.96%	867,367	4.32%	1,651,206	3.92%
Ընդամենը	**26,774,259**	**100%**	**20,060,153**	**100%**	**42,168,960**	**100%**

* Պլաստմասայե արտադրատեսակների և հիմնական քիմիական նյութերի արտադրության ճյուղում ներառված չի Նաիրիտ ընկերության հասույթի մեծությունը:

Անդրադառնալով Դիֆուզիոն ինդեքսի կշռման հարցին պետք է նշել, որ ի տարբերություն նախորդ փուլերի վերլուծությունների, վերջինիս հաշվարկին մասնակցող ճյուղերի շարքից հանվել է ծխախոտի արտադրություն ճյուղը՝ բավարար պատասխանների բացակայության պատճառով: Այսպիսով վերահաշվարկվել են նախորդ երեք հարցումների հիման վրա հաշվարկին մասնակցող ճյուղերի հասույթների տեսակարար կշիռները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երրորդ հարցման արդյունքները վերաբերում են ոչ լրիվ տարվա ֆինանսական և այլ ցուցանիշներին, ապա հարկ ենք համարել Դիֆուզիոն ինդեքսի կշռման համար որպես հիմք ընդունել նախորդ հարցման ցուցանիշները, մասնավորապես՝ իրացումից հասույթի տվյալները:

Չկշռված Դիֆուզիոն ինդեքսների աճի տեմպի դինամիկան ըստ ենթաճյուղերի բերված է աղյուսակ Հ2-21-ում:

Աղյուսակ Հ2-21. Չկշռված Ինդեքսների աճի տեմպերը չորս ժամանակահատվածների համար, %-ով*

Ցուցանիշը	Փոփոխման ժամանակա-հատվածը	Սննդի	Տրիկոտաժ և մանվածք	Պլաստմասան և քիմիա	Կահույքի արտադրություն	Մեխանիկական սարքավորանքի արտ.	Տպագրական գործ
Իրացման ծավալ	S2-to-S1	3.36	-3.98	-71.88	0.00	-41.67	-29.73
	S3-to-S2	9.03	18.46	225.00	14.29	42.86	50.43
	S4-to-S3	-10.55	-12.09	-38.46	-5.77	-20.00	-10.66
Շահութաբերության մակարդակ	S2-to-S1	2.19	-30.48	-51.79	0.00	-32.26	-33.33
	S3-to-S2	10.50	24.67	116.67	24.68	-16.67	74.71
	S4-to-S3	-10.71	8.60	-47.25	-12.50	21.90	-3.70
Որակավորված աշխատողների աշխատավարձի փոփոխություն	S2-to-S1	29.86	18.18	68.75	-28.57	0.00	11.11
	S3-to-S2	-17.07	-4.67	0.00	-54.29	25.00	-32.78
	S4-to-S3	3.36	15.38	14.29	75.00	-3.03	15.51

Չորակավորված աշխատողների աշխատավարձի փոփոխություն	S2-to-S1	19.22	-10.74	28.57	-14.29	25.00	-10.00
	S3-to-S2	-4.12	22.22	-25.00	-4.76	24.44	15.43
	S4-to-S3	4.29	-7.69	33.33	5.00	-7.14	5.88
Որակավորման բարձրացման ծախսեր	S2-to-S1	6.12	10.30	-25.00	0.00	-8.33	-9.68
	S3-to-S2	-3.41	-5.71	25.00	26.98	-9.09	0.40
	S4-to-S3	-5.88	-3.85	-8.57	-30.00	26.67	5.88
Տեխնոլոգիաների նորացման ծախսեր	S2-to-S1	6.28	-2.67	-19.64	20.00	-12.12	-31.71
	S3-to-S2	3.66	20.48	40.00	4.76	-12.64	36.47
	S4-to-S3	-4.77	-24.75	-10.20	-4.55	10.53	-8.56
Հումքի գնի փոփոխություն	S2-to-S1	2.63	-5.45	68.75	14.29	-20.00	-5.88
	S3-to-S2	70.73	-21.43	-33.33	-28.57	9.37	-20.39
	S4-to-S3	-35.69	7.69	-42.86	-30.00	-23.81	-39.04
Հումքի որակի փոփոխություն	S2-to-S1	-2.60	18.18	-18.18	37.50	4.76	12.00
	S3-to-S2	-7.20	4.76	0.00	14.29	2.27	3.38
	S4-to-S3	-5.92	-13.46	14.29	-20.45	-5.19	-19.53
Ֆինանսական ռեսուրսների գնի փոփոխություն	S2-to-S1	-11.76	-36.97	-25.00	-33.33	-15.00	-27.27
	S3-to-S2	-0.83	10.00	16.67	-4.76	17.65	29.86
	S4-to-S3	9.80	34.62	-2.04	5.00	-6.67	-12.80
Տեղական պահանջարկ	S2-to-S1	-1.96	-6.70	-25.00	-7.69	3.23	-6.25
	S3-to-S2	-14.06	2.67	62.50	-4.76	-25.78	10.00
	S4-to-S3	8.60	-23.08	-56.04	5.00	6.67	0.00
Արտադրանքի տեսականի	S2-to-S1	-11.04	11.62	-10.00	0.00	-9.38	-2.86
	S3-to-S2	17.94	7.84	8.33	23.08	7.76	8.98
	S4-to-S3	-12.07	-12.31	-3.30	-25.00	-6.13	-5.70
Իրացման շուկաների աշխարհագրություն	S2-to-S1	-3.13	-9.63	-13.46	11.11	11.11	-7.14
	S3-to-S2	-8.61	12.82	20.00	-8.57	-16.67	11.34
	S4-to-S3	-1.74	-13.46	-14.29	-12.50	1.33	-6.12
Մրցակցության մակարդակ	S2-to-S1	-6.86	6.36	-43.75	150.00	-6.25	20.00
	S3-to-S2	-17.07	-26.67	50.00	14.29	-8.33	-29.24
	S4-to-S3	27.71	28.21	-4.76	5.00	6.67	29.55
Արտադրանքի ներկայիս որակ	S2-to-S1	9.67	11.62	-29.69	7.14	9.68	9.68
	S3-to-S2	-5.01	-5.10	0.00	-16.19	-15.44	-1.24
	S4-to-S3	-10.68	-5.59	14.29	-4.55	11.30	-7.51
Մարքեթինգային ծախսեր	S2-to-S1	5.88	35.06	-62.50	-50.00	-26.67	23.08
	S3-to-S2	-3.25	-45.00	150.00	-61.90	16.88	-5.47
	S4-to-S3	33.99	92.31	-8.57	425.00	14.07	-5.88

Ծանոթագրություն՝ Սքեցված վանդակները ցույց են տալիս բացասական աճի տեմպերը:

* **S1 -** Առաջին հարցման արդյունքում հաշվարկված ինդեքս

S2 - Երկրորդ հարցման արդյունքում հաշվարկված ինդեքս

S3 - Երրորդ հարցման արդյունքում հաշվարկված ինդեքս

S4 - Չորրորդ հարցման արդյունքում հաշվարկված ինդեքս

Ինչ վերաբերում է կշռված ինդեքսներին, ապա վերջինիս աճի տեմպերը ներկայացված են Աղյուսակ Հ2-22:

Աղյուսակ Հ2-22. Կշռված Ինդեքսների աճի տեմպերը չորս ժամանակահատվածների համար, %-ով*

Ցուցանիշը	Փոփոխման ժամանակահատվածը	Սեռուն	Տրիկոտաժ և մանվածք	Պլաստմասե և քիմիա	Կահույքի արտադրություն	Մեխանիկական սարքավորումների արտադրություն	Տպագրական գործ	Կշռված ինդեքս
Իրացման ծավալ	SW2-to-SW1	3	-4	-72	0	-42	-30	-8
	SW3-to-SW2	0	175	-15	376	94	9	16
	SW4-to-SW3	0	-54	61	-62	-42	-19	-11
Շահութաբերության մակարդակ	SW2-to-SW1	2	-30	-52	0	-32	-33	-8
	SW3-to-SW2	2	189	-43	419	13	27	11
	SW4-to-SW3	0	-44	38	-65	-11	-13	-6
Որակավորված աշխատողների աշխատավարձի փոփոխություն	SW2-to-SW1	30	18	69	-29	0	11	27
	SW3-to-SW2	-24	121	-74	90	70	-51	-13
	SW4-to-SW3	16	-40	200	-29	-29	5	3
Չորակավորված աշխատողների աշխատավարձի փոփոխություն	SW2-to-SW1	19	-11	29	-14	25	-10	16
	SW3-to-SW2	-12	184	-80	296	69	-16	1
	SW4-to-SW3	17	-52	250	-58	-32	-4	2
Որակավորման բարձրացման ծախսեր	SW2-to-SW1	6	10	-25	0	-8	-10	2
	SW3-to-SW2	-11	119	-67	429	24	-27	-3
	SW4-to-SW3	6	-50	140	-72	-8	-4	-2
Տեխնոլոգիաների նորացման ծախսեր	SW2-to-SW1	6	-3	-20	20	-12	-32	0
	SW3-to-SW2	-5	180	-63	336	19	-1	5
	SW4-to-SW3	7	-61	136	-61	-19	-17	-5
Հումքի գնի փոփոխություն	SW2-to-SW1	3	-5	69	14	-20	-6	3
	SW3-to-SW2	57	82	-83	197	49	-42	40
	SW4-to-SW3	-28	-44	50	-72	-44	-45	-31
Հումքի որակի փոփոխություն	SW2-to-SW1	-3	18	-18	38	5	12	-1
	SW3-to-SW2	-15	143	-74	376	39	-25	-3
	SW4-to-SW3	6	-55	200	-68	-31	-27	-8
Ֆինանսական ռեսուրսների գնի փոփոխություն	SW2-to-SW1	-12	-37	-25	-33	-15	-27	-16
	SW3-to-SW2	-9	155	-70	296	60	-6	3
	SW4-to-SW3	23	-30	157	-58	-32	-21	9
Տեղական պահանջարկ	SW2-to-SW1	-2	-7	-25	-8	3	-6	-3
	SW3-to-SW2	-21	138	-58	296	1	-20	-11
	SW4-to-SW3	22	-60	15	-58	-22	-9	4
Արտադրանքի տեսականի	SW2-to-SW1	-11	12	-10	0	-9	-3	-9
	SW3-to-SW2	9	150	-72	412	47	-21	16
	SW4-to-SW3	-1	-55	154	-70	-32	-15	-11
Իրացման շուկաների աշխարհագրություն	SW2-to-SW1	-3	-10	-13	11	11	-7	-3
	SW3-to-SW2	-16	162	-69	281	13	-19	-6
	SW4-to-SW3	10	-55	125	-65	-26	-15	-3
Մրցակցության մակարդակ	SW2-to-SW1	-7	6	-44	150	-6	20	-7
	SW3-to-SW2	-24	70	-61	376	25	-49	-14
	SW4-to-SW3	43	-34	150	-58	-22	17	21
Արտադրանքի ներկայիս որակ	SW2-to-SW1	10	12	-30	7	10	10	7
	SW3-to-SW2	-13	120	-74	249	15	-28	-5
	SW4-to-SW3	0	-51	200	-61	-19	-16	-8
Մարքեթինգային ծախսեր	SW2-to-SW1	6	35	-63	-50	-27	23	0

	SW3-to-SW2	-11	28	-35	59	59	-31	-4
	SW4-to-SW3	50	0	140	112	-17	-15	33

Ծանոթագրություն՝ Մքեցված վանդակները ցույց են տալիս բացասական աճի տեմպերը:

* **SW1 -** Առաջին հարցման արդյունքում հաշվարկված կշռված ինդեքս

SW2 - Երկրորդ հարցման արդյունքում հաշվարկված կշռված ինդեքս


SW3 - Երրորդ հարցման արդյունքում հաշվարկված կշռված ինդեքս

SW4 - Չորրորդ հարցման արդյունքում հաշվարկված կշռված ինդեքս


Ծանոթագրություն:
Պլաստմասսե և քիմիական արտադրության ճյուղում ներառված չի Նաիրիտ ընկերության պատասխանները:

Բոլոր հարցումների արդյունքներով կազմված կշռված ինդեքսներն ըստ նշված ցուցանիշների ներկայացված են ստորև բերված գծանկարներում.


Գծանկար Հ2-26. Իրացման ծավալների կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-27. Շահութաբերության մակարդակի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-28. Որակավորված աշխատողների աշխատավարձի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-29. Չորակավորված աշխատողների աշխատավարձի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-30. Որակավորման բարձրացման ծախսերի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-31. Տեխնոլոգիաների նորացման ծախսերի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-32. Հումքի գնի փոփոխության կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-33. Հումքի որակի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-34. Ֆինանսական ռեսուրսների գնի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-35. Տեղական պահանջարկի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-36. Արտադրանքի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-37. Իրացման շուկաների աշխարհագրության կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-38. Մրցակցության մակարդակի կշռված *Diffusion Index*



Գծանկար Հ2-39. Արտադրանքի որակի կշռված *Diffusion Index*




Գծանկար Հ2-40. Մարքեթինգային ծախսերի կշռված *Diffusion Index*




Ստորև բերված գծանկարներում արտացոլված են բոլոր հարցումների արդյունքներով կազմված Դիֆուզիոն ինդեքսներն ըստ նշված ցուցանիշների (տե՛ս գծանկարներ Հ2-41 –Հ2-55):


Գծանկար Հ2-41. Իրացման ծավալների *Diffusion Index ըստ ճյուղերի*




Գծանկար Հ2-42. Շահութաբերության մակարդակի *Diffusion Index ըստ ճյուղերի*




Գծանկար Հ2-43. Որակավորված աշխատողների աշխատավարձի *Diffusion Index* ըստ ճյուղերի




Գծանկար Հ2-44. Չորակավորված աշխատողների աշխատավարձի *Diffusion Index* ըստ ճյուղերի




Գծանկար Հ2-45. Որակավորման բարձրացման ծախսերի *Diffusion Index* ըստ ճյուղերի




Գծանկար Հ2-46. Տեխնոլոգիաների ներացման ծախսերի *Diffusion Index* ըստ ճյուղերի




Գծանկար Հ2-47. Հումքի գնի *Diffusion Index* ըստ ճյուղերի




Գծանկար Հ2-48. Հումքի որակի *Diffusion Index* ըստ ճյուղերի




Գծանկար Հ2-49. Ֆինանսական ռեսուրսների գնի *Diffusion Index ըստ ճյուղերի*




Գծանկար Հ2-50. Տեղական պահանջարկի *Diffusion Index ըստ ճյուղերի*




Գծանկար Հ2-51. Արտադրանքի *Diffusion Index ըստ ճյուղերի*




Գծանկար Հ2-52. Իրացման շուկաների աշխարհագրության *Diffusion Index ըստ ճյուղերի*




Գծանկար Հ2-53. Մրցակցության մակարդակի *Diffusion Index* ըստ ճյուղերի



Գծանկար Հ2-54. Արտադրանքի որակի *Diffusion Index* ըստ ճյուղերի



Գծանկար Հ2-55. Մարքեթինգային ծախսերի *Diffusion Index* ըստ ճյուղերի



Հավելված 3. 2006 թվականի հուլիս-օգոստոս, 2007 թվականի փետրվար-մարտ և 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների իրականացրած հարցումների կազմի փոփոխությունները

	Ճյուղ	*2007 թվականի առաջին հարցմանը ավելացված ձեռնարկությունները*	*2007 թվականի առաջին հարցմանը դուրս մնացած ձեռնարկությունները*	*2007 թվականի երկրորդ հարցմանը ավելացված ձեռնարկությունները*	*2007 թվականի երկրորդ հարցմանը դուրս մնացած ձեռնարկությունները*
	2006	*փոփոխությունը 2006-ի նկատմամբ*	*փոփոխությունը 2006-ի նկատմամբ*	*փոփոխությունը 2007 I-ի նկատմամբ*	*փոփոխությունը 2007 I-ի նկատմամբ*
1	Խմիչքի արտադրություն	Վեդի Ալկո, Գրեյթ Վելլի, Երևանի շամպայն գինիների գործարան	-	Փոփոխություն տեղի չի ունեցել	
2	Մեխանիկական արքավորումների արտադրություն	"Ուղղող-կորացնող սարքավորումների գործարան ԲԲԸ"	Օպտիպակ, Իջևանի մեխանիկական գործարան ԲԲԸ, Մետաղագործ ՓԲԸ, Կոնցեռն Էներգիա ՓԲԸ, Ար և Ար ինջիներինգ ՍՊԸ, Միկորշարժիչ ԲԲԸ	Քարհատ մեքենա	«Հարվալ Մաշիների» հաստոցաշինական գործարան ՍՊԸ, «Վան-դեբ» ԲԲԸ
3	Տրիկոտաժի և մանագործական հյուսվածքների արտադրություն	“Այգաբացի գուլպայի ֆաբրիկա” ՍՊԸ “Սարտոն” ՍՊԸ “Արշալույս” ԲԲԸ “Գևորգ և Վահագն” ՍՊԸ “Եղիկյանների ընտանիք” ՍՊԸ	Գրեր ՍՊԸ, Գարուն ԲԲԸ, Ագնեսա տրիկոտաժի արտադրական ձեռնարկություն		«Լիդա» տրիկատաժի ձեռնարկություն, «Եղիկյանների ընտանիք» ՍՊԸ
4	Պլաստմասե արտադրատեսակների արտադրություն	ՕՊՏԻՊԱԿ ՍՊԸ	Պոլիսերվ ՍՊԸ Մեդիսար ՍՊԸ	Փոփոխություն տեղի չի ունեցել	
5	Մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում	"Սանֆրուտ ՍՊԸ", Էջմիածնի պահածոների գործարան, Մաքսիդեա ՍՊԸ, Արեգա ՍՊԸ, Նյու Վեյվ ՍՊԸ	Վարագավանի պահածոների գործարանի	Փոփոխություն տեղի չի ունեցել	
6	Ծխախոտի արտադրություն		Սիգարոն ՍՊԸ	Փոփոխություն տեղի չի ունեցել	
7	Գունավոր մետաղների արտադրություն	Փոփոխություն տեղի չի ունեցել			
8	Կահույքի արտադրություն	"Նորյակ ԱԿ" և "Ա. Վարոսյան և ընկերներ ՍՊԸ"-ն:	Մարարա ՍՊԸ, Երևանկահույք, Մելիքսեթյան ՍՊԸ		«Ա. Վարոսյան և ընկերներ» ՍՊԸ
9	Հրուշակեղենի արտադրություն	Քարեշեն ԱԿ Ալեն և Աննա ՍՊԸ		Փոփոխություն տեղի չի ունեցել	

10	Կաթնամթերքի արտադրություն	“Ամասիայի գլխավոր պանրագործարան” “Իգիթ” “Կաթնագործ” “Կյորու”	Նեյման և Որդի պրոբ. արտ. փեռ. Թամարա ՍՊԸ	Փոփոխություն տեղի չի ունեցել	
11	Հիմնական քիմիական նյութերի արտադրություն	Նաիրիտ ՓԲԸ		Փոփոխություն տեղի չի ունեցել	
12	Մսի և մսամթերքի արտադրություն	"Նեպտուն-Մար",Մուշ ՍՊԸ Վալլետտա ՍՊԸ	Լուսակերտի ՏԹՖ ՍՊԸ, Երևանի թռչնաբուծարան		«Սևանի ձուկկոմբինատ» ԲԲԸ
13	Հանքային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն	"Բառովիչ ՍՊԸ", "Հրատից ՍՊԸ"-ն	Բջնի հանքային ջրերի գործարան ՓԲԸ Արսեն և Ռոբերտ ՍՊԸ		«Նարեկ» ՍՊԸ
14	Ոսկերչական արտադրություն		"Անդրանիկ ՍՊԸ"	Փոփոխություն տեղի չի ունեցել	
15	Սուրճի արտադրություն	Ֆեռռո ՍՊԸ Վալլետա ՍՊԸ	Փարզյան Սուրճ ՍՊԸ	Փոփոխություն տեղի չի ունեցել	
16	Տպագրական գործ	"Մեղիասար ՍՊԸ"-ն և "Գյումրի տպարան ԲԲԸ"	Ոսկան Երևանցի , տպագրատուն ԲԲԸ, Շիրակա Դուռ ՍՊԸ , Յունիպրինտ տպարան ՍՊԸ, Ալլիզեթ Պրինտ դեպո ՍՊԸ, Գասպրինտ, հրատարակչություն ՍՊԸ, Նոյան Տապան		«Ասողիկ տպարան» ՍՊԸ

Բացառությամբ ստորև նշված ձեռնարկություններից, մնացածը հրաժարվել են մասնացկել հարցմանը պատճառաբանելով, որ հարցումը երկար ժամանակ է պահանջում և ընտրված ժամանակահատվածը հաջող չէ:

2007 թվականի առաջին հարցում. Գրեր ՍՊԸ և Միկրոշարժիչ ԲԲԸ չեն մասնակցել քանի որ այլև չեն գործում: Երկու թռչնաֆաբրիկաները դուրս են մնացել ընտրանքից համաձայն նախորոք կայացրած որոշմանը: Բջնի ՍՊԸ-ն համաձայն էլ մասնակցել հարցմանը միայն մայիս ամսվա կեսից հետո:

2007 թվականի երկրորդ հարցում. Ներկայումս չեն գործում կամ միավորվել են մեր բազայում ընդգրկված այլ ձեռնարկության հետ հետևյալ կազմակերպությունները՝

- «Եղիկյանների ընտանիք» ՍՊԸ
- «Ա. Վարոսյան և ընկերներ» ՍՊԸ
- «Վան-դեբ» ԲԲԸ
- «Նարեկ» ՍՊԸ

Հավելված 4. Արտահանման գործընթացում ներգրավված ձեռնարկությունների արտահանման տեսակարար կշիռներն ըստ երկրների

		Ռուսաստան	Վրաստան	Ուկրաինա	Ղազախստան	Բելառուս	ԱՊՀ երկրներ	ԵՄ երկրներ	ԱՄՆ	ՄԱԷ	Իրան	Այլ երկրներ	արտահանող ձեռնարկությունների թիվը
1	Գուանավոր մետաղների արտադրություն							95.33	1.00	3.67			3
2	Թարմ հրուշակեղենի արտադրություն	19.75	1.75	4.75		0.25		3.00	13.75		0.25	2.50	1
3	Պլաստմասայե արտադրատեսակների արտ.	10.00	10.00						4.00				4
4	Ոսկերչական արտադրություն	26.67		1.67	5.00			25.00				8.33	3
5	Հանքային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն	15.00					5.00	75.00				5.00	4
6	Հիմնական քիմիական նյութերի արտադրություն												1
7	Սուրճի արտադրություն	10.00	15.00	0.75									4
8	Խմիչքի արտադրություն	14.20	0.20	0.50		0.70	0.10	3.40	4.30				9
9	Կաթնամթերքի արտադրություն									1.00			1
10	Տպագրական գործ												3
11	Ծխախոտի արտադրություն	0.33	0.05					0.58	1.17				2
12	Տրիկոտաժի և մանածագործական հյուսվածքների արտադրություն	12.50					2.50	1.05	5.00				6
13	Մեխանիկական սարքավորանքի արտադրություն	13.00	4.00					22.00	0.60			30.00	10
14	Մսի և մսամթերքի արտադրություն	41.11	1.44	2.22	11.22	0.89		8.89	1.11		2.22	7.33	3
15	Մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում	0.33	1.67										5